



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

UNIVERSITY LIBRARY BUDAPEST

Q-22

396  
Q-22

381

ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ

обозначенного здесь срока.

0120-1

0120-10

396

44-22

300

Կ

1126-42

Ն. Ա. Շ Ձ Բ Ե Լ Ո Վ

№ 9065

# ԿԱՆԱՆՑ ՀԱՐՑԸ

## ԵԱՊՕՆԻԱՅՈՒՄ

(Պատկերազարդ)

1003  
11410

Թարգմ. ՆՈՒՆԵ ԹԱՅԻՐԵԱՆ



Թիվ 19

Էլեկտրական «ՀԵՐՄԻՆ» ընկեր.,  
Մադարեան փողոց 15.

1905

100

31.01.2013

Ն Ա Ւ Ե Ր

ՎԱՂԱԹԱՆԱՏ ՔՈՂՋ

ԵՂԻՍԱԲԵՐ

ՄԵԼԻՔ-ԲԱԲԱԶԱՆԵԱՆՑԻ

Յիշատութիւն.

Дозволено цензурою. Тифлисъ, 28 Мая 1905 г.

## ԿԱՆԱՆՑ ՀԱՐՅԸ ԵԱՊՈՆԻԱՅՈՒԹՈՒՄ

Կնօջ ստոր դասումը հասարակութեան մէջ մի հիւանդութիւն է տէրութեան համար, որով նա վարակուել է Զինաստանից և որից բժշկուելու համար պէտք է դիմել հիմնական միջոցներին:

(Գրաֆ Օկումի ճառը, որը արտասանել է Տօկիօի կանանց համարանի բացման առիթով  
1901 թ.):

Կանանց զրութիւնը մինչև մէկջի \*) դարեշրջանը:—Եազօնացի կալբարի «Մեծ ուսմունք կանանց համար» օրէնսդիրը:—Կանանց դաստիարակութիւնը և զարգացումը:—Ամուսնութիւնը և ապահարզան:—Եազօնուհիների բարոյականութիւնը և տուրիստների ունեցած անհիմն կարծիքը նրա մասին:—Եազօնուհիների ունեցած գաղափարը իւրեանց մարմի մերկութեան մասին:—Կանանց ստրկութեան ազդեցութիւնը անբարոյականութեան զարգացման վրայ:—Ժօրօյիաներ:—Տօկիօի հօշիվրաները և իմ տպաւրութիւնները այդ հիմնարկութիւնները դիմելու ժամանակ:—Եազօնացիների պոռնկութեան դէմ ունեցած ներողամտութեան պատճառները:—Եազօնացի հետեր — գէշաները:—Կանանց մի այսպիսի դասակարգի անխոռսափելիութիւնը, իբրև հետևանք նը-

\*) Մէկջի բառը նշանակում է—լուսաւորութիւն: Եազօնիայում լուսաւորութեան թուականը հաշվում է 1868 թուից սկսած, յեղափոխութեան, այսինքն ֆէօդալական կազմակերպութեան տապալումից յետոյ:

ըանց ստրկական վիճակի:—Դէշաների ներկայ դերի վերացումը կանանց դրութեան բարենորոգումից յետոյ:

«Եապօնուհիները վերին աստիճանի կանացի են—բարի, սիրալիր, վայելուչ, հաւատարիմ և գեղեցիկ: Բայց դրա հակառակ տղամարդկանց վարվեցողութիւնը, մինչև վերջին ժամանակները, այնքան անմարդավայել և կոպիտ էր, որ ամեն մի բարեհոդի եւրոպացու սիրտը կարող էր ցաւցնել»: Այսպէս է սկսում իւր յօդուածը Եապօնիայի կանանց դրութեան մասին անգլիացի Հոլ Չամբէրէնը, որը երկար ժամանակ ապրել է այդ երկրումընդհանուր լեզուագիտութեան և Եապօնիեն լեզուի պրօֆեսորի պաշտօնով: Եապօնացու մի այսպիսի հասկացողութիւնը կնօջ մասին և վերջնիս ստորացումը տղամարդուց առաջ է եկել Կոնֆուցիոսի վարդապետութիւնից, որը Եապօնիայում մուտք է գործել Վլոդ. Ք. ծ. առաջ և որը շատ պերճախօս կերպով ծաղկեցրել է բարոյախօս Կայլարը ԽՎլոդ. իւր «Մեծ ուսմունք կանանց համար» աշխատութեան մէջ:

Եպօնիայի «կանանց հարցի» հետ հիմնաւորապէս ծառաօթանալու համար անպայման հարկաւոր է նախ աշքի անցկացնել այդ «Ուսմունքը», որը Եապօնուհիների համար, նոյն իսկ այժմ, կազմում է սեղանի զարդ, և որի բովանդակութիւնից առաջ կբերենք նրա էական կէտերը:

«Որովհետեւ աղջկան որոշուած է մի որոշ հասակից յետոյ մի նոր տուն մտնել և ապրել այնտեղ սկեսարի և սկեսորօջ ստորադրութեան ներքոյ, ուստի աւելի նրան, քան տղային, անհրաժեշտ է խոնարհ և լուղ լինել իւր ծնողաց խրատներին: Եթէ վերջիններս ծնողական սիրուց դրուած թոյլ կը տան իւրեանց աղջկան մեծանալ ինքնակամ, դորանով յամառ և կոպիտ կդառնայ նա, որով իւր ամուսնու տանը յետ կը մղի իրենից իւր շրջապատողների բարեացակամութիւնը: Այսպիսի ուղղութեամբ սնուած աղջկայ համար ամուսնական լուծը, եթէ մանաւանդ սկեսայրը հաստատ

սկզբունքի տէր մարդ է, անտանելի մի բեռը կդառնայ, և նա կատի ու կանիծի իւր ամուսնուն, սկեսարին, և իբրև հետեւանք այդ ընտանիկան անհամաձայնութեան առաջ կըզայ այն, որ հարսին դուրս կանեն իւր ամուսնու աանից և դորանով կարատաւորեն նրա անունը, իսկ հարսի ծնողները, մոռանալով իւրեանց աղջկան տուած սխալ կրթութիւնը, կը նախատեն նրա սկեսարին, բայց ի հարկէ անիրաւացի կը լինեն, որովհետեւ ամենայն իրաւամբ բոլոր դժբախտութիւնը պէտք է վերագրել յատկապէս իւրեանց աղջկան տուած դաստիարակութեան սխալ ընթացքին:

«Աղջկայ համար գնահատելի է աւելի բարեսրառութիւնը, քան արտաքին գեղեցկութիւնը: Փչացած կնօջ սիրտը միշտ վրդովուած է լինում, նա իւր շուրջը տարօրինակ է նայում, իւր զայրոյթը ուրիշների վրայ է թափում, նրա խօսքերը խիստ են և կոպիտ, իսկ խօսակցութիւնը անպատշաճ և համարձակ: Եթէ նա խօսում է, այդ միայն նրա համար, որ իրան ուրիշներից բարձր զամէ, յանդիմանէ, նախանձի ուրիշներին, գովէ իրան գոռողութեամբ, յարձակուէ ուրիշների վրայ, —միով բանիւ վարուել հակառակ այն ամենի, ինչոր վայել է բարեկիրթ կնօջ: Առաքինի կնօջ միակ յատկանիշներն են—հեղութիւն, հնագանդութիւն և հանգստութիւն:

«Աղջիկը իւր ամենավաղ հասակից ի վեր պէտք է իմանայ իւր և տղամարդու բաժանող սահմանները և ոչ մի վայրկեան չափտի թոյլ տայ իրան տեսնել կամ լսել ամենափոքը անվայելչութիւնն անգամ: Հին սովորութեան համեմատ չէր թոյլ տրվում տղամարդկանց և կանանց ապրել միենոյն սենեակում, լուացուել և փոխած շորեւը պահել միենոյն տեղը, կամ թէ ձեռքից ձեռք առնել մի որևէ բան:

Գիշերով տանից գուրս գնացող կինը անպայման իւր հետ պէտք է վերցնի վառած լապտեր և մի որոշ տարածութիւն պէտք է թողնի իւր և թէ ամուսնու ու թէ նոյն իսկ եղբօր մէջ»:

«Զինաստանում ամուսնութիւնը կոչվում է վերադար-

ձում, որովհետև կինը իւր ամուսնու տունը պէտք է համարի իւր նախկին սեփականութիւննեւ նա, ամուսնանալով, կարծես թէ վերադառնում է այնտեղ, որտեղ որ որոշուած էր իրեն ասուածութիւնից ապրել իւր ծնդեան օրից: Ինչ աստիճան էլ որ իւր ամուսնու վիճակը չքաւոր և նեղ լինի, կինը իրաւունք չունի տրտնջալու և անբաւականութիւն ցոյց տալու, այլ այդ բանը նա պէտք է վերագրի իրեն ուղարկած անողոք ճակատագրին: Հին իմաստունը \*) ուսուցանում էր, որ կինը միանգամ ամուսնանալով, նա երբէք չպիտի թողնի իւր ամուսնու տունը, իսկ եթէ ճանապարհից շեղուելով բաժանվում է առանուց, նա դորանով խայտառակում է իրան մինչև իւր կեանքի վերջին րոպէն: Ամուսնալուծութեան առիթներից կարող է ծառայել եօթը յանցանքներից մինը, որոնք այդպէս էլ կոչվում են՝ ամուսնալուծութեան եօթ պատճառներ.

—ա) Անհնապանդ գտնուել սկեսարին կամ սկեսրօջ.

—բ) Ամութիւն,—որովհետև ամուսնութեան միակ նըշպատակն է տղամարդուն սերունդ պարզեցելը: Ամուլ կինը կարող է մնալ և ապրել իւր ամուսնու մօտ, եթէ նա բարեսիրտ է, մաքուր վարքով, նախանձոտ չէ, նա կարող է որդգեգել նոյնպէս մի ուրիշ երեխայ, բայց թէ դա անպատճառ իւր ամուսնու արիւնակից ազգականներից պէտք է լինի, նոյնպէս կարող է մնալ այն պարագայում, եթէ որ ամուսնը երեխաներ ունենայ հարձից.

—գ) Պոռնկութիւն.

—դ) Կասկածութիւն.

—ե) Քոս կամ մի որևէ վատ հիւանդութիւն.

—զ) Կոռւարարութիւն կամ շատախօսութիւն, որը առիթ է դառնում խզելու բարեկամների կապը և ընդհանրապէս տան խաղաղութեան խանդարման.

—է) Հակումն դէպի գողութիւն: Ահա ամուսնալուծու-

\*) Կօֆուցիս:

թեան այն եօթը պատճառները, որ իմաստունը ցոյց է տալիս: Ամուսնուց բաժանուած կինը ճանապարհից շեղուած և խայտառակուած է համարուում, եթէ նա նոյն իսկ երկրորդ անգամ ամուսնանայ հարուստ, անուանի և դիրք ունեցող մէկի հետ:

«Աղջիկը երբ դեռ իւր հօր տանն է գտնվում, նրա ամենամեծ պարտականութիւնն է սիրել և յարգել իւր ծնողաց: Իսկ ամուսնանալով նա իւր ամուսնու ծնողաց հաշւումն է գտնվում. պսակուելուց յետոյ նրա զլիսաւոր պարտականութիւններից մէկը պէտք է լինի յարգել իւր սկեսարին և սկեսրօջ առաւել քան հարազատ ծնողաց, սիրել և պատուել բոլոր հոգով, և վերաբերուել նրանց նոյն իսկ ամենաչնչին դէպում, հարազատ աղջկայ յարգանքով: Պատուելով նա իւր հարազատ ծնողաց, նա ոչ մի վայրկեան չպէտք դադարի մտածելու և իւր ամուսնու ծնողաց մասին:

Օր ու գիշեր հնագանդ կերպով նա պարտաւոր է կատարել նոցա պատուէլները: Երբէք չպիտի մերժի նա ոչ մի գործ, որը նրանից պահանջում են, նա ամենայն ակնածութեամբ պարտաւոր է լսել իւր սկեսրօջ հրամանները և երբէք չպիտի տրտնջայ նրանց դէմ: Նա ամեն հանգամանքում պարտաւոր է առնել նոցա հրամանը և ընաթնալ նոցա ցոյց տուած ուղղութեամբ... Ով կին, եթէ նոյն իսկ քեզ ատելու մէջ բաւականութիւն գտնեն և բռնութիւն գործ գնեն քո դէմ, դու մի տրտնջա և մի բարկանա նոցա վրայ: Եթէ դու ամեն հանգամանքներում և դիպուածներում կվերաբերուես նոցա յարգանքով և սիրով, անշուշտ նոքա ևս վերջ ի վերջոյ բարեկամարար կը վերաբերուեն քեզ»...

Կինը պարտաւոր է նայել իւր ամուսնուն, որպէս իւր տիրօջ, և պէտքէ ծառայէ նրան յարգանքով և պատկառանքով, նա երբէք չպիտի թոյլ տայ իրան թեթեամտութեամբ մի որևէ անպատշաճ բան մտածելու իւր ամուսնու մասին: Կնօջ ամենամեծ առաքինութիւնը հնազանդութիւնն է: Եթէ կինը դիմում է ամուսնուն մի որևէ հարցով, նրա թէ դէմքի արտայայտութիւնը և թէ շարժուածքի ձեերը պէտք է

լինեն քաղաքավարի, համեստ և վայելուչ, և ոչ թէ կոպիտ, կամակոր և պահանջող: Այդ բանի համար կինը պարտաւոր է նախօրէն մտածել և իրեն պատրաստել: Եթէ ամուսինը կարգադրութիւն է անում, կինը երբէք չպիտի հակառակուի նրան: Կասկածելի գէպքերում կինը պարտաւոր է խոնարհ և հնազանդ կերպով հարցնել և բացարութիւն պահանջնել ամուսնուց և հետեւ նրա ցուցմունքներին: Եթէ ամուսինը կդիմի կնօջը մի որ և է հարցով, կինը պարտաւոր է ուշադրութեամբ և ճշտութեամբ պատասխանել հարցին: Զմտածուած պատասխանը կոպտութեան նշան է: Եթէ երբ և իցէ ամուսինը զայրանայ կնօջ վրայ, կինը պարտաւորէ լսել նըրան երկիւղով և պատկառանքով և երբէք չպէտք է նեղանայ և բարկանայ նրա վրայ: Կինը պարտաւորէ նայել իւր ամուսնուն, որպէս մարմացած երկնքի վրայ և անդադար պէտք է մտածի նրա մասին, թէ ի՞նչորէ կամ ի՞նչ ձեռվ հպատակուի և հնազանդուի նրան, որ դորանով աղատուած լինի երկնքի պատուհանից:

«Թող կինը երբէք չմտածի նախանձի մասին: Եթէ իւր ամուսինը կվարի զեղիս և անսուակ կեանք, կինը պարտաւորէ մեղմութեամբ յանդիմանել նրան, բայց երբէք ըլպէտք է զայրանայ, առաւել ևս չպիտի ցոյց տայ այդ զայրոյթը: Եթէ կնօջ նախանձը ծայրայելութեան հասնի, նրա դէմքի արտայայտութիւնը զարհուրելի կդառնայ, իսկ խօսակցութիւնը անպատշաճ կինի, և այդ բանը կարող է խորթացնել իրան ամուսնուց, որի պատճառու և ինքը անսուանելի բեռը կդառնայ նրա համար: Եթէ ամուսինը անխոհեմ է վարվում կնօջ հետ, կինը պարտաւոր է, նախ քան նրան յորդորելը, դէմքին տալ հեղ արտայայտութիւն, ձայնին սեղմութիւն, իսկ եթէ ամուսինը կզայրանայ և չի լսի նրա յանդիմանութեան, կինը պարտաւոր է սպասել մինչև որ նրա զայրոյթը անցնի և տրամադրութիւնը փոխուի, ապա նորից փորձել յանդիմանելու նրան, բայց ոչ շուտ քան նրա սրտի մեղմանալը: Ով կին, երբէք չդիմիս ամուսնուդ խոժոռուած դէմքով կամ թէ ճշացող ձայնով!...»

«Կինը պարտաւոր է լինել զգաստ և խիստ հետեւ իւր վարքին: Առաւոտները պէտք է վաղ զարթնի, իսկ զիշերները ուշ քնի, նա կէսօրներին ևս չպիտի քնի, այլ նա պարտաւոր է ուշապիր կերպով հետեւ իւր տնտեսական գործին, այն է՝ գործեւ, կարեւ մասեւ և այլն: Նա շատ էլ չպիտի մտածի թէյի և գինու մասին, նոյնպէս չպիտի փայփայէ թէ տեսողութիւնը և թէ լսողութիւնը թատրօնական ներկայացումներով, երգեցողութեամբ, և պատմութիւններով: Մինչև քառասուն տարին լրանալը նա շատ էլ չպիտի յաճախի տաճարներ (ոչ շինտոյեական և ոչ էլ բուդզայական) և ոչ էլ նոյնանման տեղեր, որտեղ առնասարակ ժողովուրդի մեծ բազմութիւն է լինում: Նա իրան չպիտի թոյլ տայ զրբացների և գուշակողների մոլորութեանց հետեւ և անվայել կերպով մօտենալ աստուածներին կամ թէ շարունակ աղօթքներով զրացուել: Եթէ նա գոհացուցիչ կերպով կատարում է իւր պարտականութիւնները, որպէս մարգկային էակ, այն ժամանակ նա կարող է աղօթել միայնակ, չը վախենալով նրանից, որ աստուածային գորութիւնը չի դադարի նրա մասին հոգ տանելուց»:

«Կնօջ հոգու ամենավատ յատկանիշներն են հետեւ հինգ հիւանդութիւնները. անհնապանդութիւն, անվերջ զըժգոնդութիւն, զրպարտութիւն, նախանձ և տխմարութիւն: Վերոյիշեալ հիւանդութեամբ տասը կանանցից անկասկած տանշվում են եօթը կամ ութը, որից պարզ երեսում է կնօջ բնութեան թուլութիւնը տղամարդուց: Այդ հինգ հիւանդութիւններից բժշկուելու համար կինը պարտաւոր է դիմել ինքնոխորասուզման և ինքնաբնադտութեան: Այդ հինգ հիւանդութեան մայրը և ամենասարսափելին—տխմարութիւնն է: Կնօջ բնութիւնը կրաւորական է և այդ կրաւորականութիւնը գիշերուայ բնութեան նման խաւար է: Ահա և այստեղից է առաջ զալիս, որ կնօջ անխոհնմութիւնը խանգարում է հասկանալ իրան իսկական պարտականութիւնները և չի նկատում իր արարքները, որով խայտառակում է իւր գլուխը և փորձանքի ենթարկում թէ իւր ամուսնուն և թէ իւր

երեխայոց։ Նա մարդկանց յանդիմանելու ժամանակ այդ բանը չի նախատեսում և իզուր տեղը անիծում է անմեղ մարդկանց։ Նա երբ նախանձում է ուղիղներին՝ միայն իրան մասին մտածելով, չի իմանում, որ այդպիսով ինքը իրան անձնական թշնամին է դառնում, ձեռք բերելով միայն նըրանց թշնամութիւնը... Սարսափելի սխալմունքներ։ Դրանից էլ յետոյ իւր զաւակների կրթութեան գործում, նրա կոյր սէրը դէպի իւր երեխայքը, հարկադրում են նրան սխալմունքներ գործել։ Նրա բնածին տխմարութիւնը այնքան մեծ է, որ նա պարտաւոր է ամեն մի չնչին դիպուածում ինքը իրան չհաւատալ և հետեւ ամուսնու ասածներին»։

«Մենք լսեցինք, որ նորածին աղջիկ երեխային հին ժամանակներում դնում էին յատակի վրայ երեք օր, որի համեմատ մենք այգտեղ ևս տեսնում ենք տղամարդուն երկրին նմանեցրած, իսկ կնօջ—գետնին, անշուշտ այդ սովորութիւնը կնօջը պէտք է սովորացնէր իւր ծննդեան օրից, զիջել և առաջին տեղ տալ տղամարդուն, իսկ ինքը բաւականանար երկրորդով, հեռու մնար հպարտութիւնից, տանէ ուրիշի ծաղրնու արհամարանքը համբերութեամբ և խոնարհութեամբ։ Եթէ կինը կվարուի այսպէս, նրա ամուսնական յարաքերութիւնները համբերաշխ և երկարատև կլինեն, իսկ ընտանիկան օջախը—խաղաղութեան վայր»։

«Ծնողներ, բացատրելով, ուսուցէք այդ կանոնները մատաղ հասակից ի վեր ձեր աղջկանց, ստիպեցէք արտագրել նրանց ժամանակ առ ժամանակ, որ չմոռանան երբէք։ Աւելի լւա է դրանցով զարգարէք ձեր աղջկերանց քան շուրերով և զանազան զարդերով—ինչպէս այժմ հայրերն են շուայլ կերպով ամուսնացնում աղջկանց։ Առաւել օգտակար կլինէր նրանց համար, եթէ այդ ուսուցնքը կատարելագործէին վերոյիշեալ խրատներով, որը դրանց կպահպանէր, որպէս թանգարին թիլիսմա ամբողջ կեանքի ընթացքում և ինչպէս իրաւացի կերպով նկատում է այդ բանը հին առածը. «տղամարդը իմանում է մի միլիոն ձախսել աղջկան ամուսնացնելու համար, իսկ չի իմանում հարիւր հազար

ձախսել մի երեխայի դաստիարակութեան վրայ. ով որ աղջիկ ունի, անշուշտ սրտին շատ մօտ պէտք է ընդունի այդ առածը»։

Եթէ ընթերցողը կարծի, որ կայբարի «Ուսմունքը» ներկայումս համարվում է ժամանակագրական վրիպակ և կամ հետաքրքիր է պատմական տեսակէտով միայն, և ոչ իրրե «պաշտօնական թուղթ», որը բացատրում է եազօնական ժամանակակից հասարակական երկոյթները, նա չարաշար կը սխալուի, որովհետև վրբջին նոր հոսանքները գեռ ևս չեն վերացըել հինը, որը երկար դարերի ընթացքում գործադրուելով արմատացել և սովորութեան է փոխուել։ Ասածներիս որպէս փաստ, առաջ կը ըերեւ հետևեալ հետաքրքիր գէպքը։ Սրանից մի քանի տարի առաջ, Զամբերէլէնը իւր «Հնութեան ժամանակագրութիւն»<sup>\*)</sup> հազօնական հին գրական երկի անգլիերէն թարգմանութեանը կցեց մի յառաջարան, որտեղ ի միջի այլոց շօշափվում էր այն կէտը, յոյց էր տալիս եապօնացի կնօջ անհամապատասխան—որը ցոյց էր տալիս եապօնացի կնօջ անհամապատասխան—ստոր զբութիւնը թէ հնումն և թէ այժմս։ Հին ուղղութեան յայտնի ներկայացուցիչներից վեց հոգի թարգմանեցին այդ յառաջարանը հազօներէն, որոնք հեղինակի շատ մտքերը համակրանքով ընդունեցին, բայց հասնելով կնօջ հպատակութեան հարցին, վերին աստիճանի յուզուեցին նրա զէմ։ «Կնօջ հպատակութիւնը տղամարդուն,—ասվում է այդ մեկնութեան մէջ,—վերին աստիճանի բնական և նպատակայարմար սովորութիւն է։ Մտածել դրա հակառակը, կնշանայացնել եւրոպական նախապաշարմունքները, որովհետև տղամարդը պէտք է տիրապետի կանանց՝ համաձայն երկնըն և երկրի մեծ օրէնքի, իսկ չընդունել և բարբարոսութիւն համարել այդ—անհեթեթութիւն է»։

Իսկ այժմ նայենք թէ կայբարի վարդապետութիւնը

<sup>\*)</sup> Այդ աշխատութիւնը վերապըում են 712 թ.

ինչ ազգեցութիւն ունեցաւ այդ երկրում կանանց կրթութեան և զարգացման, ամուսնական յարաբերութեան և կամ բարոյականութեան վրայ:

Եապօնացիները չափազանց զաւակասէր են, և այդ անհուս սիրոյ ազգեցութեան ներքոյ նորա զավում են իրանց զայրոյթը բարկութեան միջոցին, այդ պատճառով էլ եապօնացի երեխայի կեանքը, ինչպէս տղայինը, նոյնպէս և աղջկան—անցնում է կեանքի մեղմ պայմանների և քնքոյշ խընամատարութեան հերթոյ: Չնայելով դրան եապօնացիները ամենափոքր հասակից ի վեր սովորացնում են երեխայոց յարգանք գէպի մեծերը և ինքնազգաստութիւն: Եւ որովհետեւ այդ վերջինը կանանցից տւելի շատ է պահանջվում քան տըղամարդուց, ուստի աղջկայ դաստիրակութեան մէջ դա մի առանձին տեղ է զրաւում: Ինքնազգաստութիւնը չպիտի սահմանափակուի միայն ինքնազսպումով, առաջ եկած որևէ անդուրեկան դիպուածի ժամանակ, լինի դա Փիդիքական թէ բարյական, այլ պէտքէ իմանալ այդ հանգամանքներում դէմքին տալ ուրախ ժգիտ և պահպանել «դիւրեկան ձևեր» նոյն իսկ ամենածանր հանգամանքներում:

Փոքրիկ աղջիկը,—ասում է Ալիսա Բեկօնը—պէտք է հրաժարուի իւր ամեն ես—ից, ամեն ինչ զիջի ուրիշներին, չցոյց տայ յուզմունքի բաց առեալ այն դէպերը, երբ այդ բանը բաւականութիւն է պատճառում իւր ըլջապատողներին. ահա այդ բանումն է կայանում իսկական քաղաքավարութեան գաղտնիքը և այդ բանը պէտք է իմանայ կինը գործադրել, իթէ ուզում է, որ իւր մասին լաւ գաղափար ունենան և թոյլ տան բաղդաւոր կեանք վարել Մի այսպիսի դաստիրակութեան արդիւնքը լինում է ձևերի հրապուրչութիւնը, որով օժտուած են եապօնացի կանայքը, ամենափոքր հասակից ի վեր:

Մայրը անդադար հոգս է տանում ներգործել ոչ միայն խրատներով, այլ և անձնական օրինակով, որ իւր աղջիկը

հմտութիւն ունենայ յարմարուել շրջապատողների պահանջներին ընհանրապէս, իսկ տղամարդկանց առանձնապէս:

Այստեղ առաջ կրերեմ, որպէս օրինակ, անձնական տեսած պատկերներիցս մինը:

Մի անգամ իջնելով Տօկիօի Ուենօ պարտէզից, որը գըտնվում է բաւական զառիվայր բլրի վրայ, ես հանդիպեցի մի խմբի, որը բաղկացած էր մէջքին շալակած երեխայով հասակաւոր եապօնացուց, ջահել կնօջից և ութ տարեկան աղջկանից, որի ձեռքից կինը բոնած տանում էր, եապօնացին սայթաքեց և երեխան կապած չլինելով մէջքին, ինչպէս այդ կանայքն են անում, գուրս սահեց և բարձրածայն լացով գետին գլորուեց: Թէ կինը և թէ աղջիկը, որ անկարելի էր չնկատուել այդ, ամենից առաջ աշխատում էին գգուանքով հանգստացնել շփոթութեան հեղինակին, իսկ յետոյ վազեցին գէպի երեխան, որը բարերախտաբար, արտաքինին նայելով, գոնէ այդպէս էր երեսում, չէր վնասուել: Մինչև անգամ ուսումնարաններում, որտեղ բաւականաչափ տիրում է եւրոպական ազգեցութիւնը, այստեղ ես առհասարակ աղջկերքը աշխատում են բաւականութիւն պատճառել տղաներին դասամիջոցներին իրար հետ խաղալու ժամանակ:

Յայտնի է, որ հին եապօնեայում ընդունուած էր և մհծ գեր էր կատարում «ձևականութիւնը»իւր ամենամանրակըրկիր ձևակատարութեամբ, այսինքն «իմանալ հագամանքի համապատասխան իրան պատշաճաւոր ձև տալ»: Բայց եապօնեայում շատ բան վերացուեցաւ տղամարդկանց վերաբերմամբ, այն ինչ կանանց վերաբերմամբ դեռ ևս գոյութիւն ունի այժմ։ Էլ մի որոշ չափով ձևականութեան ուսմունքը։ Աղջկայ տասը, նոյն իսկ ութ տարին լրանալուց սկսվում է նրա սկզբնական լուրջ կրթութիւնը։ Զեականութեան պահանջը միշտ և ամենուրեք «կանգնում է նրա առաջ» և նա պարտաւոր է ճշտութեամբ հետեւել ցոյց տուած մարմնի ձևերի, ձեռքերի և զիսի փոխադարձ խոնարհումների, բարեկ կամ հրաժեշտի, ընդունելութեան, նոր ճանապարհ գցելու միջոցին, թէյով հիւրասիրելու, յատակի վրայ նստելու հ-

դանակը, ճաշի սեղանին նստելու ձեր և այլն և այլն: Նոյն իսկ հարուստ ընտանիքներում, տանտիկինը ինքն է կառավարում տունը և պարագում տնտեսութեամբ, մինոյն ժամանակ նա ընտանիքում աշխատում է ստեղծել տղամարդու համար մի այնպիսի յարժարութիւն, նոյն իսկ առենամանը պահանջների վերաբերմամբ, որ Արևմուտքում տղամարդը, իւր պարտականութիւնը կհամարէր հրաժարուել կնօջ մատուցած մի այդպիսի ծառայութիւնից: Տանտիկինը ինքը պէտք է սպասաւորէ արական սեփի հիւրերին, եթէ միայն նա չի պատկանում բարձրաստիճան ընտանիքին, նոյն իսկ այսպիսի ընտանիքներում, եթէ ուզում են առանձնապէս յարգել հիւրին, նրան հիւրասիրում են ոչ ընդհանուր, այլ առանձին սեղանի վրայ տան վլխաւորի հետ—որոնց ծառայում է վերջինի կինը կամ թէ աղջիկը, չսայելով որ այդ ընտանիքում գտնուեն բազմաթիւ ծառաներ... Այդ ամենի համար կինը պարտաստվում է իւր ամենափոքր հասակից ի վեր: Աղջկայ կրթութիւնը մի այդպիսի բարդ դաստիարակութեան պահանջներում, նոյն իսկ այդ հասկացողութեան ներ մտքով, ահագին ժամանակ է խլում նա, մանաւանդ չըքքաւոր ընտանիքներում: Բացի այդ ձևակատարութիւններից եապօնիայում վաղուց ընդունուած է, որ ամեն մի կին,— բացառապէս ամենածանր և չքաւոր դասակարգին պատկանողներ—սովորում է կարդալ և նամակագրութիւն եապօնական նշանագրերով, իսկ իշխանների, սամուրաների ընտանիքներում ծանօթանում են մինչև անգամ չինացի կլասիկների և պօյէմանների դասաւորութեան արուեստի հետ: Այդպիսի ընտանիքներում աղջիկը անհրաժէշտորէն ոլէտք է իմանայ այսպէս անուանուած «Օննա Բունկօ», այսինքն կանաց գրադարան, որը կազմուած է հետևեալ հեղինակութիւններից.» Մեծ ուսմունք կանաց համար,—կայլարի, — «Փոքր ուսմունք կանաց համար», —ըստ չինացի կլասիկների կանաց համար, բարոյական պարտականութեանց մեկնութիւն, — «Ընտանիկան խրատներ» — Տնտեսութիւն և ձևականութիւն. — «Նամակագիր», «Օրինակելի երեխայոց մասին

պատմութիւններ», և «Երեկելի բանաստեղծների հարիւր քանաստեղծութիւններ»: Եթէ միջոցը ներում է բացի վերցիշեալ ուսմունքից աղջիկը սովորում է երաժշտութիւն, ծաղկեայ փնջեր կազմել և զանազան զարդեր պատրաստել ծաղկներից \*), նոյնպէս նկարչութիւն՝ գունաւոր ներկերով ծաղիկներ և թոչուններ նկարել, հանդիսաւոր և իւր բոլոր ձևականութեամբ թէյի ծխակատարութիւն \*\*):

Ցածր դասակարգի և ընդհանրապէս վաճառականների աղջկերքը յաճախ պարեր էին սովորում, բայց ոչ իրանց բաւականութեանց, այլ ազգային մի որևէ տօնախմբութեան մէջ հանդիսաւուսների առաջ իրանց ցոյց տալու համար: Չնայելով, որ այդ պարերը համեստ են և վայելուչ շարժուածքի ձևեր ունեն, այնուամենայնիւ եապօնացիների բարձր դասակարգը, հանել է իր աղջկերանց կրթութեան ծրագրից, որովհետեւ կատարւում է «ի՛ ցոյց հանդիսաւուսների»:

Չնայելով կանաց մի այսպիսի խղճուկ կրթութեան, այնու ամենայնիւ նոյն իսկ եապօնիայում կանաց ծանօթացնուած էին ժողովրդական բանաստղծութեանց հետ, շընորիւ նրանց սիրած տեղական խաղերի, որը կոչվում է «Հիակու—նին—իսու», որը բառացի կերպով կնշանակի«հարիւր բանաստեղծների պօյէմա»: Դա խաղացվում է երկու հարիւր թղթախաղով, որոնց ամեն մինի վրայ դրուած է առաջին կամ վերջին յայտնի պօէմայի կէսը, որը հեշտու

\*) Եապօնացիները չափազանց սիրում են ծաղիկներ և շատ հըմուտ են ծաղիկներից գեղարուեստական ձեռագործներ պատրաստելու մէջ:

\*\*) Ծիսակատարութիւնը կայանում է իրան վերաբերեալ անօթների և թէ գրան պայմանաւորեալ ամենամարակրկիտ ձևակնութեան կատարման մէջ: Հարուստ տներում դրա համար նոյն իսկ յատկացրած է առանձին սենեակ: Զամրերլէնընկարագրելով իւր յօդուածում այդ ցերեմոնիան, ասում է, որ այդ բանը իւր պատմութեան մէջ ունեցել է երեք ասպարէզ, բժշկա—բարեպաշտական, քեզութեան և գեղարուեստագիտական, որի մէջ և գոնվում է աժման:



թեամբ բերանացի սովորում է խաղացողը \*):

Եապօնիայում երիտասարդների մէջ ազգային պատմութեան և գրականութեան տարածելուն նպաստում է թատրոնը, որի բեմից պատմական երեելի անցքերը և լեզենդաները հաղորդվում են մեծ խնամքով: Ծնողները յաճախ տառում են իրանց աղջկերանց այդպիսի ներկայացումներին և այստեղ ըստ Ալիսա Բէկոնի՝ փոքրիկ եապօնուհին «ընդունում է պարտքի կատարման անձնութիրութեան ոգին, որը հին եապօնիայի բնորոշ յատկանիշն էր, այստեղ նա գաղափար է կազմում, թէ ինչ պէտք է լինի ինքը իւր ծնողաց և ամուսնու համար... Եւ նա թատրօնից գուրս գալով, տառում է իւր հետ հասկացողութեան այն կանխավճարը, որը նա չէր կարող մի այսպիսի ընդարձակ բովանդակութեամբ ստանալ և ոչ մի ուսմունքից, —այն ոգին, որը ոգեսորում էր նրա նախնիքներին և որը պէտք է ոգեսորի իրան, եթէ նա ցանկանում է լինել նախկին արժանաւոր կանանց սերունդ»:

Ի դէպ նկատենք այստեղ, որ շատ անգամ յայտնի դրամատիկական հեղինակութեան մէջ, եապօնիայում գովա-

\*) Այդ պօէմաները շատ համառօտ են, պարունակում են երեսուն և մէկ փառկ և իրանց բովանդակութեամբ բաժանվում են երկու մասին: Այդ իսպի համար եապօնացիները նստում են յատակի վրայ իրանց սովորական կիսաշրջանակայն, որից թղթախաղի կէսը կամ հարեւը հատը, որոնք իրանց մէջ պարունակում են երկրորդ պօէմայի կիսի բովանդակութիւնը, բնագիրը վեր գարսփում են խաղացողների առաջ, իսկ նոցանից մէկը ընտրվում է ընթերցող: Խառը դասաւորուած միւս հարիւր հատ խաղաթղթերից նա հանում է յանկարծակի այդտեղից իրան պատահած թուղթը և կարգում նրա վրայ գրած պօէման: Խաղացողի հըմտութիւնը կայանում է կարդացուած տողերի արագ յիշողութեան և պօէմայի վերջաւորութեան արագ գտնելու մէջ իւր թղթերի վրայ, ով որ ամենից շուտ կը գտնի և կը բարձրացնի իւր թղթերից կարդացուած պօէմայի վերջաւորութիւնը, նա իւր թղթախաղերից մի քանիսը պէտք է տայ իւր յօրանջող խաղընկերօջը: Անա այդպիսով ամենից շուտ իւր խաղաթղթերը վերջացնողը համարվում է խաղը տանող:

Հչիակունին—իսշուռ, խաղը շատ է նպաստում երիտասարդութեան ազգային կլասիկական պօէմային ծանօթանալուն:

բանուում է կնօջ այն «հերոսական» ինքնապոհման տիպը, որը արել է իւր ընտանիքի, հօր, եղբօր կամ ամուսնու բարիքի համար՝ յատկապէս իւր—մարմնավաճառութեամբ... Օրիորդաց համար սինչե վերջին ժամանակները ամենաին անտեղի չէր համարվում մի այդպիսի բովանդակութեամբ ներկայացման ներկայ գտնուելը, իսկ ինչ վերաբերում է ցածր դասակարգի բնակչութեան, նա այժմս էլ է յաճախում: Մի այդպիսի հետաքրքիր երկոյթ, որը բնորոշ պատկեր է տալիս եապօնիայի կանանց հարցին, մենք նորից կվերադառնանք ցածը:

Նախ քան հին եապօնիայի կանանց խղճուկ զարգացման մասին վերջացնելը, նկատենք այստեղ, որ նրանց մէջ ևս գոյութիւն է ունեցել մի այնպիսի կանանց դասակարգ, այսինքն—պալատական, որը ոչ միայն ծանօթ էր ազգային գրականութեան, այլ և հարստացրել է նրան իւր հեղինակութիւններով:

Հանգամանքները պարզելու համար, որոնց միջոցաւ հնարաւոր եղաւ այդ երկոյթները երեան հանելու, դիմենք պատմութեան:

Եապօնիայում արուեստագիտութիւնը և բուդպայականութիւնը մուտք ունեցաւ—Զինաստանից Կօրէայով քրիստոնէական տարեթուի Վլտարին—երգեցիկ խմբի կառավարիչ—արքայազն Շօտոկու—Թախշի օրով, —թագաւորի գահի շուրջը, որտեղ սկսեցին հաւաքուել երկրի գիտնականները, զարգացած և տաղանդաւոր մարդիկ, գեղարուեստագէտներ, զրոյներ և գիտութեան բազմաթիւ պաշտպաններ:

Կայսրը, շրջապատուած լինելով մի այսպիսի մեղմը միջնավայրով, հետզհետէ դադարեց թէ պատերազմական և թէ նոյն իսկ վարչական գործերից հրաժարուել և յանձնել յայտնի տոհմերի ներկայացուցիչներին, իսկ ինքը անցկացնել հանդիսատ կեանք իւր սեփական նեղ շահերով, «մտածելով աւելի շատ մի զոյգ փայլուն աչքերի, լսած խորիմաստ կամ թէ սրախօս դարձուածքների մասին, քան այն թագա-

ւորութեան, որը կառավարում էր միայն անուամբ ըստ իր ասուածալին ծագման:

Նրա սրբազն պալատի սահմաններում մեծ դեր էին խաղում կանայք ոչ թէ իրանց վայելչագեղութեան և գեղցկութեան շնորհիւ միայն, այլ և մտաւոր զարգացման, կլասիկական ուսմունքի գիտութեան, խելացի խօսակցութեան, շուտափոյթ և ճշտիւ պատասխանի, հարուստ և բարձը երևակայութեան շնորհիւ: Այդ դարավլումը շարունակուեց մի քանի դար, որի ժամանակամիջոցում ի միջի այլոց ծաղկեցաւ գրականութիւնը, որը արտադրեց ըստ արևելագէտների հապօնական կլասիկական վիպասանութիւն: «Դա մի շատ հետաքրքիր օրինակ է հապօնական գրականութիւնից, որը բարձրացնում է վաղուց մոռացուած տասը կամ տասնումէկ դարի մեր տարեթուից հաշուած, հապօնական կեանքի վարագոյը», — ասում է Զամբերէնը: — «Այն ժամանակուայ թագաւորազն կանայք աչքի էին լնկում իրանց թեթեամտութեամբ և սկզբնական արիստոկրատութեամբ, որը սահմանափակվում էր միայն կիոտօի հին մայրաքարի հորիզոնով:»

Մենք նրանց հեղինակութեանց մէջ գտնում ենք բանաստեղծութեանց փորձեր, նրանց սիրային խանդուութիւնների նկարագրութիւններ, անվերջ երազներ և երևակայութիւն լուսնի լուսաւորութեան մասին և մինչև անգամ ամենամարդկրկիտ նկարագրութիւն իրանց զգեստների և զանազն հաւաքածուի մասին. դրանց բազմաթիւ փաստերից մէկը կարող է լինել այն, որ այդ գրեթեից շատերը գրել են կանայք:

Դասնալով ժողովուրդի դասակարգին, որը բնակչութեան մեծամասնութիւնն է կազմում, պէտք է ասած, որ այստեղ կինը ընդհանրապէս չի ճաշակել օրիորդական կեանքի այն բանաստեղծական և բոժանահակական կեանքը, որը արևմտեան կողմի օրիորդաց նեցուկն է զառնում, ջերմութեան և լոյսի աղքիւր, նրան հանդիպող դժուար օրիրին, որին նա կարող է ենթարկուել ճակատագրի դիպուածով: Հին

դարերում եապօնուհին ամուսնանում էր համարեա մատաղ հասակում, այն է 16 կամ նոյն իսկ 15 տարեկան հասակում: Նրա ամուսնական կեանքը սահմանափակուած էր այնպիսի պայմաններով, որ այդ երեխային յաճախ վիճակվում էր մի քանի տարուց յետոյ փոխուել հոգեկան տանջանքներով յոզնած մի կնօջ:

Եապօնացու էական հայեացքը ամուսնական կապակցութեան մասին տարբերվում է արևմտեան կուլտուրական ժողովուրդի հայեացքից նրանով, որ մինչև վերջին ժամանակներունը կարող էր կատարուել և մինչոյն ժամանակ լուծուել «առանց օրէնքի կամ եկեղեցու մասնակցութեան»: Միայն առաջինը պահանջում էր, որ երկու կողմիցն էլ տեղական վիճակազրական սեղանատանը յայտնուէր այդ մասին root-factum, որովհետև վերջինը պարտաւոր էր իւր ժամանակին հանել աղջկայ անունը նախկին ընտանիքի ցուցակից և մացնել ամուսնու ընտանիքի ցուցակը, իսկ հակառակ գէպքում վերանորոգել նախկին դաշնագիրը:

Նկարագրենք այժմ պայմանական ամուսնութեան ձևակատարութիւնը դիտաւորութիւնից մինչև կատարումն:

Երբ երիտասարդը կամ թէ աղջիկը հասել են ամուսնական տարիքին, նրանց ծնողները աշխատում են շուտով գտնել նրա համար իրանց կարծիքով համապատասխան զոյգ: Սովորութեան համեմատ այդ գործը յանձնվում է միջնորդին — «նակօզո» — որը լինում է ընտանիքի բարեկամ և լուսալի ու խոհեմ անձնաւորութիւն, որը ոչ թէ միայն ամուսնութեան ժամանակն է բանակցում, այլ և մնում է ամուսնութիւնից յետոյ, այսպէս ասած «խաչնղբայր» և խորհրդակից երիտասարդ զոյգին, որոնք յաճախ դիմում են նրան կեանքի դժուար հանգամանքներում: Գտնելով մի համապատասխան զոյգ, միջնորդը կազմում է այսպէս կոչուած «միամի», որ կընշանակի բառացի թարգմանութեամբ «փոխադարձ տեսակցութիւն», որտեղ երիտասարդ զոյգը ծնո-

դաց համաձայնութեամբ կարող են տեսնուել—յաճախ նոյն իսկ առաջին անգամ—և խօսել իրար հետ և այդպիսով «գնահատել» միմեանց:

Աղջիկը դաստիրակուած լինելով անպայման հնազանդուելու համար, շատ հազիւ է պատահում, որ նա ընդգիմանայ իւր ծնողաց ընտրութեան: Եթէ նոյն իսկ մի որևէ հանգամանքից ստիպուած փորձի այդ բայլն անել, ծնողները չեն ստիպի անպատճառ իրանց ուզածը կատարել, թէս այդ բոպէից յետոյ նրա կեանքը ծնողական յարկի տակ դասնանում է և ծնողաց համար մի աւելորդ բեռը համարփում, որը իւր յամառութեան պատճառով «մնացել է» տանը և աշխատում են կարելիին չափ շուտ մի ուրիշ փիսացու գտնել նրա համար:

Եթէ երիտասարդ զոյզը իրարից բաւական են և հաւանում են միմեանց, կը նշանակի, որ փորձը արդէն վերջացած է, և նրանց՝ զրանից յետոյ ընտանիքի անդամները պատփում են ընծաներով (\*): Այդ ընծաների փոխանակումը կոչվում է «փուլինօ» և համապատասխանում է մեր նշանագրութեան, որից յետոյ երիտասարդ զոյզը պարտաւոր է համարում իրար յարգել, թէս այդ բանը նրանցից չի պահանջվում իրբե օրէնք: Ընծաների փոխանցումից յետոյ, զրանցից և ոչ մի կողմը իրաւոնք չունի իրա խօսքը դրժելու, այդ պատճառով էլ այդ օրուանից նշանակվում է հարսանեաց օրը: Երբ հասնում է որոշուած օրը, հարսնացուն հագնում է ամբողջապէս սպիտակ շորեր, սպիտակը եալզիխայում ընդունուած է որպէս սպոյ նշան, ինչպէս այդ ցոյց է տալիս խորհրդական նշանը «դրանով մեռնում է այդ աղջիկը իւր ընտանիքի համար»: Երեկոյեան դէմ միջնորդի և նրա կնօջ ուղեկցութեամբ հարսին տանում են իւր նոր

\*) Ուրիշ ընծաների թւում, որը տանում է փեսան հարսին, պէտք է լինի «Օրի»—լայն գոտի, որը կապում են մէջքին հանգոյցով, թէս զա սովորական գործածական բան է աղջկերանց համար, բայց ներկայ հանգամանքում, զա նշանագրութեան օղակի գեր է կատարում:

տունը, նրա գնալուց յետոյ ծնողական տունը աւելում են իսկոյն և ետ, իսկ դրա հետ միասին դեռ ևս մի քանի տեղեր պահպանվում է այն սովորութիւնը, որ ունի «մաքրութեան» խորհրդաւորութիւն, որ հարսին ճանապարհ գնելուց յետոյ վառում են խառոյիկ, որպէս նշան դիակ գուրս տանելու: Հարսը իւր ապագայ ամուսնուց յետոյ, որտեղ երիտասարդ զոյզը մենում է ապրելու միայն մի բանի տարի, մինչև որ ամուսինը առանձնանալով կազմի առանձին ընտանիք, անմիջապէս կատարվում է հարսանեաց հանգէս, որը տօնական ճաշկերեոյթի նըմանութիւն ունի: Այդ հանգէսի էական մասը կազմում է այսպէս անուանուած «սան-սան-կու-դօ», այսինքն, բառացի, «երեք անգամ երեք-իննը», որովհետեւ, ինչպէս հարսը, նոյնապէս և փեսան երեք անգամ խմում են երեք թէյանոցի կամ գաւաթի երկու բերանից զանազան չափսով, որոնք լիքն են լինում «սակէ»-ով—բընձէ օղի: Առաջինը խմում է հարսը, որպէս իւր ապագայ տան հիւրը: Ծիսակատարութեան երկորդ էական մասը կազմում է շորերի փոխելու չարսը զալով իւր փեսայի ընտանիքը, իսկոյն իւր սպիտակ զգեստը փոխում է փեսայի ընծայաբերուածով: Վերը նկացագրուած ըմպումի ձեակատարութիւնից յետոյ տանմիջապէս հագնում է հարսը իւր հետ բերած գունաւոր զգեստը: Փեսան նոյնապէս փոխում է իւր շորը մի ուրիշ սենեակում... Այդ միջոցին այդտեղ հաւաքփում են երկու կողմի ամենամօտ և մտերիմ բարեկամները, որոնք նորապսակների մասնակցութեամբ նստում են կարճ միջոցով հանդիսականների համար պատրաստած ընդհանուր սեղանի շուրջը:

Ճաշկերոյթից յետոյ նորապսակները միջնորդի և իւր կնօջ ուղեկցութեամբ ննջարան են տանում, որտեղ երիտասարդ զոյզը նորից խոստանում են իրար կրկնելով նոյն «սան-սան-կու-դօ»: Բայց այժմս առաջինը խմում է ամուսինը, որովհետեւ այդ բոպէից արդէն նա համարփում է իւր կնօջ լիակատար տէր և իշխողը, իսկ կինը կայրարի ուս-

մունքով ոչ միայն ամուսնու այլ և նրա ազգականների ստրուկը:

«Տէրը» շատ քիչ է օգտվում իւր ունեցած իշխանութիւնից կնօջ հետ կողիտ վարուելու դէպքում, առաւել ևս ծեծից, որը նոյն իսկ ստոր դասակարգի ընտանիքներում շատ հաղուագիւտ բան է և այդ իրան թոյլ տուողը ընդհանուրի պարսաւանքի և իւր բարեկամների արհամարանքին կարժանանայ: Արդարացի կլինէր, եթէ ասէինք որ ամուսնացած հապօնուելու կեանքը մինչև նրա չափահաս տարիքը շատ ծանը պայմաններում է անցնում, նա շարունակ այն վախի մէջ է գտնվում, որ չլինի իրան դուրս հանեն առանց մի որեւէ պատճառի իւր ամուսնու տանից և ինքը զրկուի իւր որդկերանցից, որոնք սովորութեան համաձայն մնում են հօր մօտ—եթէ միայն վերջինս մի որ և է հոգեկան հիւանդութեամբ չի տառապում: Եթէ երեխանները յանձնուեն նոյն իսկ մօրը, նա ի՞նչով կարող էր նրանց պահել, բանի որ նա ոչ մի աշխատանքի աղբիւր չունի, եթէ միայն նա չի պատկանում ցածր դասակարգին: Աւելորդ է ասել նրա մասին, թէ այն մալրը, որից խլել են նրա հարազատ զաւակները, ի՞նչ հոգեկան տանջանքներ է կրում ընդհանրապէս, իսկ առանձնապէս այն երկրում, որտեղ կինը զուրկ է ինքնուրոյն աշխատանքից, որը կարող էր մասամբ օգնել ցաւին և տալ նրա գոյութեանը ապրելու միջոց:

Նկատենք այժմ, որ հին եապօնիայի գեղջուկ և ստոր դասակարգի կանայք, աւելի բաղդաւոր վիճակի մէջ էին պտնվում, քան միւս դասակարգի:

Դիւլացին կնօջ վրայ նայում է, ոչ որպէս խաղատիկինի իւր այցելողների համար և ոչ էլ որպէս աղախնի, որը միայն իւր ամուսնու յարմարութեան մասին մտածեր, այլ նա ընդունում է նրան, իրան հաւասար իրաւունքի տէր և ընկեր գոյութեան կոուի մէջ... թէն այդտեղ ևս գեղջուէ հին աղատ չէր սկեսրօջ և սկեսարի քմահաճոյըները համրերութեամբ տանելուց: «Դիւլջկուհին և բանուրուհին աւելի բաղդաւոր են դաիմայի կնօջից» տառմ է եապօնական ա-

ոածը... և որքան շատ ենք բարձրանում սօցիալական սանդուխի աստիճաններով, այնքան աւելի ծանր վիճակի մէջ ենք գտնում կանանց դրութիւնը եապօնիայում:

Ճիշտ է, բարձրաստիճան դասակարգներում ամուսնալութիւնները աւելի հաղուագիւտ են, բան միջին—ուժեղ նրանք լինիանուր ամուսնացաների մի երրորդ մասն են կազմում, որովհետեւ դա առանց շփոթութեան չէր կարող անցնել, ուստի, բարձրաստիճան ընտանիքները խուսափում են հասարակական կարծիքից նոյնքան, որքան և արևմտեան կողմերում... Թէկ դրանով իշխանական կանանց վիճակը չի թեթևանում, որովհետեւ եթէ ամուսինը սառչում է նրանից և միենոյն ժամանակ պահում է իւր մօտ, պատճառն այն է, որ այն աշխարհը, որ կդատապարտէր իրան կնօջը ապահարզան տալու համար, նոյն աշխարհը շատ սառնասրտութեամբ կընդունէր նրա յարաբերութիւնը «համաձայն կամ անհամաձայն» մի որեւէ «մեկակէի», այսինքն հարձի հետ: Իսկ եթէ օրինաւոր կինը չի բաժանվում ամուսնուց, դա ուղղակի զաւակների սէրն է, որի պատճառով նա անտրտունջ հնազանդվում է սովորութեանը, որը նրանից պահանջում է ուշադիր և քաղաքավարի վարմունք դէպի իւր հակառակորդուհին և աւելի ևս, նոյնպիսի քնքոյլ վարմունք նրա երեխայոց հետ, ինչպէս իւր հարազատի,—առաւել ևս, որ «մեկակէի» երեխաններին ամուսինը կարող է որդեգրել առանց մի որ և է սահմանափակումի:

Այժմ դժուար չէ հասկանալ կնօջ այն ողբալի դրութիւնը, եթէ ի նկատի ունենանք և այն կոփեր, որը նա պէտք է մղի նախանձի զգացումը ոչնչացնելու համար, որի յայտնուելուց ամուսինը կարող էր հասարակական դատապարտութիւնից ազատուել, եթէ կնօջը դուրս անէր իւր տանից, ուղարկելով նրան իրա ծնողաց կամ արիւնակից ազգականների տուն, որոնք ոչ թէ ցաւակցութեամբ կընդունիպէին նրան, այլ պարսաւելով և յանդիմանելով «ամուսնու հետ վարուել չիմանալու համար»... Բայցի այդ անյաջող պայմանները, որոնցով շրջապատուած էր եապօնացի կինը, դրա վրայ

աւելանում էր և այն, որ նա պարտաւոր էր հլու հնագան-գութեամբ հպատակուել իւր սկիսրօջ, սկիսարին և ամուս-նու բոլոր ազգականներին: Արդէն այդքանն էլ բաւական է իմանալու համար եապօնացի կնօջ ընտանիքում անցկացրած ծանր դրութիւնը:

Այժմ ընսենք թէ Կայքարի ուսմունքի մնկնութիւնը ինչ հայեացք ունի կրօնի վերայ, կամ թէ ամուսնական կա-պերի հեշտ խղումն ինչ ազդեցութիւն է ունենում եապօ-նացի կանաց բարոյականութեան վրայ,

Եւրոպայում առասարակ տարածուած է այն կարծիքը, որ եալոնացի կանայք թեթևամիտ, հեշտ ձեռք բերուող և անբարոյական են: Այդ բանը աւելի յամառ կերպով ընդու-նուած է մուսաստանում, որտեղ եապօնիայի մասին շատ խղուկ տեղեկութիւն ունին գրականութիւնից, իսկ նրա կա-նաց մասին զինուորական և վաճառականական նաւատորմիդ-ների ծովագնացներից են տեղեկութիւն ստանում, որոնք քիչ բացառութեամբ ծանօթանում են երկրի հետ, որպէս նաւա-հանգիստ քաղաքների, իսկ կանանց հետ, որպէս եապօնիայի —ներկայացչունու՝ որը զմայլեցնում է նրան թէյատրու-թում կամ մի այլ սրանից դեռ աւելի յարգի հիմնարկու-թեան մէջ:

Ոչ թէ միայն ծովագնացը, այլ ընդհանրապէս օտար ճանապարհորդը դժուար կարող է տեսնել եապօնացի կնօջը իւր իսկական ընտանեկան կեցութեան մէջ, նրա փակ կեանը անցկացնելու պատճառաւ: Դորա համար էլ դիմենք աւելի այն հեղինակաւոր եւրոպացոց և ամերիկացոց վկա-յութեան, որոնք Զամբերլէնի, Ալիսա Բեկոնի, Ռանսօմի և ուրիշների նման երկար ապրել են եապօնիայում, առիթ ու-նենալով աւելի մօտ ծանօթանալու եապօնացի կնօջ իսկա-կան կեցութեան հետ: Ահա թէ ինչ է ասում վերջին հեղի-նակը իւր հետաքրքիր յօդուածում նրանց բարոյականու-թեան մասին:

«Արդեօք ինչ պատճառներից է առաջ գալիս տուրիս-տների յաճախակի յարձակումն եապօնուհիների վրայ: Այս, ես կարող եմ գտնել միայն մի պատճառ զրանց արդարաց-նելու համար, աւաղ այն էլ ի վնաս իրանց: Այդ անբարոյ-ականութեան մասին տարածողները ամեն կերպ աշխատել են օգտուել դիպուածից, տեսնելով այն անբարոյականու-թիւնը, որի մասին նոքա խօսում են, նեղութիւն չպատճառե-լով իրանց ստուգի ձամարտութիւնը, որ այդ բաց նաւահան-գստեան անհամակրելի հիմնարկութիւնները յարմարեցրած են իրանց ճաշակին—քան եապօնացիների»... Աւելի ընդարձակ կերպով եապօնուհու ընաւորութեան լուսարանութիւնը մեկ-նուած է: Պիր Լոտի «Տիկին Խրիզանթէմ» հեղինակութեան մէջ, որի հերոսուհին տարարադարար նաւահանգիստ բա-ղաքի աղջկայ տիպերից բարձր չի, որին սխալմամբ օտա-րականները ընդունել են եապօնացու կնօջ ընաւորութեամբ: Հեղինակի տաղանդի շնորհիւ է որ այդ աշխատութիւնը վէպ անուն է կրում..., Ամերիկայում յայտնի երգի հերոսուհի Օ—իւչա—Սանը—նոյնպէս թէյատան աղջկայ տիպերից է....:

«Օտարական տուրիստի մասին պէտք է ասած, որ նա ընդհանրապէս ոտք է կոխում այդ երկիրը կանխակալ կարծի-քով և ոչ էլ առանց գաղտնի հրապուրիչ ցանկութեամբ եա-պօնուհուն հեշտ ձեռք բերելու համար, որի մասին նա լսել է վերոյիշեալ տեսակի աղբիւրներից:»

Հիմնանալով տեղական լեզուն նա պահանջում է ուղեցոյց և առաջին հարցը, որով գիմում է վերջինը—նոյնն է, ինչ որ տուրիստը լսել է միւս բոլոր երկրներում, երբ ոտք է կոխել նրա նաւահանգիստ քաղաքում: Ահա և նա սկսում է իւր ծա-նօթութիւնը եապօնացիների հետ նաւահանգիստ քաղաքի զու-արձութեան տեղերում:

Նա ուղեցոյցի առաջնորդութեամբ յաճախում է մի քանի յայտնի կիսաօտարացած թէյատրներ, տեսնում է գեյ-շաների ներկայացումներ, որոնք սովորել են իրանց խաղերը յարմարեցնել եւրոպացի հիւրի ճաշակին և գուցէ նա նոյն իսկ գնում է այնպիսի հիմնարկութիւններ, որի մասին նա

չի վատահանալ ասելու ոչ իւր տանցիներին և ոչ էլ ծանօթ-ներին:

Դորանից յետոյ ուղևորվում է Տօկիօ, որտեղ նա տեսնում է հոչակաւոր իօշիվարաները...

Տեսնելով նա այդ արատը թէն օրինակելի կարգապահութեամբ և վայելուչ ձեի տակ ծաղկեցրած, սկսում է «արտան-ջալ», բայց սա մոռանում է իրան հարց տալ, թէ իւր հայ-ըենիքում չկան արգեօք նոյնանման հիմնարկութիւններ, ո-րոնք աւելի խայտառակ և կեղտոտ են, քան Տօկիօի իօշի-վարան:

Այդ հիմնարկութիւնները շրջելուց յետոյ դժգոհ տու-րիստը ենթագրում է, թէ ինքը արդէն ամեն ինչ տեսաւ և կարող է համոզուած ասել, որ եապօնուհիները անբարոյա-կան են: Դորանից յետոյ նա դիմում է իւր կարգացածին, բայց ինչ է կարգացել նա եապօնուհու մասին, ի հարկէ ոչ այն, որ նա—ծնորաց անձնանուէր աղջիկ է, սիրող մայր, հաւատարիմ ամուսին, ժրաշան անտեսուհի, և տեղական պայմանների պահանջին համապատասխան լաւ կրթուած կին, նա չի կարգացել, որ եապօնուէին շատ համեստ, քնքոյշ զգացման տէր և պատուասէր է... Եթէ նա այսպէս մտածէր եապօնուհու մասին, զա աւելի արգարացի կլինէր և մօտ ճշմարտութեան... նա կարգացել է վայր ի վերոյ գրուածք-ներ, և երեակայում է եապօնուհուն, որպէս զուարձացնող մի խաղատիկին, որ ման է զալիս մարդկանց գրաւելու նը-պատակով, ծխում է ծխափող և նուագում սամիսնի վրայ, որ նա ոչ կրթութիւն և ոչ էլ զարգացում ունի, ոչ լուրջ զգացմունքներ և ոչ մի հասկացողութիւն բարոյականու-թեան մասին և թէ շատ հեշտ կարելի է պայմանագրով ժա-մանակաւորապէս հետը ամուսնանալ<sup>\*)</sup>): Քաջալերուած դրա-

\*) Մեր մէջ ամբածուած կարծիք է, որ ամուսնական պայմանա-գիրը ետպօնիայում ժամանակաւոր է, որը կատարեալ անհիմ է, այդ բանը կարելի է արգարացնել այն կանանց վերաբերմամբ, որոնք մարմ-նավաճառութեամբ են պարապում և «հարձ» դառնում:

նով տուրիստը դիմում է ուղեցոյցին, որը ներկայացնում է նրան մի «տիկնօջ», իսկ վերջինս խոստանում է ամուսնաց-նել նրան իր ունեցած «աղջկայ» հետ: Տուրիստին ասել են որ այդ «աղջիկը» սամուրաների դասակարգիցն է. թէն օտարականը նրա իսկական նշանակութիւնը չի իմանում, բայց այնուամենայնիւ մի մութ գաղափար ունի գրա մասին —որ դա մի ինչոր համակրելի բան է... Ահա և հարսանիրը կայացաւ: Օտարականից կարելի է ներողութիւն խնդրել, որ իւր պատահական ընկերունուն ընդունել է, որպէս բարե-ծնունդ տոհմի զաւակ. թէն նրա վարուեցողութեան ձեռքը և վարքը, ինչ հասարակութեան մէջ էլ գտնուի, համեստ և քա-ղաքավարի կլինեն, որը պէտք է վերագրել նրա ստացած կրթութեան: Եթէ այդ աղջիկը հոգով զգվում է իւր գերից —նա իւր կրթութեան սկզբունքի համապատասխան—հաւա-տարիմ է մնում իւր ժամանակաւոր ամուսնուն մինչև նրա պայմանագրի պատուիլը, որից յետոյ ինքը կստիպուի կըրկ-նել իւր ամուսնութեան փորձերը ուրիշ օտարականների հետ»...

Ահա թէ ինչ աղբիւրներից է հաւաքում իւր «հետազօ-տութիւնները» տուրիստը եապօնուհու անբարոյականու-թեան մասին:

«Բայց եթէ անաչառ դատենք այն բոլոր պայմանները, որոնց միջոցով կատարվում են այդ ժամանակաւոր ամուս-նութիւնները, շարունակում է Բանսօմը—կտեսնենք թէ դու-ցանից ով է աւելի անբարոյականը, նա, ով որ օգտվում է համեղ պատառից, թէ նա, որ իւր կամքի հակառակ վա-ճառվում է քանի թարմ և երիտասարդ է, իսկ վաղաժամ ծերութիւնից յետոյ մասնվում չքաւորութեան և արհասա-րանքի:

Եապօնիայում երկար ապրող եւրոպացուն շատ լաւ յայտնի կարող է լինել, որ այդ երկրում կանայք շատ քիչ է պատահում, որ իրանց ամուսիններին անհաւատարիմ գանուեն, թէն այդաեղ ամուսնալուծութիւններ շատ են պա-տահում, բայց դա առաջ է զալիս ոչ թէ կանանց անհաւա-

տարմութիւնից, այլ ուղղակի, ամուսնու պահանջի յարմարութեան համար: Ես հաստատում եմ, որ ամուսնական կեանքը, որոնք շատ ծանր պայմանների մէջն են դնում եապօնացի կնօջը—այնու ամենայնիւ նրանք ներկայանում են որպէս առաքինութեան տիպար, և կարող են օրինակ դառնալ նոյն իսկ քաղաքակիրթ երկիրների կանանց համար»:

Բանսօմի վաւերացման համապատասխանում են և Զամբերէնի և Ալիսա Բեկոնի կարծիքները: Ինչպէս ասում է վերջինս—«այն մօտ ծանօթութիւնը, որը ես ունեցել եմ եապօնացի կանանց և օրիորդաց հետ, համոզել է ինձ, որ շատ քիչ կանացը մի ուրիշ երկրում կարող են այնքան գիտակցօրէն կատարել իրանց սլարտքը ազնութեամբ և ինքնայտար կերպով, իրանց ըրջապատողներին բաւականութիւն պատճառելով, որքան եապօնութիւնները»:

Տուրիստների կարծիքը մի որոշ չափով նրանով է արդարանում—եապօնութիւնների թեթևամտութեան և ամօթխածութեան բացակայութեան վերաբերմամբ, որ նրանք շատ դէպքերում շատ սառն են նայում իրանց մարմնի մերկացմանը տղամարդկանց առաջ: Դորա համար բազմաթիւ փաստեր կան: Բայց այդ մասին, իսկական դատողութիւն տալու համար, պէտք է իմացած եապօնացու «տեսակէտը», որը շատ հիանալի կերպով բացատրում է Ալիսա Բեկոնը, որի եզրակացութիւնը, որպէս արևմտեան քաղաքականութեան կին-ներկայացչունու՝ վերին աստիճանի գնահատելի է մեզ համար:

«Իմ մանրազնին ուսումնասիրութիւնը եապօնացոց վայելչութեան հասկացողութեան մասին և այդ առթիւ ունեցած վիճաբանութիւններն զարգացած և ինտելիգենտ եապօնութիւնների հետ, հետեւալ եզրակացութեան են հասցըր ինձ, որ եապօնացու հայեցքի համապատասխան մարմնի մերկացումն համեստ և թոյլատրելի է, եթէ դա կատարվում է առողջապահական, մաքրութեան կամ այլ անհրաժեշտ գործի յարմարութեան համար: Բայց հակառակ դէպքում մարմնի մերկացումն, որքան էլ փոքր չափով լինի դա, եթէ դիտա-

ւորեալ նպատակով է կատարվում, շատ պախարակելի է:

Այդ բանը պատկերացնելու համար ես այստեղ կը յիշատակեմ տնային բոլորովին բաց լողարանները կամ բաղանիքները, մերկանգամ բանուրներին, ամառը զիւղերում շրջող կատարելապէս մերկ երեխաններին, և ընդհանրապէս թէթէ շորը, որը նոյն իսկ պատանիների համար շոգ ժամակ անհրաժեշտ է համարվում:

Երկրորդ պատկերի բացատրութեան համար, ես մատնացոյց կանեմ եապօնութիւնների այն սարսափը, որ արտայայտում են օտարերկեայ կանանց զգեստները տեսնելով, որոնք թէկ ծածկում են ամբողջ մարմինը, բայց առանձնապէս ցոյց են տալիս կազմուածքի մասերը, մեր ասելով մարմնի բարիձեռութիւնը, իսկ եապօնացոց տեսակէտով, գեղեցիկ կազմուածք ցոյց տալ, անհամեստութեան նշան է: Իսկ ինչ վերաբերում է պարահանդէսներում թեերը և կուրքը բաց դերիաններին, որոնք յատկապէս ժողովրդին ցոյց տալու նըպատակով են, այդտեղ արդէն եապօնութիւն, որը առանց քաշուելու տղամարդուներկայութեամբ լողարան է ընդունում, նա շիկացած երկաթի նման կլարմէր ամօթի զգացմունքից եթէ նրան առաջարկէն մի այդ ձեի զգեստով յայտնուել հասարակութեան առաջ, որը ընդունուած և սիրուած է եւրոպացի և ամերիկացի շատ համակրելի կանանցից: Մեր դատավճիռը շափականց շատապ կլինէր, եթէ որ եզրակացնենք, թէ եապօնական ազդի մէջ չի ծաղկած վայելչութեան զգացմունքը կամ թէ դրանց կանանց մէջ չկայ կանանցի համեստութեան բնազդ: Երբ մեզ հասկանալի է նրանց տեսակէտը, որով նրանք նայում են այդ բանին, ուրեմն լիովին պարզ են նրանց սովորութեանց անկանոնութիւնը և մենք իրաւունք ունենք ասելու այդ դէպքում մեր եապօնացի քոյրերին, որ նրանց մասին շատ յաճախ անիրաւացի են դատում»:

Բայց եթէ եպօնուհին մնում է իւր օրինաւոր կամ ժամանակաւոր ամուսնու մօտ, վայելու, համեստ ու ժուժկալ է իւր ամեն մի գերում, դա պէտք է վերագրել եապօնական ժողովրդի ունեցած ընդհանուր յատկութիւններին, որ աչքի են ընկնում իստութեամբ դէպի իւր պարտականութիւնները, զգաստութրամբ և իւր ունեցած յարգանքով դէպի պայմանաւորուած կարգապահութիւնը, և ոչ ինարկէ այն ստորադրեալ և դիմազուրկ կանանց գրութեան, որոնց եապօնացիք համարում են «նախասահմանուած երկնքի և երկրի օրէնքներով»։ Այդ գրութիւնն է անկասկած ազգել այդ երկրում այն լայնարձակ «օրինականապէս» պոսնկութեան ծաղկեցման, որի նմանը, գուցէ, դժուար թէ գտնուի մի որևէ ուրիշ երկրում։

Եապօնական ամեն մի քաղաք ունի իւր առանձին թաղը, որը հոչակուած է իւր վատ համբաւով, որտեղ գտընվում են իրաւագրերով վաւերացրած շատ մեծ թուով պոռնիկներ—«ժօրօններ»։ Կառաւարչական հսկողութիւնը այդ տների վրայ շատ խիստ է կատարվում, և այդ յայտնի չարիքը շափականց խիստ կանոններով է դեկավարվում։

Նոյն իսկ «ժօրօնների» պահողներն էլ աշխատում են որքան կարելի է—հրապուրիչ տեսք տալ թէ տներին, թէ դոցա կից պարտէզնրին և թէ ի հարկ է «ժօրօններին»։ Ահա դրանց շնորհիւ է, պէտք է ասած, որ այդտեղ բացակայում են հայոյանք, արբեցողութիւն, կոպտութիւն և մինչեւ անգամ անվայիշչութիւն, և մեր տեսած «ժօրօնների» թաղը թէ իւր արտաքինով և թէ կարգապահութեամբ կազմում է քաղաքի ամենալաւ թաղերից մինը։

Այդ հիմնարկութեանց ամենալաւ օրինակը վերոյիշեալ Տօկիօի հօշիվարան է, որի ծագման պատմութիւնը Զամբերէն այսպէս է նկարագրում։

Երբ իեղօ քաղաքը (նախկին Տօկիօ) XVIII դարի սկզբում յանկարծ փայլի և շքեղութեան տեղ դարձաւ, շտապեցին այնտեղ բաղդ որոնելու ամեն դասակարի մարդիք, նոցանում յետին տեղ չէին բռնում և վարքից թեթև կանայք։

Նրանք տեղափոխուեցին փոքրիկ խմբակներով, ինչպէս տեղացի պատմաբաններն են ասում, Կիոտոից, Նարից, Ֆուշիգու—և ամեն մի խմբակի մէջ գտնվում էին երկու կամ չորս գեղեցկունիցին, իսկ այդ բոլոր խմբակները պէտք է զիշէին թւով աւելի մեծ և աւելի գեղեցիկ խմբին, որը եկած էր Մօտո—հօշիվարայից, որի շնորհիւ իեղօ քաղաքի այն մասը, որտեղ նրանք բնակութիւն հաստատեցին, կոչուեցի հօշիվարա։ Սկզբում այդ շքեղ հիւրերը վարչական ոչ մի հսկողութեան չէին ենթարկվում և ուր որ ցանկանային, այնտեղ էլ կարող էին ազատ ապրել. բայց վերջը որոշուեցաւ պոռնիկների համար մի առանձին թաղ, որտեղ և տեղափոխեցին նրանց, իսկ նրանց միջի փոքրիշատէ հոչակաւոր անբարոյականի անունով թաղն էլ հօշիվարա կոչուեցաւ և ենթարկուեց կառավարութեան հսկողութեան։ Ահա այսպիսի կարգապահութեան ենթարկուեցին նաև եապօնական միւս քաղաքները, որի նպատակն է ազգատեղ քաղաքի փողոցները գիշերները վեճէրայի քրմուհու այն անհամեստ ծիսակատարման միտումից, իսկ միւս կողմից այն անզուսպ ձգտումից նրան ձեռք բերելու ցանկութեամբ, որոնք, ինչպէս այդ տարաբաղտարար լաւ յայտնի է պետերբուրգիներին, յաճախ փչացնում են եւրոպական քաղաքների ամենալաւ փողոցները։

Նախ քան այն ներգործական բողոքները, որ սկսեց Տօկիօի «օգնութեան բանակ» ընկերութեան բաժանմուքը հօշիվարայի տների դէմ, որի մասին մենք կխօսենք մեր յօդուածի Ա-դ գլխում, այդտեղ բնակչութիւնը չափականց խիտ էր և նոյն իսկ այժմս էլ բաւականաչափ շատ է, այնպէս որ 1903 թ. այդտեղ 6000 աւելի անառակ կանայք էին ապրում։

Հենրի Նորմանը իւր կազմած զբքում հօշիվարան հետաքրքիր նկարագրելուց յետոյ, սխալմամբ նրան զաղտնի հիմնարկութիւն է անվանում, այն ինչ ամեն մի օտարական, եթէ ուզենար ծանօթանալ նրա կազմակերպութեան հետ, աւելի քիչ դժուարութեան կենթարկուէր, քան մի ուրիշ վարչական հաստատութեան վերաբերմաբ։

Երբ ես մի քանի ժամանակով գտնվում էի Տօկիում 1903 թ. աշնան, ինձ անձամբ յաջողուց այցելել հօշիվարան և իմ տպաւորութիւններս կը հաղորդեմ ընթերցողներին: Ես ուղևորուեցի «Միտրոպոլ» հիւրանոցից չինրիկիշայով իմ ուղեկից ընկերոջ և թարգմանի հետ: Ճանապարհը բաւական երկար թուաց մեղ. հոկտեմբերեան թրեկոն, թէև մի փոքր մութ և խոնաւ էր, բայց այնպիսի մեղմութեամբ էր շնչվում, որ մենք մեծ բաւականութեամբ հետաքրքրվում էինք եապօնական մայրաքաղաքի այդ կենդանի և եռուն փողոցներով: Լուսաւորուած էին երեմն էլեքտրական, երեմն էլ գոյնզգոյն թղթից շինած լապտերներով: Այդ վերջիններով աւելի առատութեամբ լուսաւորուած էին պահպոկների և թէյատների մուտքերը:

Թէև քաղաքի կենտրոնից որքան հեռանում էինք, այնքան աւելի և աւելի աղօտանում էր լուսաւորութեան չափը, բայց յետոյ հեռուից մեր առաջ երևաց լոյսի մի մեծ օազիս, որը քանի առաջ էինք գնում, այնքան աւելի էր լուսաւորվում... .

Ահա և դա էր հօշիվարան: Մուտքի հոյակապ, երկաթեայ բարձր գուռը վկայում էր այդ երկը ճարտարապետութեան բարձր աստիճանի զարգացման մասին. նա շինած էր շերտաւոր երկաթից և զարդարուած փոքրիկ դրօշակներով և թղթեայ լաստերներով: Մեր հանդէպ եկաւ ոստիկանը և առնելով ձեռնափայտը ու հովանոցները յանձնեց մեր կառավարներից մինին, իսկ միւսը յայտնելով, որ ինքը լաւ տեղեակ է հօշիվարայի փողոցներին և կարող է նոռից մեզ վերադարձնել նոյն դռան մօտ հակառակ կողմից, և իրաւունք ստացաւ ուղեկցել մեզ:

Մենք մեծ հետաքրքրութեամբ մտանք այդ զարմանալի թաղը և խառնուեցինք զբօնող բազմութեան հետ, որի մէջ կային և կանայք երեխայոց հետ... Բազմութիւնը շատ կենդանի շարժման մէջ էր թէև, բայց աչքի էր ընկնում իւր վերին աստիճանի քաղաքավարութեամբ և կարգապահութեամբ:

Փողոցի երկու կողմերում շարուած էին երկու, նոյն իսկ երեք յարկանի աներ, որոնք իրանց թէ գեղեցկութեամբ և թէ մեծութեամբ աւելի աչքի էին ընկնում, քան քաղաքի միւս թաղերի աները: Ցածի յարկի աների փեղկերի կամ թէ ճիշտն ասած, ամբողջ պատերի տեղ շինուած էին գեղեցիկ մետաղից և հնդկեղեգնից հիւսուած շրջանակներ, որոնք այդ յարկի բնակարաններին տալիս էին մեծ վանդակների տեսք:

Նրանցից ամեն մինում բարձերի կամ երփներանդ փոքրիկ գորգերի վրայ, որոնք փոռւած էին ձիւնափայլ խսիւրի վրայ, նստած էին ութը կամ տասը հոգի աղջկերը, որոնց առաջ զրուած էր կրակով լի, մոխիրով երեսը ծածկուած «խիբաչի» (մանղալ), իսկ միքանի ուրիշ վանդակներում—մինչև տասներկու հոգի, որոնց վրայ առաստաղից ցոլացրած էին էլեքտրական լոյսի ճառագայթներ, փողոցից անտեսանելի կերպով: Հագնուած էին եապօնական հին ճաշակով և աչքի էին ընկնում իրանց թանգագին զործուածքներով (աստիճէ և մետաքս) ամենաքնքոյշ ֆանտաստիկական նկարներով: Դէմքերը ներկած էին հմուտ կերպով սնկոյրով և կարմրաներկով—սպիտակ ճակատից մինչև վարդագոյն այտերը և փոքրիկ բերանի ալ շրթունքները, որոնց սուր հակապատկերն էին կազմում սպիտակ ատամները: Խիտ և սկ մազերը սանրուած և օծուած էին խնամքով և ամրացած արձաթեայ և կրիայի սոկրից շինուած քորոցներով և սանրերով, որոնք նրանց գլխին տալիս էին ֆանտաստիկական տեսք: «Վանդակների» պատերը զարդարուած էին բրոնզով և լաքով յղկած հարթաքանդակ օրմնանկարներով, որոնք աւելի աչք ուրախացնող տպաւորութիւն էին ի ողնում, քան մի որ և է պատմական կամ կենսական բովանդակութիւն պարունակում: օրինակ նրանցից մէկի վրայ պատկերացրած էր որսորդութիւն վազող եղջիւրների ետելից, երկրորդի վրայ մի որ և է տօնական հանդէս, երրորդը—իշխանազունների ընդունելութիւն, և այլն և այլն:

Այդ աղջիկներից միքանիսը ծխում էին արձաթեայ

գեղեցիկ ծխափողներով, յաճախ թափ տալով նրանից մոխիր ու փոխարէնը պտղունցներով ծխախոտ լցնում. միւսները զբաղուած էին զանազան օրինակների ասեղնագործութեամբ մետաքսի և ուրիշ կտորների վրայ, իսկ ումանք մանրանկար հայելիների առաջ կանգնած մտադրապ կերպով, առանց ուշադրութիւն դարձնելու «վանդակների» մօտ հաւաքուած հանդիսատէս բազմութեան վրայ, ուղղում էին դէմքերի վրայ եղած ներկերը, վրձինի ճարտար և նազելի շարժմունքներով... Շտապելու կամ ամօթխածութեան ոչ մի նշան չէին ցայց տալիս նրանք իրանց արտաքինը զարդարելու ժամանակ, որը պահանջում էր ոչ միայն իրանց արհեստը, այլ և ընդհանուր երկրի սովորութիւնը:

Այդ դէպքերում, երբ մենք ընկերոջ հետ կամ հանդիսատեսներից մի ուրիշը ուշադրութիւն էր դարձնում գեղեցկուհիներից մէկի կամ միւսի վրայ և իւր տպաւորութիւնը հաղորդում նրանց մասին ընկերոջ կամ թէ մօտ եղողին, նա համարեա թէ միշտ տիրոջ պատուէրով, որը ընականաբար ուզում էր մեծ թուով հիւրեր ունենալ—մօտ էր վազում վանդակի մօտ և դուրս հանում այնտեղից իւր վայելչազեղ ձեռքը և սիրալիր կերպով մի ինչ որ թոթովում անշոշտ պէտք է, որ զա հրաւիրելիս լինէր: Այդ ժամանակ նրա ձեւը այն աստիճանի համեստ և վայելու էին, որ մարդ ակամայ դժուարանում էր կապել այդ արարմունքը նրա արտասովոր կացութեան հետ... Եւ ինարկէ, շատ դէպքերում տիրոջ գոհացնում էին գրաւելով մէկին, իօշիվարայի վերին յարկի փակ փեղկերի յետել, բաւականութիւն տալով հիւրի բարեկամական գգուանքներին...

Յաճախ էր պատահում ականատես լինելու և այնպէսի պատկերներին, որտեղ երիտասարդ եապօնացին կամացուկ խօսակցում էր իւր առաջ վանդակի ետել կանգնած աղջկայ հետ և նրանց դէմքի արտայայտութիւնից անկարելի էր չնկատել, որ նրանք շատ մտ ծանօթ են իրար և թէ դրանց աւելի ձգուում էր բանաստեղծական սէրը, քան այն նպատակը, որին դրականապէս ծառայում է իօշիվարան...

Զկայ մի բռնի օրէնք, որը կարողանար խեղտել բոլորովին մարդկացին բնական զգացմունքները:

Այդ «վանդակների» մէջ կային և այնպիսիները, որոնք զանազանվում էին միւսներից պատերի վրայ եղած աւելի շքեղ զարդարանըներով և առանձնապէս վայելչազեղ ու թարմը բնակչուհիներով: Այդպիսի վանդակների առաջ, նըրանց ամբողջ երկարութեամբ դրուած էր աղիւսածկ փայտէ պատնէշ, որը արգելում էր մօտենալ վանդակին: Այստեղի հատող աղջկերքը ազատ էին տիրոջ պատուէրներից մօտենալու մեղ և միայն հեռուց նայում էին մի տեսակ յաղթանակող, բարկացկոտ և նոյն խակ արհամարուզ ժպիտով... Թարգմանի միջոցաւ տեղեկացայ, որ իօշիվարայի այդ աներում ապրողները, զանազան տեղերից հաւաքած աղջկերք էին, որոնց «գնել է» Տօկիօի արիստոկրատ երիտասարդութիւնը, և թէ դոցա գգուելու իրաւունքը միայն այդ երիտասարդութիւնն ունի:

Այդ «ընտրեալներից» մինը մինչև հիմա էլ կենդանի կերպով տպաւորուած է յիշողութեանս մէջ. նրա երիտասարդ դէմքը աչքի էր ընկնում իւր նուրը և գեղեցիկ դիմագծերով և վերին աստիճանի գրաւչութեամբ. նրա նոյն րուպէի նստած ձեից, երբ ևս նայում էի նրան, երեւում էր, որ տիրուր մտածողութեան մէջ էր գտնվում: Գլուխը խոնարհուել էր ցած, ձախ ձեռքը անօգնական ընկել էր ծնկների վրայ, աշ ձեռքով պինդ սեղմել էր սամիսենի կոթը, խակ կարուած սիմը, աւելի սաստկացնում էր սրտաշարժ տպաւորութիւնը, որը արտայայտում էր աղջկայ տիրուր դէմքը... Իմ գլխում ծագեց մի միտք, մօտ կանչել ինձ անյայտ զրամայի գոհին և թարգմանի միջոցաւ, եթէ ոչ միխթարական, գոնէ ցաւակցական խօսքեր ասել նրան... Բայց հէնց նոյն ըոպէին նա շրջուեց դէպի իմ կողմը և նրա—կարծես իր հոգու մէջ թափանցող հայեացքում, և ոչ իր շրջապատով,—մեծ և սկաչերում նկատեցի այն աստիճան սրտի կսկիծ, որ չվստահացայ կատարել իմ մտադրութիւնը, վախինալով՝ աւելի վշտացնել նրան իմ անսպասելի ցաւակցութեամբ, որը կա-

րող էր նրան թուալ սովորական հետաքրքրութիւն կամ աւելի փատը: Առասարակ Իօշիվարա այցելողներին ցաւակցութիւնը չի մղում այնտեղ... Մենք առաջ գնացինք շարունակ այդպիսի վանդակների մօտով, անցնելով տասնեակ, հարուրեակ նոցանից, որոնք մինչև փողոցի երկարութիւնն էին ըռում, որտեղ առաջուայ նման լիքն էր պատշաճաւոր բազմութեամբ... Նրանց մէջ ոչ թէ միայն հարրածներ չկային, այլ և հասարակութեան խաղաղութիւնը չէր խանգարվում կոպիտ հրումներով կամ թէ սուր ճշոցներով...

Ոչ մի այդպիսէ բան չէր լսվում նոյն իսկ այդ զուարձեցնող տների վերին յարկի փակ փեղերի յետեից, որտեղից փողոց էին համում աւելի մելամաղօտ, քան սամիսնի հնչիւնները...

Թաղաքի փողոցները մեզ բոլորովին մութ թուացին, երբ դուրս եկանք Իօշիվարայից, և սուր հակապատկեր էր ներկայացնում այդ մթութիւնը լոյսով հեղեղուած մեր նոր թողած տեղին, «որի հոգին շնչում էր սև յանցանքներով», որտեղ նրա արտաքին գեղեցկութեան հետ ներքուած ճմլվում է մարդու սիրտը խղճի խայթից... Արևմտեան երկրների բաղաքակըրթութեամբ հպարտացող տղամարդը արդեօք նոյնանման թեթև չի վերաբերվում դէպի կնօջ վիճակը, որի քմահաճոյքի համար ստեղծուած են այնքան ուրախ ստրկունիներ, որ եթէ հաւաքեն միասին, ամեն մի մեծ քաղաքում կը կազմէին անշուշտ Իօշիվարայի չափ բնակչունիներ, թէկ ոչ Իօշիվարի փայլմունքով...

Տօկիօի Իօշիվարան իւր գոյութեամբ շատ խիստ և անբարոյական հիմնարկութիւնն է: Բայց չի կարելի չխռուսովանուել մինոյն ժամանակ, որ իւր արտաքին կազմակերպութեամբ նա պարզ արտայայտում է եապօնացոց ունեցած գեղարուեստական ծաշակը, որը հասցրած է ծայրայեղ իշպէալական մշակման, մանաւանդ այն դասակարգի, որը պաշտպան է հանդիսանում աէրութեան գործած այդ յանշանքի վերաբերմամբ:

Թէկ եապօնիալում նոյնպէս «ժօրօ» արհեստը չի հա-

մակրվում, բայց և հասարակական կարծիքը նրան այնպէս չի դատապարտում, ինչպէս որ այդ լինում է բրիտանայ երկրներում: Դորա գլխաւոր պատճառը կայանում է նրանում, որ այդտեղի կանաքը ենթարկվում են դրան ոչ ինքակամ ընտրութեամբ կամ թէ հեշտասիրութիւնից գայթակղուած: Նրանցից շատերը իրականապէս ստրկունիներ են կամ ակամայ ամուսնուց բաժանուելուց յետոյ, կարիքից ստիպուած ընկել են այդտեղիկամ մասուկ հասակում ծախել են դոցա «ժօրօների» պահողների վրայ, որոնք նրանց կրթել և պատրաստել են այդ խայտառակ կեանքի համար, և դոքա ոչ մի տեղեկութիւն չունեն մի ուրիշ կեանքի պատրաստականութեան մասին: Վերջապէս պոռնկունիներից մի քանիսը գուցէ և ինքնակամ և զիտակցօրէն զոհել են իրանց, բայց այդ արել են ոչ իրանց անձնական բաւականութեան համար, այլ նրա պատուի, որին սիրել և որի համար խայտառակութեան գնով միջոց են գտել նրա կեանքի գոյութեան համար, կամ ազատել են նրան մի որեւէ խայտառակութիւնից: Եսպօնական գրականութիւնը լիքն է այդ բովանդակութեամբ վէպերով, որտեղ մեծ դեր է խաղում Իօշիվարան: Սովորաբար այդտեղ հերոսունին իրան արդարացնելու համար գտնում է մի ելք, այն է խոնարհումն ծերացած ծնողների սիրոյ զգացման առաջ, կամ յափշտակուել է մի որ և է անպիտանի ձեռքով և ծախուել այդտեղ: Պատմութիւնը յաճախ վերջանում է նրանով, որ աղջիկը թէկ գրավիում է այդ միջավայրով, որտեղ թէկ արտառուած է նրա մարմինը, բայց մաքուր և անձեռնմխելի է մնացել ինքը, չնորհիւ մի որ և է հարուստ երիտասարդի կամ թէ ուղղակի բարի մարդկանց: «Այսպիսի պատմութիւնները, շատ պարզ է՝ կարող են պակասացնել ողջախոհութեան չափը, — ասում է Ալիսա Բեկոնը — մի երկրում, որտեղ քիչ տեղ կայ անմեղ վէպի ծաղկեցման համար, երեակայութիւնը պէտք է փնտրի իր համար նիւթ այնտեղ, որտեղ նա կարող է»:

Նոյն հեղինակը եապօնիալում ամենայայտնի պատմական գրամաներից մինի բովանդակութիւնը մեկնելով, որի

հերոսուհին յօժարակամ իրան ծախում է զուարձութեան տանը, ամուսնու պատիւը աղատելու համար փող ձեռք բերելու, նկատում է. «եապօնացի կանայք կարդալով այդպիսի պատմութիւններ, գգում են խորին ցաւակցութիւն դէպի խեղճ կինը և սարսափի, դէպի մի այդպիսի զոհաբերութիւն, որը հարկադրել է նրան մի այդպիսի քայլի, որը նոյն խեղճապօնացիների տեսակէտով կնօջը ձգում է անեղը անգունդ: Բայց եապօնուհիները նրան չեն պախարակում մի այդպիսի վարմունքի համար. նրանք նրան չեն մերժի ընդունել իրանց տանը, որոնք չնորհիւ աւելի բարեբաղդ հանգամանքների ազատ են մի այդպիսի ծանր զոհաբերութիւնից:

Աւասիկ այդպիսի հասկացողութեան մէջ է թագնուած եապօնացու բարոյականութեան էական տարբերութիւնը օտարականից, որը յանախ վեցինները չեն կարողանում հասկանալ ոչ թէ միայն եապօնիայի հետ վայր ի վերոյ ծանօթանալուց, այլ և այնտեղ երկար ապրելուց յետոյ: Այդ անհասկացողութիւնն է, որ գրանցից շատերին կարծել է տալիս, որ եապօնացի կանանց մէջ չկայ մաքրութիւն և համեստութիւն: Այդ միենոյն անհասկացողութիւնն է, որ օտարականին ենթագրել է տալիս եապօնուհու մասին ամենաստոր մտքեր և այդ մտքերը նրա վարքի մասին համոզմունքով ընդունել, առանց քննիլու, եթէ դա վերաբերուելիս լինէր նոյն խեղ ամենամաքուր, բարձր զարգացած մի յարգելի եապօնուհուն:

Մեր օրիորդաց թելադրում են, թէ ոչ մի բան այնքան վատ չի կարող լինել, որքան անձնական անպատճութիւնը, և դա կատարեալ համապատասխանում է նրանց կանացի բնադրին: Մենք «առաքինի կին» յատկանիշով չենք ենթադրում թէ քաջ է, ընդունակ է ինքնազոհման, հերոսական ձգտումներ ունի, այլ ուղղակի հասկացվում է, որ նա իրան չի թոյլ տայ անձնական անպատճութիւն: Մեր հասկացողութեամբ ողջախոնութիւնը կնօջ համար ամենամեծ առաքինութիւնն է, որից յետոյ միւս բոլոր առաքինութիւնները երկրորդական տեղ են բռնում:

Ահա և դա մեր տեսակէտն է բարոյականութեան վերաբերմամբ, որին առաջին տեղն ենք տուել: Հրաժարուենք մի վայրկեան դրանից և կշռենք եապօնացի օրիորդի բարոյականութեան ձեակերպութիւնը:

Նրան ամենավաղ հասակից մինչև հասուն տարիքը շարունակ թելադրում են, որ հնագանդութիւնը և անձնագոհութիւնը ամենամեծ առաքինութիւններն են, որոնց պէտք է պահպանել ուրիշ աւելի փոքր նշանակութիւն ունեցող առաքինութեան զոհաբերութեամբ:

Նրան ասում են, որ հօր կամ ամուսնու բարիքի համար պէտք է պատրաստ լինել հանդիպելու ամեն մի վտանգի, տանել ամեն տեսակ անպատճութիւն, կատարել ոճրագործութիւն, հրաժարուել իւր ունեցած գանձից: Նա պէտք է ընդունի, որ այն, ինչ որ պատկանում է միայն իւր անձնականին, ոչ մի արժէք չունի, համեմատած իւր տուած այն օգտին, որը ինքը զոհաբերում է իւր տիրոջը, ընտանիքին կամ թէ հայրենիքին: Աւելացրէք դրա վրայ հասպանդութեան և հաւատարմութեան պարտականութիւնը ինքնամուացութեան աստիճանին հասցրած և ձեր մտապատկերը կը փոխուի, միւս բոլոր առաքինութիւնները ձեզ կթուան երկրորդական: Որովհետեւ եապօնացի կինը որոշ հանգամանքը ներում կզոհի անձնական առաքինութիւնը հօր կամ ամուսնու պատուի համար, արդարացի կինի արդեօք բոլոր եապօնուհիներին անժուժկալ համարել: Նրա համար այդ զոհաբերութիւնը ամենաազնիւ վարմունքն է, որը միայն ինքը կարող է երեակայել և նա վճռում է անել այդ քայլը ձիշտ այնպէս, ինչպէս, որ նա կերթար ամենասարսափելի մահուան հանդէպ, նրա համար, որին ինքը միրում է և որին հնազանդուելը իրա պարտականութիւնն է համարում: Փորձենք այժմ թափանցել այդ տարբեր տեսակէտների էութեան մէջ՝ նախ քան մեր եղբակացութիւնն արտայայտելը և աշխատենք պատճառները գտնել, որոնք գործողութեան հիմնաքարն են կազմում, նախ քան այդ գործողութեան մասին դատելը...»:

Բայց այդ պատճառներ գտնելը շատ դժուար չի.  
պարզ է, որ դա թագնուած է կոչ իրաւագրկութեան մէջ,  
որը շատ պարզ և որոշ արտայայտուած են կայքարի «Մեծ  
Ուսման» մէջ:

Որ աստիճան էլ Իօշիվարայի բնակչուհները և նրանց  
արհեստակից քոյրերը անհամակրելի գերի մէջն են գտըն-  
վում, այնու ամենայնիւ նրանք այդ հարցում համապատաս-  
խանում են միայն եաւանացուն յատուկ զգայուն բնութեան:  
Ի հարկէ անկարելի է, որ նա կոչ վերաբերմամբ չունինայ  
և աւելի բարձր հարցեր հոգեր և մտաւոր տեսակէտից;  
Բայց նա ի՞նչ տեսակէտով էր նայում կոչ վրայ եավօնիա-  
յի յեղափոխութիւնից առաջ, նա կոչ և քրօջ ընկերակցու-  
թիւնից օգտվում էր, որպէս ստրկուհուց աղախնից, իսկ  
գիշաների—հրապուրչութեամբ»:

Շրեղերը իւր «Եավօնիա և եավօնացիները» հեղինա-  
կութեան մէջ այդ գասակարգի կանանց հետեւեալ կերպով է  
բնորոշում: «Այդ գասակարգը բացի գէյշա լինելոց, տալիս  
է իւր երկրին ամենատաղանդաւոր վիպասանուհներ, բա-  
նաստեղծուհներ, նկարչուհներ, երաժշտուհներ, երգու-  
հներ և Տերպսիխորի սպասուհներ: Դրանք եավօնացինե-  
րի մէջ զարթեցնում են սէր գէպի երաժշտութիւն, երգեցո-  
ղութիւն, տօէզիա և զուարձացնում են նրանց իրենց ժիր և  
զուարթ պարերով և զանազան զուարձացնող միջոցներով,  
որոնց մէջ անց են կացնում եավօնացիները իրանց կեանքի  
մէծ մասը»:

Անգլիացի մատենագիր Դուգլաս Սլադէնը այսպէս է  
ասում իւր գրքում. «Եավօնացին գէյշայի վրայ նայում է որ-  
պէս կոչ դասի ուրախութիւնների մարմնացման վրայ, ճիշտ  
այնպէս, ինչպէս Պերիլլէսի ժամանակ աթէնացիներն էին  
նայում հետերի վրայ»:

Մանօթանալով գէյշաների կեանքի հետ թէ բաւական  
հարուստ գրականութեան միջոցով և թէ անձամբ եավօնիա

եղած միջոցիս, գտնուելով նրանց տիպիքական ներկայաց-  
չուհիների շրջանում, ևս ենթադրում եմ, որ գէյշաների գոր-  
ծունէութեան էութիւնը և նրանց նշանակութիւնը եապօնա-  
կան կեանքի մէջ, բաւականաչափ ընդարձակօրէն որոշվում  
են առաջ բերած, բազմաթիւ ապացոյներով:

Գէյշան իւր արհեստին նախապատրաստվում է—սովորե-  
լով պարեր, երգեցողութիւն, երաժշտութիւն, նոյնպէս և հիւ-  
րեր ընդունել և նրանց ծառայելու, կոկ խօսակցութեան  
ձևեր, այսինքն այն ամենը, ինչ որ կարող է տղամարդուն  
հրապուրել: Այդ բոլորը սովորում են զրա համար յատկաց-  
րած հիմնարկութեան մէջ, որը սովորաբար կանայքն են  
պահում և կոչվում է «գէյշա—իեա»:

Գէյշա պատրաստող աղջիկ երեխային ծնողները տա-  
լիս են յաճախ այդտեղ 7—8 տարեկան հասակում, վճարելով  
դորա համար շատ չնչին գումար, այն է 20—50 իեն:

Նա 3—4 տարուայ ընթացքում այնպիսի յառաջա-  
դիմութեան է հասնում, որ այնուհետև աղատ կարելի է  
դուրս բերել նրան հասարակութեան առաջ, թէ միայն իր  
մեծ ընկերուհիների հետ. մինչև կատարելագործուելը ա-  
պագայ գէյշան կոչվում է «մայկօ» կամ «հանդ—իւ», որ  
կնշանակի «կիսամագործ»: Իսկական գէյշա նա լինում է  
16—17 տարեկան հասակում: Եթէ նա խելացի, ուրախ և  
տաղանդաւոր է, շուտով հոչակվում և համնում է այնպիսի  
բարեկեցութեան, որը նրան հնարաւորութիւն է տալիս փըր-  
կանքի գնով աղատուել մշտապէս արտօնատիրոջից, միա-  
նուագ վճարելով 500—1000 ը.

Եավօնիայի բոլոր քաղաքներում գտնվում են բաւական  
թուվ գէյշաներ, որոնք փոքր իշատէ պահպանել են հին սո-  
վորութեան ձևերը, սահաւանդ կիոտում—Կախկին եավօ-  
նիայի մայրաքաղաքում, ուր որ այժմս գտնվում է մի հիմ-  
նարկութիւն, որը կոչվում է «Ազգային պարերի հեմարան»  
(և կարծեմ պահպում է ժողովրդի հաշուով): ահա այդտե-  
ղից և գուստ են զալիս գէյշա—դերասանուհիներ: Նրանք  
անցնում են այդտեղ ի միջի այլոց այսպէս ասած կլասիքա-

կան շարժմունքներ, տաղաչափութիւն և այնպիսի հերոսների պատմութիւններ, որոնք եապօնական ժողովրդի յեղափոխութեան դարեցը ջանում մի որեէ դեր են կատարել: Այդտեղ առաւելապէս աշխատում են ներշնչել գեղեցկի, սիրոյ և բանաստեղծութեան զգացմունքներ և զարգացնում են նրանց մէջ յանպատրաստից խօսելու շնորքը պատմական անցըերի և հերոսների մասին: կամ թէ ում մէջ նկատվում է սէր դէպի պօէզիա, աշխատում են զարգացնել նոցա մէջ այդ հակումը: Պէտք է ասած, որ գէյշաների գործունէութեան շրջանը բաւական ընդարձակ և զանազանակերպ է: Նրանք գործում են թէյատներում կամ պանդոկներում՝ զուարձացնելու այնտեղի յաճախողներին, երբեմն թատրոններում ներկայացնելու, կրօնական կամ մի որ և է ուրախ տօնախմբական հանդէսներում և մասնաւոր տներում: Կարելի է ասել, որ ընդհանրապէս եապօնական ամեն մի ունեոր հնաւանդընտանիք այժմս էլ մի որ և է պատշաճաւոր հիւրասիրութիւն առանց գէյշայի մասնակցութեան չի կատարում. վերջինի պարերը, երաժշտութիւնը կամ թէ սեղանի սպասաւորելու հրաշալի ձեերը, հիւրասիրութեան զարդն են կաղմում:

Գէյշաների պարերը «շատ հրապուրիչ» վայելուչ և համեստ են. մարմնի անդամների և ձեերի շարժուածքները, թէ գեղարուեստական տարազը և թէ բազմատեսակ պարերը իրանց առանձին զգեստներով—կախարդական տպաւորութիւն են թողնում հանդիսատեսի վրայ—և եապօնիայում ամենամեծ բաւականութիւններից մէկն է կաղմում տեղացիների համար»—ասում է Ալիսա Բեկօնը:—Նազելի և գեղատեսիլ աղջկերը, ծիրանագոյն, երբեմն գեղնագոյն զգեստներով, իրանց ձկուն մարմի շարժուածքներով երբեմն նմանում են աշնան քամուց օրորուող չինարի տերեներին. երբեմն յետ ծալած կիմօնօի տակից երեացող գեղեցիկ կարմիր շրջազգեստով, նրանք ներկայացնում են զիւղից շուկայ ձու տանող գեղջկուհուն, երբեմն մի որեէ պատմական զօրավարին զէնքերով զարդարուած: կամ վերջապէս կնճիռներով և սպի-

տակ մազերով, զինուած կրակախառնիչներով և խոզանակներով, ներկայացնում են բարի ծերունու և պառաւի պարերը, որոնք եապօնիայում այնքան մեծ գեր են կատարում նկարչութեան մէջ: Պարերից յետոյ, որոնք այնքանմեծ բաւականութիւն են պատճառում ու հմայում հաղիսատեսներին իրանց գեղեցկութեամբ և շնորհալիութեամբ, գէյշաները մըտնում են այն սենեակը, որտեղ պատրաստուած է լինում ընթրիքը և հիւրասիրում սակէի շնով իրանց ժամանակաւոր հիւրերին կատակելով ու ծիծաղով: Ուրեմն զարմանալի չէ, եթէ այստեղ երիտասարդը սովորականից աւել խմի, որից յետոյ նա զուրս է գնում թէյատնից ուրախ տրամադրութեան ներքոյ, գերուած փայլող աչքերով մի որ և է գերի, որը զուարձացրել է նրան ամբողջ երեկոյ»:

Զնայելով այդքան մօտ երեացող յարաբերութեան, որ ունեն հիւրերը երգչուհիների հետ եապօնիայում խնճոյքների ժամանակ, այնուամենայնիւ նրանցում պահպանվում է վերին աստիճանի խիստ կարգապահութիւն: Եապօնացին այստեղ, նոյն իսկ զինուցած ժամանակ, չի վստահանայ ամենափոքր մտերմական խօսք ասել ուրիշի ներկայութեամբ երիտասարդ աղջիկներից և ոչ մէկին. Նա երբէք չի մոռանայ, որ խնճոյքում «գէյշան քնքրոյշ ծաղկի գեր է կատարում, որը միայն աչք ուրախացնելու համար է, բայց մօտենալ նրան, անկարելի է»: Իսկ եթէ եւրոպացի տուրիստները իրանց երբեմն թոյլ են տալիս չափազանց առատ մաերմական խօսքեր ուղղել գէյշաներին կամ սպասաւորուէիներին, իսկ նրանք տանում են սրանց ազատութիւնը ժպտալով—դա քաղաքավարութիւնից սափուած են անում,—իսկ հոգով զգուում են օտարականների յանդգնութիւնից:

Գէյշաների երաժշտութիւնը, որ նուազում են սամիսէնի (գիտարի նմանողութեամբ) և կօտօի (ցիտրի տեսակ) վրայ, ախորժելի է նոյն իսկ եւրոպական լսողութեան համար, բայց դրա վոխարէն վերջինը բոլորովին գոււարութեամբ կտանի նրանց ամենափոքր երգեցողութիւնն անգտմ: Սուր և ճացող ձայները կարծես հիւանդ և սղմուած

կոկորդից են դուրս գալիս և յեշեցնում են ծղրիտների արձակած ձայները։ Նրանք այդ եղանակները ձեռք են բերում ահագին աշխատանք գործ դնելով և ֆիզիկական մեծ չարչարանքով։ Դրանք բնական չեն և չպէտք է վերագրել եապօնական ցեղի յատկութեան, այդ բանը կարող է որոշել նա, ով որ երկար ապրել է եապօնիայում, որտեղ թէ երեխայոց և թէ չափահասների խօսակցութեան եղանակը այնքան մեղմ և դիւրեկան է։ Ալիսա Բեկոնը ենթադրում է, թէ այդ երկրի երգեցողութեան նախահայրերը սկզբնական ձայնանիշները վերցրել են ոչ թէ թռչունների երգերի եղանակից, այլ ծղրտացող, ճրթճրթացող ճպուռների և ծղրիտների կամ նոյնանման միջանների ծղրտացից, որոնք յայտնի են այստեղ «սեմի» անունով։ Պէտք է ենթադրել, որ դա իրաւացի է, որովհետև տյդտեղի ժողովրդական երգերում շատ յաձախ է յիշվում ծղրտի անունը։ Նրանցից մինը օրինակի համար այսպէս է երգվում։

«Չայնը խզուեց սրտի ուժգին աղաղակից,  
Մնաց միայն կեղել սեմի»։

Կրթուած եապօնացու համար գէյշայի ոչ թէ երգեցողութիւնն և երաժշտութիւնն են միայն գնահատելի, այլ և նրա կենդանի, աշխոյժ խօսակցութեան ձևը, որը նա իմանում է տանել բովանդակալից, սրախօս և բանաստեղծական եղանակով։ այդ առիթով Չամբերլէնը հետեւան է ասում. «գէյշաներից մի քանիսը իրանց տաղանդով ձեռք են բերում մեծ հոչակ և փառք, որոնք առիթ են դառնում նրանց փայլուն ասպարէզի. շատ յայտնի գործիշներ հրապուրուել են գէյշաներով և իրանց յարգանքը դրականապէս ցոյց են տուել հետները ամուսնանալով... Աւելի նրանց խօսակցութիւնն է օգնում մի այսպիսի բաղդատոր վիճակին համնելու, քան իրանց երգերն ու պարերը։

Իսկ ինչ վերաբերում է գէյշայի բարոյականութեան, ահա ինչ ենք կարդում անաշառ քննադատունու մօտ։

«Գէյշաներ թէև շատ հրապուրիչ են, բայց բարոյակա-

նութեան կողմից անդրդուելի չեն։

«Նրանց կրթութեան ծրագրի մէջ ձեւելը աւելի բարձր են կասուած քան բարոյականութիւնը։

«Նրանցից շատերը մեծ ուրախութեամբ թռղնում են իրանց պարերը թէյատրներում և հարճ դառնում մի որևէ հարուստ եապօնացուն կամ օտարականին, ոչ մի վատ կարծիք չտանելով իրանց արածի մասին, և ուրախ վերադառնում են իրանց սովորական գործին, երբ լրանում է պայմանագրի ժամանակը, կամ թէ անակնկալ։

Պէտքէ ասած, որ գէյշան առհասարակ փչացած աղջիկ չի լինում, բայց որովհետև նրա կեանքը անցնում է զանազան վատաբարոյ և չարիքների հոսանքով, ուստի նա էլ ենթարկվում է այդ հոսանքին և շատ անգամ նոյն իսկ սամանից անցնում։ Կան և նրանց մէջ չփչացածներ։

Գէյշաները այնքան թռվիչ և շլացնող են իհարկէ ոչ իրանց զարգացողութեամբ և բարոյական սկզբունքներով, այլ կատարելագործուած ձեւերով և արհեստներով, որոնք դուր են գալիս տղամարդուն. և շատ անգամ լաւ դիրք ու շոշան ունեցող տղամարդիք ամուսնանում են նրանց հետ և շատ յայտնի ու բարձր ընտանիքներում յաճախ կարելի է տեսնել նախկին գէյշային։ Նրանք իրանց սրամտութեամբ, հնարագիտութեամբ և պհնազարդութեամբ, —յայտնվում են որպէս սպառնալից հակառակորդունի լաւ ընտանիքի համեստ և հեղ օրիորդին, որը կարող է իւր ամուսնուն տալ ամբիծ անուն, անտրտունջ հնազանդութիւն և հնաւատարիմ ծառայութիւն իւր կեանքի ամբողջ ընթացքում։

---

Ես առաջին անգամ գէյշաների հետ ծանօթացայ Նագասակիում, և այդ ծանօթութինից ես եղրակացրի, որ այդ Հեռաւոր Արենելքի հետեր կանանց հոչակը շատ է ծաղկեցրած. այդ մասին իմ ունեցած կարծիքներս յայտնեցի արտաքուստ զարգացած և մի քանի անգամ Եւրոպա ու Ամերիկա ճանապարհորդած եապօնացուն, որի հետ ծանօթա-

ցայ Սիմոնօսելից կօրի գնալու միջոցին երկաթուղու վազօնում: Նա միանգամայն թունդ կերպով հերքեց ասածներս, հաւատացնելով, որ իմ «մոլորութիւնս» առաջ է եկել, ճիշտ այնպէս, ինչպէս և միւս եւրոպացիներինը. տեսել եմ գէյշային կողմանկի կերպով և երկրորդ «փչացածներին» համապատասխան բաց նաւահանգիստ քաղաքների, որտեղ գէյշան կորցնում է իւր ինքնատիպ յատկութիւններից շատերը:

Նագասակիում համարեա առաջնակարգ գէյշաներ չէր գտնի. իսկ միւս քաղաքումն ևս նրանք չեն գնայ եւրոպացու կոչին, որովհետեւ այդտեղ իրանք զբաղուած են տեղական ներկայացուցիչների ընդունելութեամբ», ասաց խօսակիցս:

Հրաժեշտի միջոցին այդ պարոնը տուեց ինձ մի փակ ծրար զբած եապօններէն հասցէով և ասաց, որ երբ Տօկիօ հասնեմ, թարգման պահանջեմ (որի անունը նոյնպէս գրեց ինձ համար). դա ծրարը կհասցնի, ուր հարկն է և ինձ կծանօթացնեն իսկական գէյշաների հետ, որոնք կփոխեն իմ ունեցած սիսալ կարծիքս նրանց մասին: Երբ հոկտեմբեր ամսին գտնվում էի Տօկիում, ևս տեսայ թարգմանին, որը գտաւ—«այն յայտնի գէյշաներին, որոնք ոչ մի գէպքում չեն համաձայնուիլ գնալ եւրոպացու մօտ, եթէ որ նամակը չյանձնէին նրանց»:

Մի երեկոյ այդ թարգմանի ուղեկցութեամբ, ես և իմ ճանապարհորդակից—յայտնի ուուս Բելետրիստ ընկերոջ հետ որին անսպասելի կերպով պատահեցի նագասակիում,ուղեկորուեցի ցանկացած նպատակիս հասնելու:

Մենք հասանք մի ներ փողոց—«գէյշաների թաղ», փոքրիկ, մաքուր տնակներով, որի ամեն մի դրան վրայ կախուած էին գոյնզգոյն գնդակածն թղթէ լապտերներ, որոնց ամեն մինի վրայ գրուած էր այդ տան մէջ ապրողի անունը: Այդ գրութիւններից շատերը ջնջուած էին, որ նշանակում էր, թէ գէյշան «հեռացել է» իւր բնակութեան տեղից երկար կամ կարձ միջոցով կամ թէ իւր երկրպագուից «գընուել է մշտապէս»: Այդ տների թիւը ինձ թուաց քսանից ոչ

պակաս: Այդ թաղում մենք մտանք մի պանդոկ, որը պատկանում էր միքանի ընտանիքներին: Դրանք մեզ ընդունեցին շատ սիրով և մեծ հաճութեամբ ուղեկցեցին մեզ վերին յարկի մի ընդարձակ սենեակ, որը ծածկուած էր ձիւնափայլ սպիտակ խսիրով (մեր կօշիկները ի հարկէ հանեցին): Այդ սենեակի պատերը զարդարուած էին կակէմոն նկարներով և էկրաններով... Դեռ չէինք վերջացրել մեզ մատուցած գաւաթը «օ չա», այսինքն թէյն—որով հիւրասիրելը ամեն մի պատահած հիւրին անհրաժեշտութիւն է եապօնիայում—մեզ յայտնուեցին վեց հոգի գէյշաներ, սամիսիններով, կօտուցուրներով, զայրայի նմանութեամբ: Նոցանից երկուսը հազվիւ տասնեւոթ տարեկան լինէին, իսկ ամենամեծը հազիւ քսանուհինք: Նրանք հազնուած էին շատ զքեղ, նուրբ և ճաշակով, իսկ ճոխ մազերը սանրուած էին շատ խնամքով: Նրանք ներկայացնում էին յաւերժահարմների մի խումբ, ուրոնցից զերազանցութիւն տալ մէկին կամ միւսին շատ դժուար էր: Երկար նայելով նրանց, մենք չէինք կարող աշւըց բաց թունել, որ նրանցից մինը, —արտաքուստ աւելի մեծը,—գեղեցիկ էր եապօնական կանացի տիպի իդէալական տեսակէտով \*): Նրա անունն էր—Սետու, որ կնշանակի նուրբ և հաւատարիմ»:

\*)Եապօնացու իդէալը կնօջ գեղեցկութեան մասին, զանազանվում է մերից շատ տեսակէտներով, այնպէս որ օտարականի համար անկարելի է հասկանալ եապօնացու ունեցած զաղափարը կնօջ գեղեցկութեան վերաբերմամբ, առաւել ևս այն եապօնացու համար, որը չի եղած եւրոպա, և չի լսած օտարականի զատողութիւնը թէ եապօնացի և թէ եւրոպացի կանանց գեղեցկութեան մասին: Եապօնացու ճաշակով կնօջ իդէալական գէմբը ներ և երկար պէտք է լինի, ճակատը բարձր և միջից նեղ, բայց կողքերից լայն և հետզհետէ ցածրացող, Ձուջի լերան նմանութեամբ, որի նկարելը այնքան սիրում է եապօնացի նկարիչը: Եապօնացի կանանց մազերը հարթ պէտք է լինեն, որոնց վիճակում է երեխն տարաբախտաբար ունենալ զաղեր, նրանց հարթելու համար նոյնքան ժամանակ են գործ գնում հայելու առաջ, որքան մի ամերիկացի լեզի—գործ կդնի իւր մազերը արհեստական կերպով գանգուրացնելու, եթէ բնութիւնը գրկած լինի նրան այդ գեղեցկութիւնից: Աչքերը

Առաջինն սկսեց իւր գէրիւտը գէյշաներից ամենափոքրը, որի անունն էր Աւմի, որ կնշանակի «սալորի ոստ» և իւր

պէտք է նեղ և երկար լինեն, թեթև կերպով թեքուելով վեր գէպի դրսի անկիւնները, իսկ յոնքերը, աչքերի վերև կերպով զծազբուած, Փոքրիկ արծուայ կտուց քիթը, պէտք է սկզբից ցած լինի, որով արծուայ կտուցի կեռութիւնը պէտք է սկսուի համեմատաբար աւելի ցածից, քան այդ լինում է Կովկասեան ցեղին պատկանող մարդու մօտ: Աչքերի փոսերը չպէտք է շատ խորը լինեն և ոչ եւշատ հեռացած ճակատից, այտերից և քթից: Այդ վերջին պահանջի համապատասխան աչքերի մօտի հարթութիւնը տալիս է մոնղոլական տիպի երիտասարդ դէմքին արտայայտութեան քաղցրութիւն, որը այդ ցեղի յայտնի յատկանիցն է կազմում: Եապօնուհի արիստոկրատունու բերանը պէտք է փոքր լինի, իսկ շրթունքները ուռուցիկ և կարմրագոյն, վեզ—միշտ բաց հապօնական ազդային տարագում—պէտք է բարձր, նուրբ և նազելի կերպով կոռացած լինի: Դէմքի գոյնը փղոսկրի նման սպիտակ, իսկ այտերը թեթև կերպով կարմիր: Առողջակազմ գիւղական աղջկայ տիպը չի համակըուած եապօնիայում, նրա վառ կարմրագոյն այտերի գոյնը արգելք է դանում «քնքութեան», որը այնքան մեծ դեր է կատարում եապօնական իրէալական գեղեցկութեան մէջ: Կազմուածքը պէտք է աւելի նիհար, մէջքը երկար, բայց ոչ առանձնապէս նեղ, իսկ աղջերը նեղ, որը նրապատում է եապօնական տարագի առանձին շուր տայուն: Գրութը և թիկունքը մի փոքր առաջ խոնարհուած, իրանը և մարմին վերին մասը կորացած—զա մի անհրաժեշտ պայման է կանացիութեան և արիստոկրատութեան ձևերի: Ման գալու միջոցին քայլուածքը պէտք է կարճ և արագ լինի, քիթերը դէպի ներս դարձուած և ոտքերը պէտք է բարձրացնուին այնքան քիչ, որ գետաբները կամ սանդղաները օրորուէին գետնին ամեն մի քայլափոխի ժամանակի: Այդ պահանջը առաջ է գալիս նրանց կըսած նեղ շրջազգեստի գործածութիւնից:

Վերը նկարագրած տիպի հակապատկերը ներկայացնում էն շիկունքը, զանգուր մազերը, կլորածէ կապոյտ աչքերը, վարդագոյն այտերը, ուղիղ և նուրբ իրանը լայն շաղգրեռով, որը կըսում էն օտարականների մէջ բարձրաթիւ գեղեցկունիների, արագ քայլուածքը երկար և որոշակի քայլափոխով առնացի ուժեղ տեսքով և այն ինքնուրոյնութեամբ, որը յատուկ է առանձնապէս եւրոպացի և ամերկացի կանանց, որոնց մէջ շատ նեշտ է նկատել, որ եապօնացիները շատ քիչ գեղեցկութեան արժանաւորութիւններ են գտնում: Կապոյտ աչքերը, որոնք խոր ընկած են իրանց խոռոչներում և բաժանուած քթի արմատով

անուան համապատասխան ընտրեց մի պար, որը ինչպէս բացատրեց մեղ թարգմանը, պէտք է ներկայացնէր սրբկի ժամանակ ծաղկած սալորենու ճիւղերի գետին խոնարհուելը և օրօրանքը, իսկ հողմի հանգարատուելուց յետոյ աստիճանաբար ուղղուելը և թերթիկների հարթուելը: Սկզբում ես այնքան էլ հաւատ չէի ընծայում և կասկածանքով էի վերաբերվում նրանց տուած բացատրութիւններին, բայց շուտով միանգամայն յափշտակուեցայ այն էսթեթիկական տեսարանով, որ ինձ վրայ թողին պարողի շարժուածքները, սկիզբը վայրենի, իսկ յետոյ շորուն, սամիսէնի, ցուցուրի և կօտօի ներդաշնակ երածշառութեան ներքոյ: Տեսարանը այն աստիճան զմայլեցուցիչ էր, որ ես սթափուեցի իմ մտագրավմունքից այն ժամանակ միայն, երբ ընկերս զարմացած բացականչեց «ո՞հ ձիշտ որ կենդանի արձան...» եւ ձիշտ որ անկարելի էր տւելի լաւ բնորոշել, բան այդ խօսքերը գէյշայի ինչպէս արագ, նոյնպէս էլ դանգաղ շարժուածքների խիստ կատարելազգործութիւնը:

Զգիտեմ մեր անկեղծ հիացմունքից դրդուած, թէ կամենալով արդարացնել եապօնացու յանձնարարութիւնը, որի շնորհիւ նրանք ներկայացան մեղ, մեր հիւրերը իրանց բազմատեսակ պարերով վերին աստիճանի մեծ բաւականութիւն պատճառեցին մեղ, թէ վերոյիշեալ պատմական և թէ ժան-

պատնէշի նման, արտասահմանում իր ճաշակը «չփչացնող» եապօնացոց համար, զա դէմքի կոպտութեան, խտութեան արտայալտութիւն է:

Մինչև անզամ երեխանները առաջ զախենում էին կապտաչեայ, շիկահեր օտարունուց, բայց յետոյ զաղարեցին մի այդպիսի անտեղի վախից, նրա ներկայ գոնուած ժամանակը: Այդ օտարականները, որոնք երկար ապեկ են եապօնիայում, նկատում են, որ իրանց ճաշակը աննկատելի կերպով փոխվում է և մեծ զարմանքով տեսնում, որ իրանց համարկրացի կանայք թվում են վարվեցողութիւն շիմացող, կոպիտ և անձոռնի — խոնարհ, զիւրաբէկ և շնորհալի փոքրիկ եապօնուելու հետ համեմատելով:

բային պարերի տեսակներով, որոնք արտայայտվում էին բովանդակութեան համապատասխան միմիկայով և շարժուածքի ձևերով։ Առանձնապէս շատ կենդանի և հետաքըրքի էր «Կապօրի» կոչուած պարը, որը ներկայացնում էր կնօջ և տղամարդուն դաշտում շտապ աշխատելիս, և որը կատարում էին չորս պարողները միասին զոյդ զոյդ։ Հետաքըրքի էր նաև «Շատախօս» պարը, որի կատարման միջոցին մէկը «յոգնեցնում էր» միւսին իւր շատախօսութեամբ, առաջ բերելով նրա դէմքին յորանջումն և ձանձրոյթ։

Իսկ ինչ վերաբերում է գէյշաների երգեցողութեան, ես վերել արդէն յայտնել եմ դրա ծղրիտային ծղրտոցների և սուր ճշոցների մասին, որի վրայ տարաբախտաբար, ինչ որ մենք այստեղ լսեցինք, ոչ մի բան չի թոյլ տալիս աւելացնել։ Թէև մի երգ, որը երգեց Սետուն, արտայայտում էր կիրք, և մեզ, եապօնական երգի եղանակը չիմացողներիու համար նոյն իսկ շատ հետաքըրքիր և հասկանալի բովանդակութիւն ունէր։ Երգի խօսքերը թարգմանի ասածներին համաձայն հետևեալն էին. «իմ սիրելիս, եթէ դու մեռնես, գերեզմանը չի ծածկի քեզ, այլ բո աճիւնը կիսմեմ ես զինու հետ խառնելով» \*). Սետուն—երեխ կանացի նուրբ բնազդամբ հասկացաւ, որ ինքը իւր ընկերուհիներից աւելի է գրաւում ինձ—երգը վերջացնելուց իսկոյն նստեց ինձ մօտ և սկսեց թարգմանի միջոցաւ խօսել հետո։ Ես երբ աղջանուն յայտնեցի, նա մտածմունքի մէջ ընկաւ, կարծես աշխատելով, ինչոր մտաքերել. իսկ յետոյ դուրս վագելով սմնեակից, շուտով վերադառն մեզ մօտ, բերելով իւր հետ եապօներէն մի լրագիր, որի մէջ, ինչպէս թարգմանս բացառեց, իմ գալուստս Տօկիօ յիշուած է եղել... Բայց աւազ վերջերն իմացայ, որ լրագիրը շատ կասկածանքով է վերա-

\*) Վերջերն ինձ ասացին, որ մի քանի տարի առաջ գէյշա 0-Կաման Օսակայում իսկականացրեց երգում ասածները։ Նա իր սիրած մարդու աճիւնը խառնեց զինու հետ և խմեց հանգուցեալի բարեկամների ներկայութեամբ։

վերուել ինձ, ենթագրելով որ «ես շատ նշանաւոր զինուորական լրտես եմ»։ Բայց պէտք է խոստովանուեմ, որ եթէ Սետուն հաւատար նոյն իսկ այդ կասկածանքին, այնուամենայնիւ այդ բանը նրան չէր խանգարի հետս վարուելու նոյն բաղցրութեամբ և թովչութեամբ...»

Ես հաւատացած եմ, որ իմ Սետունի հետ ունեցած խօսակցութիւնը աւելի հետաքըրքիր կարող էր լինել ինձ համար, եթէ դա առանց թարգմանի կատարուէր, թէև վերջինը, հաղորդելով գէյշայի խօսակցութիւնները, թվում էր ինձ աւելի խելացի և սրամիտ, քան նրա հետ ունեցած անմիջական խօսակցութեան ժամանակ։

Ես տրամադրի եմ մտածելու, որ շատերը իմ ներկայ յօդուածս կարդալով, եթէ նրանց վիճակուէր հրաշալի և կենասուրախ գէյշաների ընկերութեան մէջ գտնուել, այն ժամանակ անշուշտ պահանջ կզգային մեր ժամանակակից հարձերին պաշտպանել խստակրօն մարդկանց յարձակումների դէմ, կամ նոյն աստիճան ներողամիտ կդանուէին, ինչպէս Բերանժէն իւր «Երկու գթութեան քոյրեր» բանաստեղծութեան մէջ վերաբերուել է մէջ Փարիզի մեծ օպերայի—կարաւուէի հրաշալի Ալմէին։ Յիշենք, որ այս աշխատութեան մէջ Բերանժէն «հարկադրել է» Ալահին ընդունել Ալմէին, «որը գրգում էր մարդկանց—սիրել կեանքը և հաւատալ բախտին», նոյնչափ արժանաւոր գտնելնրան զրախտի համար, որչափ կարող է արժանաւոր համարուել մի զթոտ միանձնուէի, որը սովորեցրել է մարդկանց կատարել իրենց պարագը և պատրաստել է նրանց հերոսաբար զիմաւորելու մահուան։

Միենոյն ժամանակ ես սպասում եմ, որ ընթերցողունիները (և ի հարկէ նրանց արդարացի եմ գտնում), առանց վարանման կմիանան Ալիսա Բեկոնի կարծիքի հետ, որը ներկայ եապօնիայում գէյշայի կատարած դերը գնահատելուց յետոյ, առում է, որ լուսաւորութեան դարը այդ երկրի

մտածող կանանց համար մեծ ինդիր է հրապարակ հանել.  
«Եթէ իսկապէս առաջնակարգ մարդկանց կանայքը համար-  
վում են այդ դասակարգի ներկայացչուհիները, որը սակաւ  
չի պատահում, ուրեմն ակնայայտի է, որ կանանց դրութեան  
մէջ կայ մի ինչ որ արտասովոր բան, որը յօդուտ Եապօնիւ-  
այի բարենորոգութեան, պահանջում է արմատախիլ անել  
Կամ պէտք է տղամարդկանց պահանջը բարձրացնել կանանց  
վերաբերմամբ, կամ փոփոխութեան ենթարկել կանանց հին  
ձեւով դասիարակութեան եղանակը: Պէտք է անմիջապէս ըն-  
դունել կանանց ազատ զարգացումն և նրանց տալ մեծ ա-  
զատութիւն. ըստ երևոյթին դա է միակ միջոցը ցանկալի  
արդիւնքին հասնելու համար»... Եւ ներկայ ժամանակը եա-  
պօնուհին, ինչպէս մենք կտեսնենք մեր յօդուածի երկրորդ  
գլխում, արդէն գտնվում է այդ բանի ձգտման ճանապար-  
հին:

II.

Արշալոյսի բացումն ժամանակակից Եապօնիայի կանանց համար: Ժա-  
մանակակից Եապօնիայում «կանանց հարցի» ծագման անխուսափելիու-  
թիւնը և նրա լուրջ նշանակութիւնը—Եապօնիայի ժողովրդական  
լուսաւորութեան ընդհանուր սիստեմի մասին:—Կանանց տարրական,  
միջնակարգ և բարձրադարյն կրթութիւնը—Տօկիօի կանանց համալսարա-  
նի հիմնարկութիւնը:—Ժամանակակից Եապօնիայի ընտանիքների և ու-  
սումնարանների, ծնողաց և աղջկերանց տարրածայնութեան անխուսա-  
փելիութիւնը—Եապօնիայի կառավարութեան միծ աջակցութիւնը կա-  
նանց հարցի օգտին:—Եապօնացոց հասարակութեան հայեացքի փոփո-  
խութիւնը ամուսնական կապակցութեան մասին և կնօջ ու մօր տեղը  
ընտանիքի մէջ:—Մամուլի դերը «կանանց հարցի վերաբերմար»:—  
Ֆուկուլայի վարդապետութիւնը, որպէս հակապատկեր Կայքարի «Մէծ  
ուսմունք կանաց համար աշխատութեան:—Եապօնուհիների գործունէ-  
ութիւնը իրանց վիճակի բարենորոգման համար:—Իմ խօսակցութիւնը  
լուսաւորուած Եապօնուհիների ներկայացչուհիների հետ:—Ազատող  
բանակի գործունէութիւնը անտուակութեան զոհերի ազատման կոռու-  
մէջ:—Եապօն հասարակութեան ցածր զասակարգի կանանց նոր տեսա-  
կի ստրկութիւնը, իբրև հետևանք տեղական գործարանների բազմանա-  
լուն:—Եղբակացութիւն:

«Ի՞նչ բան է կանանց հարցը և ի՞նչ բովանդակութիւն  
ունի նա: Արդեօք դա սօցիալական կեանքի միւս իննդիրնե-  
րի մէջ մի ինքնուրոյն երևոյթ է ներկայացչում: Դրականա-  
պէս ոչ: Կանանց հարցի և XIX դարի երկրորդ կիսում կանանց  
շարժման ամբողջ հետաքրքրութիւնը և կուտուրական նշա-  
նակութիւնը կայանում է նրանում, որ այս շարժումը մի  
ինքնուրոյն առանձնացած երևոյթ չէ ներկայանում, այլ ան-  
քակտելի կերպով կապուած է ժամանակակից գոյութիւն ու-

Նեցող թէ սօցիալական և թէ տնտեսական կեանքի ուրիշ հարցերի հետ։ Կանանց շարժումն առաջ է գալիս իրեկ լայն կուլտուրական հարցերի արձագանք և արտացոլումն այն ձգտութիւնը ու գաղափարների, որոնցով կանանց հետ հաւասարաչափ շահագրգոռուած են նաև տղամարդիկ։

Այսպէս է բնորոշում պրօֆ. Լեինսօն—Լեսսինզը Եւրոպայի և Ամերիկայի հասարակական ամեն մի նշանաւոր շարժումներից մէկը իւր հետաքրիր «կանանց շարժման ամենազլխաւոր գործոնների մասին» յօդուածում։ Հազիւ թէ մէկը կարողանալ է երթել այդ եղրակցութիւնը և ուրեմն շատ բնական էր ժամանակակից մէջի զարեշրջանի մուտքը Եապօնիա, որը բնորոշում է Եւրոպական քաղաքակրթութեան տարածուելովը ժողովրդական բոլոր խաւերում։ Այդ քաղաքակրթութեան հոսանքը ցնցեց նաև կանանց այն «ցաւագար» դրութիւնը, որը իւր էութեամբ մնացել էր անփոփոխ կայրարի ժամանակից։

Իրաւ, որ ներկայումս Եապօնիայում «կանանց հարցը» մեծ հետաքրքրութիւն է շարժում,—ասում է Ալիսա Բեկօնը։ Կարծեմ նոյն իսկ պահպանողականներին ևս անհանգըստացնում է այն միտքը, որ կանանց վիճակի բարենորոգութիւնը անհրաժեշտ է, եթէ տէրութիւնն ուզում է պահել այն դիրքը, որը ինքը զրաւել է ներկայ ժամանակում... Թէկ եապօնացիները սարսում են այն մտքից, որ իրանց կանայքը երբ և իցէ կարող են նմանուել ինքնավատան և կիսատղամարդ Արևմտեան կանանց, բայց այնուամենայնիւ մեծ է նրանց անբաւականութիւնը, երբ տեսնում են նրանք իրանց կանանց և աղջկանց գործունէութեան նեղ շրջանը, և յալթանակել է այն համոզմունքը, որ աւելի բարձր կրթուած կանայք կրարենորոգէին իրանց ընտանի օջախը, և համոզուած են, որ Եւրոպացու կամ ամերիկացու ունեցած իդէալական տունը արդիւնք է աւելի յառաջադեմ քաղաքակրթութեան, քան եապօնականն է։

Եապօնիան ունենալով մի այնպիսի լուսաւորութեան տենչով տոգորուած կողմնակից, որպիսին այդտեղի ազատա-

միտ կառավարութիւնն է, որը մի շարք կարգեր է բաց թողնում, որոնց ինչպէս ամեն մի երկրում, նոյնպէս և այստեղ, կարելի է դասաւորել չորս բաժանմունքների։ ա—բարձրացնել կանանց կրթութեան մակերեսով իրավունքը, բ—օրէնսդրութեամբ պաշտպանել կանանց անձնական իրաւունքները, գ—տպագրականին միջոցաւ մաքեր տարածել կանանց հարցի մասին, դ—կազմակերպել ընկերութիւններ, որոնք նպաստէին ուղղակի կամ կողմնակի կերպով կանանց դրութեան բարենորոգման։

Նախ քան Եապօնիայի ժամանակակից կանանց կրթութեան մասին համառօտ նկարագրելը, պարտաւոր ենք տալ գոնէ հիմնական տեղեկութիւններ այստեղ գործադրող կրթութեան ձեր մասին։ Այդտեղ կրթութեան ձեր հիմքը կազմուած է արևմտեան եղանակով (առաւելապէս ամերիկական և գերմանական), որը 1871—1873 թ. մշակուեց տէրութեան յանձնաբարութեամբ մի քանի անձանց աշխատութեամբ, որոնք նախապէս ուսումնասիրել էին այդ գործը Եւրոպայի և Ամերիկայի առաջնակարգ տէրութեանց մէջ։

Էդիկտ Միկաղօն (1872 թ.) ժողովրդական կրթութեան համար օրէնսդրութիւն հրատարակելով, ի միջի այլոց ասում է նրանում, որ ամեն մի անհատի տնտեսական գոյութեան համար, սկսած ամենափոքը աստիճանից մինչև ամենաբարձր աստիճանը, անհրաժեշտ է իւր պաշտօնին համապատասխան կրթութիւն ձեռք բերել, լինի նա սպայ, աստիճանաւոր, կալուածատէր, վաճառական, բժիշկ, արհեստաւոր և այլն։ Այդ օրէնսդրութիւնը լուսաւորութեան վերաբերմայր այնպիսի լայն ծրագիր ունի, որի կանոնի համապատասխան չպիտի գտնուի մի գիւղ առանց գրագէտ ընտանիքի, իսկ ընտանիքը առանց գրագէտ անդամի։

Թէկ այդ հրովարտակի հրահանգած բարձր իդէալը գեռ ևս հետու է իւր իրավործումից, բայց և այնպէս ըստ երեսոյթին, եապօնացիներն շատ մեծ ջանքերով և հմտութեամբ առաջ են տանում այդ գործը։

Ներկայ Եապօնիայի հանրակրթական հիմնաբարկութիւն-

ները բաժանվում են հետևեալ չորս կարգերի. տարրական ուսումնարաններ — ստորին՝ և բարձր բաժանմունքներով, միջնակարգ ուսումնարաններ, բարձրագոյն ուսումնարաններ և համալսարաններ: Այդ ուսումնարանական հիմնարկութեանց ցանցին պատկանում են թէ մանկական պարտէզները և կանոնաւոր ուսումնարանները, որոնք համապատասխանում են մեր ուսուցչական դպրոցներին և մանկավարժական ճեմարաններին, որտեղ պատրաստվում են ուսուցիչներ:

Տարրական կրթութեան հիմքը մշակուած է այն սկզբ- բունքով, որով նա պարտաւորեցուցիչ է դառնում տէրութեան բոլոր հապատակների համար, որի շնորհիւ ուսումնարանա- կան տարեշրջանի երեխանները — 6—14 տարեկան պէտք է յաճախեն տարրական դպրոցը, որտեղ արգելվում է բարե- կրիչ, այսինքն այն դասատվութիւնը, որը շոշափում է մի որ և է դաւանութիւն, եթէ այդ ուսումնարանին տրուած է ծանուցագրով տէրութեան կողմից իրաւոնք կամ նպաստ:

Տարրական ուսումնարանները պահվում են մեծ մա- սմբ բաղաքների և գիւղերի հաշուով: Այդ ուսումնարանների թիւը 1901—1902 թ. համառմ էր մինչև 29,609—ի, բայց դրանից 349 մասնաւոր և 52 տէրութեան, —որոնք գտնվում են կանոնաւոր ուսումնարաններին, այսինքն ուսուցչական դպրոցներին կից:

Եապօնական ժողովրդական լուսաւորութեան մինիս- տրի կազմած 1901—1902 թ. ուսման տարեշրջանի հաշվում կարդում ենք, որ յունուարի 1—ին այդ երկրի երեխայոց ընդանուր թիւը, որոնք ուսումնարան մտնելու տարիքում էին գտնվում 7,466,886—ի էր համառմ, որոնցից 6,497,489 հոգի, այսինքն ընդհանուր թուի88% յաճախում էր ուսում- նարան, դրանց 93.8% կազմում էին տղայք, իսկ 81.8% — աղջկերք: Այդ թուերը շատ պարզ ցոյց են տալիս այդ երկրի այժմեան տարրական ուսման յառաջադիմութիւնը, որովհետև սրանից 29 տարի առաջ, որը ցոյց է տրուած սը- րա յավելուած բացատրական թուահամարների մէջ, այդ երկրի տղաներից, որոնք ուսումնարան մտնելու տարիք ու-


նէին, նրանց ընդհանուր թուի 40% էր միայն մտնում ու- սումնարան, իսկ օրիոդաց 15%—ը:

Միենոյն բացատրական թուահամարները ցոյց են տա- լիս գալարոն գծերով, որ վերոյիշեալ գործը եապօնիայում ծաղկել է ոչ առանց խոչընդոտների: Այսպէս օրինակ 1883 1891 թ. յետաղիմում էր, բայց նրա հետևեալ տարիները, բացի Զինաստանի հետ պատերազմը ունեցած տարուց — (1894 թ.), նա անընդհատ յառաջադիմել է:

Մեզ առանձնապէս ներկայ յօդուածում պէտք է զբա- ղեցնի կանանց տարրական կրթութեան արագ զարգացման խնդիրը: Եւ իսկապէս 1891 թ. տարրական դպրոց յաճախող օրիորդաց թուի տոկոսը 32—ի էր հասնում ( $67\%$  սահմա- նուած տղայոց համար), իսկ 1901—1902 թ. այդ թիւը բար- ձրացաւ 81.8—ի ( $93.8\%$  սահ. տղ. համար), այսինքն վեր- ջին տասը տարուայ ընթացքում արագ կերպով բարձրացաւ, համելով — համարեա 50%, որը սահմանուած էր տղա- յոց համար... Եւ տէրութեան կազմած ծրագրի համա- ձայն, երեք տարուայ ընթացքում օրիորդաց տարրական կրթութիւնը պէտք է հաւասարուէր տղայոց տարրական կրթութեան և իր քանակութեամբ, ինչպէս այժմ նա հաւա- սարում է իր որակութեամբ:

Երկանո խանն դասաւորութեան սկզբունքը միենոյն դա- սաւան մէջ այնքան էլ չի համակրվում այդտեղի ուսման ծրագրում, թէն ինայողական տեսակէտով, դա զործագրվում է ստորին տարրական ուսումնարաններում, նրա առաջին երկու տարուայ ուսուցման ժամանակ, նոյնպէս այնպիսի տեղե- րում, որտեղ աշակերտների թիւը քիչ է և միջոցները չեն նե- րում ամեն մի սեռի համար առանձին դասաւուն բանալու: Բայց երկանո խառը աշակերտների համար մի ուսումնարա- նում և առանձին-առանձին դասաւուներում ուսուցումն սովո- րական բան է եապօնիայում: Մինչև անգամ նրանք այդ ձե- ռով շարունակում են սովորել մինչև իրանց հասուն տարիքը. այսպէս օրինակ, ուսուցչական դպրոցները եապօնիայում

թուահամարներ, որոնք ցոյց են տալիս ինչպէս են յարակը ին տաղը սակագի ուսումնական տարրի ուժիցուու Երեխամբը 29 սուրայ լիրացնում 1873 թ. Ավանձ.



Ա Վերաբերեցնում է Երեխամբ առևտ պատմանող երեխայոց.  
» » առվական առևտնին.  
» » առվական առևտնին.

յաճախ ունենում են իրանց մէջ երկու բաժանմունք—արական և իգական:

Տարրական ուսումնարանների ստորին բաժանման ուսաման դասընթացը—4 ամեայ է, իսկ բարձր ուսումնարաններում երկուսից մինչև չորս տարի է, հետեւաբար տարրական ուսումնարանի ամբողջ դասընթացը տևում է ութ տարի: Կանոնաւոր ուսման տարրական ութամեայ դասընթացը աւանդվում է շաբաթական դասերի հետեւել որոշմամբ.

Բարոյականութեան կանոնագիրք. . . . . 18

Վայելչագրութիւնը . . . . . 28

Աշխարհագրութիւն . . . . . 8

Իրազնութեան դասեր . . . . . 8

Զեռագործ և տնտեսութիւն (միայն օրիորդ հմ). 18

Ընթերցանութիւն և շաբաթութ. օրիորդ. հմ. 58

տղայոց համար. 62

Հաշուեգիտութիւն . . . . . 40

Պատմութիւն . . . . . 18

Մարմնամարզութիւն և երգեցող. օրիորդ. հմ. 18

տղայոց համ. 24

Իգական տարրական դպրոցներում պարապմունքը տեսում է օրական վեց ժամ, որուա հետ հաշուելով և այն մի ժամուայ հանգիստը, որի ընթացքում նրանք նախաճաշուում են—սովորաբար մի բուռը բրինձ և մի գաւաթ թէյ:—Ուսումնարանի ծրագրի պահանջին համապատասխան, նրանք անց են կացնում խաղալով և պարելով, հնարաւորութեան չափ բաց օգում, երբ եղանակը թոյլ է տալիս նրանց: Եւ յատկապէս դրա համար ուսումնարաններին կից քաղաքներում թողնում են ընդարձակ տեղ, որը յաճախ շրջապատուած է լինում ծառերով: Պէտք է նկատել այստեղ, որ վերոյիշեալ պարերը, բոլորովին նմանութիւն չունեն եալօնական աղգային պարերի հետ, այլ նրանք ընդօրինակուած են ամերիկական պարերգերից—և ոչ գէյշաների հչացող և սղմուած ձայներով, այլ կատարեալ երաժշտական:

Տնտեսագիտութեան ուսուցման մէջ, որպէս դասաւան-

գելիք առարկայ մտնում է և «սենեակների մաքրելը», որի մէջ վարժուելու համար աշակերտուենիները դասերի վերջանալուց յիտոյ ամեն օր լուանում են դասատները և սրբում թողերը, իսկ շաբաթը երեք անգամ դասատների պատերը լուանում: Անհետաքըքիր չէ նկատել այստեղ, որ Նազասակի տարրական ուսումնարանում,—որը գտնվում է ուսուցչական դպրոցին կից—ես ականատես էի, որ դաստունը լուանալու համար տղաները դոյլերով ջուր էին կրում աշակերտուենիների համար, որի առիթով դպրոցի կառավարիչը, ինչպէս ինձ թուաց, մի փոքր հեգնական ձեւով նկատեց անգիերէն, որ այդ կամակատարութիւնը օրիորդաց համար առաջ է եկել եւրոպական ազգեցութիւնից».

Որովհետեւ կնօջ նոր սկսեցին ճանաչել Եապօնիայում իւր մտաւոր ընդունակութեամբ տղամարդուն հաւասար, այդ պատճառաւ էլ մինչև այժմս եապօնացիները ուշադրութիւն չէին դարձնում վաղուց Եւրոպայում և Ամերիկայում ընդունուած և փաստերով հաստատուած այն բանի վրայ, որ տարրական ուսումնարաններում վարժուենիները աւելի լաւ են վարում իրանց պաշտօնը, քան ուսուցիչները: Այդ պատճառով էլ սկզբում տարրական ուսումնարանների մանկավարժական խումբը կազմուած էր համարեա թէ ուսուցիչներից: Բայց տարից տարի նրանցում վարժուենաց թիւը շատանում է, ի նկատի ունենալով մասնաւոր ուսումնարաններում նրանց գործելու առաւելութիւնները, որոնք աւելի յասաջադիմութիւն են ցոյց տալիս, քան ժողովրդական ուսումնարանները:

Ինչպէս վերը յիշուած է, մասնկավարժութիւն սսվորելու համար Եապօնիայում կան կանոնաւոր ուսումնարաններ, որոնք համընթաց են մեր ուսուցչական դպրոցներին և ինստիտուտներին: Դրանք բաժանվում են երկու դասակարգի. սովորական, որտեղ պատրաստվու մեն մանկավարժներ տար-

բական դպրոցների համար և բարձրագոյն իգական ուսումնարանների համար, որոնց մասին ցածը տեղեկութիւններ կտրուեն: Վիճակագրական տեղեկութիւնները հետևեալն են ցոյց տալիս:

1897 թ. 1902 թ.

Ուսումնարանների թիւը . . . .	47	54
------------------------------	----	----

#### Աւակերտների թիւը.

Տղայոց . . . .	6,021	11,900
Օրիորդաց . . . .	720	2,000

#### Ուսուցիչների թիւը.

Տղամարդկանց . . . .	677	695
Կանանց . . . .	43	76

Այն աշակերտների թիւը,		
որոնք պարապում են գործնական		
փորձելով ուսուցչական դասընթացներում.	1,907	4,082

Համեմատելով այդ աղիւսակների թուերը, շատ պարզ որոշվում է ընդհանրապէս առաջին՝ (գոնէ բանակութեան վերաբերմամբ) վերջին հինգ տարուայ ընթացքում ուսուցչական կազմի յառաջադիմութիւնը, երկրորդը նրանց առանձին ուշադրութիւնը վարժուենիներ պատրաստելու նախաձեռնութեան մէջ: Եւ իսկապէս, երբ վերջիշեալ ուսումնարաններում աշակերտների թիւը այդ ժամանակամիջոցում կրկնապատկում էր, աշակերտուենաց թիւը համարեա հռապատկում էր: Չնայելով դրան Եապօնիայում դարձեալ վարժուենիների մի այնպիսի մեծ պահանջ է զգացվում, որին ես ականատես եղայ Նազասակի տարրական դպրոցում, որը միացած է հասարակի հետ. օրիորդների հետ մի այնպիսի պարապմունքը, ինչպիսին է դասատան լուանալը կամ նրա մաքրելը զեկավարում էր ուսուցիչը, իսկ ֆուզա-

Նի ուսումնարանում դարձեալ ուսուցիչն էր սովորացնում օրիորդներին, գործնականապէս ցոյց տալով նրանց, թէ ինչ-պէս պէտք է շորերը հողմանարել և տեղաւորել պահարանում:

Նկարագրենք այժմ համառոտապէս իգական կանոնաւոր ուսումնարանների կազմակերպութիւնը:

Բարձրագոյն իգական կանոնաւոր ուսումնարան: Այդ ուսումնարանի ուսման դասընթացը բաժանվում է երեք մասի. գրականական, գեղարուեստական և բնագիտական: Այդ դասընթացներից ամեն մինը կենդրուանում է մի զլիսաւոր մասնագիտութեան վրայ, որի ուսման ընթացքը տևում է չորս տարի—և լրացուցիչ—որի ուսման ընթացքը 2 տարի է: Բացի գրանից ուսումնարանին կից հիմուած են հետևեալ առարկաների մասնագիտական դասընթացներ. Եապօներէն, չինական գրականութիւն, պատմութիւն և աշխարհագրութիւն: Ամեն մի առարկայի հետ աւանդվում է և մի որեէ օտար լիզու, առաւելապէս անգլիերէն, որի ուսուցումը տևում է երկու տարի: Ուսումնարանին կից գոնվում են արուեստագիտական դասընթացներ, մանկական պարտէզների համար կառավարիչներ պատրաստելու համար:

Ուսումնարանը կառավարում են դեռահաս օրիորդներ, որոնք աւարտած են լինում գոնէ հասարակ կանոնաւոր ուսումնարանի երկրորդ դաստան դասընթացը, կամ դրան համահաւասար գիտութիւն ունեն:

Իմ տեսած այդ ուսումնարանին միացրած են բարձրագոյն իգական և երկու տարրական ուսումնարաններ, որոնցից մէկի ուսման դասընթացը գործանականապէս միացրած է վերոյշեալ ուսումնարանի հետ և բացի գրանից՝ մանկական պարտէզ. որպէս վերջին, նոյնպէս և տարրական դպրոցում սովորում են խառ երկսեռ երեխաներ: Ուսումնարանների մասին պաշտոնական հաշուի մէջ կարդում ենք հետեւը.

— «Բարձրագոյն և տարրական դպրոցները և մանկական պարտէզը միացրած են բարձրագոյն կանոնաւոր ուսումնաւունի հետ այն պատճառով, որ այդտեղ աշակերտուները դիւրութիւն ունենան փորձնական դասատվութեան մէջ կատարելագործուելու, որը վարչական կողմից, շատ խիստ մանկավարժական վերահսկողութեան է ենթարկվում: Երեք տարի սրանից առաջ ուսումնարանին կից հիմուեցին տնտեսագիտութեան դասընթացներ և կրթիչ բովանդակութեամբ դասախոսութիւններ, որոնց նպատակն է ամրապնդել ուսումնարանի ընտանիքի հետ ունեցած կապերը:

Պաշտօնական հաշիւը հետաքրքիր տեղեկութիւն է տալիս երեխայոց մասին տարրական ուսումնարաններում, ուրոնք գոնվում են կանոնաւորներին կիցէ, ուր ընդունուած կարելիին չափ պարզ հագուստի ձև, որպէս զի հնարաւորութիւն արուի նրանց ազատ և արագ շարժման: Ներկայ տարուայ սկզբից կօշիկների գործածութիւնը ընդունելութիւն է գտել այդտեղ:

Եթէ կօշիկների գործածութիւնը ընդունելութիւն է նետել, ուրիմն շատ հաւանական է, որ ապագայում եապօնուների տարրազի ձևն ևս կփոխուի, որովհետև նըրանց մշակուծ քայլուածքը սանդալներով և գետիններով, որը որքան համապատասխանում է ազգային կիմօնօյին, նոյնքան տգեղ և ծիծաղելի է կիսակօշիկների գործածութիւնը եւրոպական շրջազգեստներում և եապօնուհու բարձըր զարգացած էսթեթեկական ճաշակը չի հաշտուի գորահետ: Ես առանձնապէս կանգ եմ առնում գորա վրայ այն պատճառով, որովհետև ինձ վիճակուել է կարդալ անգլիերէն լրագրում եապօնիայում, տեղական լրագիրներից թարգմանուած թունդ պահպանողականների խիստ յարձակողական յօդուածները այդ ընդունելութեան մասին, որի մէջ նրանք տեսնում են նրբաճաշակութեան դէմ ուղղակի եղեռնագործութիւն:

Հետևեալ երեսի վրայ գտնուած պատկերը լուսանկարել եմ նագասակիում ուսուցչական դպրոցին կից, տարրա-


կան ուսումնարանի բակում դասամիջոցի ժամանակ:

Այդտեղ ընթերցողը կտեսնի, ի միջի այլոց, տղայոց գլխներին անձոռնի փուրածկաներ, իսկ օրիորդաց լայնեզր յարդեայ գլխարկներ: Դրանց գործածութիւնը պարտաւորեցուցիչ է, որպէս ուսումնարանի զգեստ, որը պաշտպանում է արևից երեխայի աչքերը, և մտցրուել է ծովագրի մէջ բժիշկների խորհրդով համեմատաբար աւելի նորերս, կարծելով, որ այդտեղի տարածուած աչքացաւին կամ կարճատեսութեան կարող է մի որոշ չափով օգնել:

Նոյն լուսանկարի վրայ կարելի է տեսնել շրջազգեստներով (գակամա) նոյն իսկ չափահաս տղաներին և աղջիկներին: Առաջիններին հազցնում են համեստութիւնից դըրդուած, իսկ երկրորդներին թէ դորա և թէ նորա համար, որ ակամայում աւելի ազատ կարելի է շարժուել, որովհետև եապօնական կանանց շորերը ազդրերը սղմուած պահելով արգելք է լինում ազատ շարժման:

Մանկական պարտէզը \*) գտնվում է իգական կանոնաւոր ուսումնարանին կից, և դրա նպատակն է այդ տեսակ հիմնարկութեանց համար զեկավարուհիներ պատրաստել: Այդտեղ սովորում են 3 տարեկան հասակից մինչև ուսումնարան գնալու տարիքը և դրա համապատասխան երեք դասաւորութեան է բաժանուած:

Ներփակելով, նկատենք այստեղ, որ իգական կանոնաւոր դպրոցի գործունէութեան զարգացումն ընորոշվում է հետեւել կերպով. 1897 թ. դժուանում սովորող աշակերտուհիների թիւը հասնում էր 205-ի, իսկ 1902 թ. յունուարի 1-ին բարձրացաւ 417-ի, այսինքն հինգ տարուայ ընթացքում կրկնապատկուեց: Իսկ դասատուների թիւը այդ տա-



\*) Եապօնիայում առաջին մանկական պարտէզը բացուեց 1876 թ. իսկ այժմ դրանց թիւը հասնում է արդէն 253 (181 հասարակական և 72 մասնաւոր): Պարապմորնքները ֆրօնելական եղանակով է աւանդվում: Աշակերտների թիւը 1901—1902 թ. կազմում էին տղայոց 12,477 որիորդաց 11,030, իսկ դոցա վարժունեաց 665:

ըիներում համապատասխան էր 21 և 44, որոնցից մինը  
այժմն օտարական է:

Հասարակ իգական կանոնաւոր ուսումնարաններում ուսումնական դասընթացը տևում է երեք տարի, արականում—չորս։  
Համաձայն տեղական պայմաններին ուսումնական կանոնաւորապէս աւարտելու համար, պէտք է հիմնել կրծատուած կանոնաւոր, պատրաստական և փորձնական դասընթացներ—ամառուայ արձակուրդների ժամանակ անցնելու ուսումնարանների ուսուցիչների, վարժուհիների հետ և միևնույն ժամանակ մանկական պարտէզների համար դեկավարուհիներ պատրաստելու։ Կանոնաւոր ուսումնարաններում, լինի նա հասարակ թէ բարձրագոյն, մեծ ուշադրութիւն է գարձնվում Փիզիկական զարգացման — մարմինը ամրապնդող մարմնամարզական միջոցների վրայ. ինչպէս օրինակ Տօկիոի ուսումնարանի աշակերտուհիների չորրորդ մասը գտնվում են, եթէ անախորժ եղանակ չի, մեծ հարթավայրի վրայ, որը շրջապատուած է երկաթեայ բիւրեղանման ցանկապատով, որտեղից քաղաքը երեսում է իւր հորիզոնով, որի վրայ բարձրանում է գեղատեսիլ ֆուջի լեռան գագաթը։ Իգական կանոնաւոր ուսումնարաններում աւանդվում են ձևականութիւնների զամբը, որը շատ բնական է, որովհետև ժողովուրդը այդտեղ հեռու մնալով բայց նաւահանգիստ քաղաքներից, պահպանել է իւր ազգային առանձնայատկութեան սովորութիւնը, առաւել ևս գիւղերում և աւաններում այնպիսի դեր են կատարում, որը մինչև եւրոպացիների հետ ծանօթանալը այդ երկրի ընդհանուր սովորութիւնն էր։

Այդ առիթով առաջ կրերեմ անձնական տպաւորութիւնից մի պատկեր, որը ստացել եմ Նազասակիի ուսումնարանում, որտեղ երկու բաժանմունք կայ—արական և իգական։ Այդտեղի կառավարախչը, որի առաջնորդութեամբ ես ծանօթացայ այդ հիմնարկութեան հետ, շրջելով մի քանի դասատներ, որտեղ պարապում էին աշակերտներ։ Կառավարիչը, դառնալով գէպի ինձ, ասաց՝ «Զեր մինչև այժմ տեսածները կարող էին տեսնել և Արևմտքում, բայց հիմա ձեզ

կը ցոյց տամ մի պատկեր, որը զուտ տեղական յատկութիւն կը կրի»։ Այս ասելով նա բացեց դասատներից մէկի դուռը և իմ աչքի առաջ ներկայացաւ հետևեալը, որը արդարացընց լիովին նրա խոստումը. ընդարձակ սենեակի յատակի վրայ, որը խսիրով էր ծածկուած։ իսկ դորա վրայ նստած էին մի խումբ օրինութներ, որը ցոյց է տրուած լուսանկարի վրայ։ Նրանք տեսնելով մեզ, խոնարհուեցին միչև գետինը, կպցնելով ճակատը խսրի վրայ և մնացին այդ գրութեան մէջ մի քանի վայրկեան։ Դրանից յետոյ կառավարիչը ինձ ներկայացը գրանց վարժուհուն, դա վերկացաւ անդից և կրկին անգամ խոնարհուելով, բացարեց թարգմանի միջոցաւ, որ այդ միջոցին այդ գասատանը ավանդվում է ձևականութիւն և թէ առաջ նստած երկու աշակերտուհիներից մինը ներկայացնում է տանտիկոջ, իսկ երկրորդը—հիւրի գերը։ Նըսանք սովորում են իրար ընդունելու եղանակը, որի ժամանակու միայն մարմնի բռնած գիրքը, այլ մատների գասաւորումն անգամ խսրի վրայ մեծ նշանակութիւն ունի։ Այդ պատկերը մի այնպիսի բնորոշ յատկութիւն ունէր, որ ես խնդրեցի կառավարչից թոյլտվութիւն լուսանկարելու։


Կառավարիչը չկամինալով մերժել ինդիրս, այնուամենայիւ սկզբում գժուարանում էր, բայց և համաձայնուեց, բայց յետոյ խորամանկ կերպով ծիծակելով ասաց, որ դա միայն այն պայմանով կարելի է, եթէ ես կհամաձայնուեմ մասնակցել խմբին, որովհետև այդ ժամանակ լուսանկարը պարզ ցոյց կտայ, որ դա հիւրի խնդրանօք է քաշուած և գէպի նրան ունեցած յարգանքից զրգուած։ «Եւ դա մեղ կարող է փրկել մեր արած անհամեստ քայլու յանդիմունութիւնից», աւելացրեց նա։ Այդ խօսակցութիւնը պատահեց, մինչև որ մենք կանգնած էինք յատակի նեղ շերտի վրայ, որը չէր ծածկուած խսիրով, և հէնց որ ես սիրով յայտնեցի պատրաստականութիւնս և կամեցայ կատարել առաջարկած պայմանը, բայլելով խսիրի վրայ, աշակերտուհիներից մինը իսկոյն և ետ կառավարչի տուած նշանով ուզեց հանել կօշիկներս։ Բայց ի հարկէ ես շտապեցի այդ ինքս անել—և

շատ ուրախ էի խմբի մէջ կառավարչի ցոյց տուած տեղը  
գրաւելու, որտեղից աննկատելի է կօշիկներ չունենալս:

Շատ հաւանական է, որ եապօնացուն, որին առաջին  
անգամ կվիճակուի տեսնել եւրոպական պարերի բներանս-  
ները, որը կատարում են մեր ինստիտուտկաները այդ պա-  
րերի միջոցին, նոյնքան ծիծաղելի կթուայ նրան այդ բա-  
նը, որքան ինձ եապօնուհիների յատակի վրայ իրար դէմ  
«թեք ընկնելը», որի սուր հակապատկերը տեսայ գասամիջոցից  
յետոյ այդ ուսումնարանին կից մանկական պարտիզում, վե-  
րոյիշեալ օրիորդներից մինը, որ առաւոտը ձևականութեան  
դաս էր պարապում, այժմ այդտեղ իրազննութեան դասեր  
էր անցնում գործնականապէս երեխայոց հետ մի այնպիսի  
հմտութեամբ և ճարպկութեամբ, լրացնելով իր ասածները  
աշխոյժ կերպով դասատան գրատախտակի վրայ արագ նա-  
խագծեր կազմելով, որ նոյն իսկ եւրոպական ամենախիստ  
մանկավարժն անգամ կհաւանէր:

---

Վերի բացատրութիւններից նկատում ենք, որ այդ-  
տեղի կանանց տարրական զարգացումը և վարժուհիների  
պատրաստման խնդիրը վաղուց արծարծուած է եղել Եա-  
պօնիայում, թէև այդ բանը հանդիպել է շատ անգամ ար-  
գելքների, բայց այնու ամենայնիւ շատ արագ է առաջ գնա-  
ցել: Իսկ ինչ վերաբերում է կանանց զարգացման միւս աս-  
տիճաններին, նրանք այս վերջին հինգ տարուայ ընթաց-  
քումն են երեսցել, թէև դրա համար վաղուց աշխատել են  
ամերիկական միսսիօնարները, առաւել նրանց կանայքը,  
իսկ տէրութիւնը աջակցութիւն է ցոյց տուել նրանց հե-  
տեւեալ կերպով: Երբ 1870 թ. կայսեր ներկայացան միքանի  
լուսաւոր անձնաւորութիւններ, որոնք ժողովրդի բարօրու-  
թեան համար էին մտածում, համաձայնուեց նրանց այն  
մտքի հետ, որ յայտնի ընտանիքների օրիորդաց պէտքէ  
ուղարկել Միացեալ Նահանգները, ուսում ստանալու հա-



մար, որի առիթով հետևեալ կարծիքն արտայայտեց: «Մինչև այժմ մեղ մօտ կանանց չէին թոյլ տալիս ոչ մի սօցիալական խնդրում մասնակցելու, որովհետև դրանց մտառը անընդունակ էին համարում: Բայց այսուհետեւ, ստանալով ուսում, նրանք կապացուցեն այդ կարծիքի անհիմն լինելը, և կստիպեն դորանով ամենին յարգել իրանց»: Լուսաւորութեան առաջին ճանապարհ բացողները ուղեկորդում են Ամերիկա աւելի բարձր ուսում ձեռք բերելու. 1871 թ. ճանապարհորդած է այդտեղ և ներկայ Եապօնիայի կայսրուհի Խարու-Կօ, որը իւր հովանաւորութեան ներքոյ է առել տեղական համարեա թէ բոլոր իգական սեռի կըրթութեան գործը \*): Դորանից մի տարի անց մարզիկ իտօ, որը յայտնի է նոյն իսկ Եւրոպայում, այն ժամանակ Վաշինգտոնում գեսպան լինելով, իւր մի ճառախօսութեան մէջ հետևեալն ասաց. «Մենք մեր կանանց կրթութիւն տալով, բարձրացնում ենք դորանով Եապօնիայի ապագայ սերնդի զարգացման մակերեսոյթը: Ահա թէ ինչու եապօնացի օրիորդների խմբեր եկան ճեղ մօտ ուսանելու»:

Նոյնանման մտքեր յայտնում էին այդ ժամանակուայ Եապօնիայի առաջնակարգ գործիչները, բայց ժողովուրդը անտարբեր մնալով դոցա, գործը սկզբներում դանդաղութեամբ էր առաջ գնում: Բնորոշ է այն փաստը, որ նրանք իրանց իգական գպրոցները անուանում էին բարձրագոյն, լոկ այն պատճառով, որ նրանց կարծիքով կանանց աւելի բարձր կրթութիւն կամ անհասկանալի կըլինէր կամ թէ չէր հարկաւոր, թէև վերոյիշեալ ուսումնարանների ուսման ծրագիրը մեր պրօգիմնադիաների ծրագրից բարձր չէր:

Այդ ուսումնարանների մասին վերջին պաշտօնական տեղեկութեան հաշվում կարդում ենք հետևեալը.


«Այդտեղ ուսման ընթացքը տեսում է չորս տարի, բայց

\*) Ալիսա Բեկոնը իւր «կինը Եապօնիայում» հեղիականութեան մէջ, մեծ համականող է վերաբերվում դէպի Խարու-Կօ, թէ նրա անձնաւորութեանը և թէ գործունէութեանը:

տեղական պայմանների համաձայն կարելի է կրճատել և մի տարիով: Այդ պարտաւորեցուցիչ դասընթացին կարող են միացնել և լրացուցիչներ, որոնց ուսման դասընթացը կարող է տևել երկու տարուց ոչ աւել: Իսկ այն անձանց համար, որոնք կցանկանան այնպիսի արուեստագիտութիւն ու սումմասիրել, որոնք կանանց համար անհրաժեշտ են, դորա համար հիմնուած են յատկապէս առանձին դասընթացներ, որոնց ուսուցումը 2—4 տարի է տևում: Նրանք, որոնք աւարտելով ընդհանուր դասընթացը, ցանկանում են աւելի ընդարձակորէն ուսումնասիրել հանրակրթական առարկաներից մինը, կարելի է նրանց համար հիմնել առանձին դասընթացներ, որոնց ուսումնասիրութիւնը կտևի 2—3 տարի»: Չորս տարի է, ինչոր կանանց տուած է այս վերջին արտօնութիւնը:

Իգական և արական միջնակարգ դպրոցների թուերի տարբերութիւնը ցոյց է տուած դորան վերաբերեալ բացադրական դիօգրամմի վրայ, որի վրայ և տեսնում ենք, առաջինը վերջին հինգ տարուայ ընթացքում Եապօնիայում միջնակարգ կրթութեան արագ զարգացումն ընդհանրապէս, երկրորդ աշակերտուհների չնչին թիւը համեմատած աշակերտների թուի հետ, և երրորդ առաջին թուերի դանդաղ բարձրանալը մինչև 1899 թ., իսկ գորանից յետոյ այդ թուերի մեծանալը վերջին երեք տարուայ ընթացքում: Իգական բարձրագոյն ուսումնարանների թիւը 1897 թ. ընդամնը 25-ի էր հասնում, իսկ 1902 թ.-ի մօտերքը նա բարձրացաւ 66-ի, այսինքն նախկին թուից երկուս և կէս անգամ աւելի: Այդ ուսումնարաններում 1897 թ. սովորում էին 2,600 աշակերտուհներ, այն ինչ 1902 թ. նրանց թիւը կազմում էր 17,500, ասել է թէ հինգ տարուայ ընթացքում այդ թիւը մեծացաւ եօթն անգամ: Բացի զբանից վերոյիշեալ ուսումնարաններում վարժուհների թիւը (607) երկու անգամ աւելի է բան ուսուցիչներին (333), որով ապացուցվում է այն հանգամանքը, որ վերջին ժամանակներս մեծա-

նում է դէպի կանանց ուսուցչական ընդունակութիւն ունեցած հաւատը:



Զնայելով վերև բերուած միջնակարգ իդական ուսումնարանների մեծ թուերին, այնու ամենայնիւ դրանք բաւականութիւն չեն տալիս հասարակութեան պահանջին, որի պատճառով բաւականաչափ մասնաւոր ուսումնարաններ են բացուել, որտեղ 1902 թ. յունուարի 1-ին սովորում էին.

2.240 աշակերտուհիներ 64 ուսուցիչ և 69 ուսուցչուհիներով՝ Այդտեղի մասնաւոր հիմնարկութեանց մէջ առաջին տեղն է բռնում Տօկիօի «Ճ-օ հակվան»-ը, որտեղ սովորում են յատկապէս յայտնի ընտանիքների օրիորդներ, որը, հաւանականէ, պէտք է կայսրուհու հովանաւորութեան ներքոյ գտնուելիս լինի:

Իսկ ինչ վերաբերում է կանանց մասնագիտական դպրոցներին պէտք է ասած, որ դրանց թիւը դեռ ևս աննշան է. մինչև անգամ արուեստագիտական դասընթացներում, որոնք գտնվում են բարձրագոյն զարգոցներին կից և գլխաւորապէս ծառայում են Եազնիայում կանանց ուսուիլիտարական զարգացման, 1902 թ. յունուարի 1-ին այդտեղ ընդամենը սովորում էին 1,869 աշակերտուհիներ:

Շոշափելով միանգամայն այդ հարցը չի կարելի այդտեղ չափել և այն երկու հիմնարկութեանց մասին, որտեղ սովորում են յատկապէս արուեստագիտական առարկաներ—Տօկիօի նուրբ արուեստագիտական դպրոցը, որը բաղկացած է հինգ բաժանմունքից. գեղանկարչական, տիխնիկա—նկարչական, քանդակագործական, ճարտարապետական, որոնց օգնութեամբ կատարվում է մետաղի վրայ քանդակագործութիւն, ձուլագործական և ջնարկագործական: Դոցանից ամեն մի բաժանմունքի դասընթացը աւանդվում են հինգ տարում որոնց վերջին չորս տարին գործադրվում է յատկապէս ընտարած մասնագիտութեան առարկայի ուսումնասիրութեան վրայ: Այդտեղ կանանց ընդունում են միայն առանձին երկբրաժանմունքներում և մետաղի վրայ քանդակագործութեան դասընթացներում:

2—Տօկիօի երածաւական ակադեմիան, որը բաղկացած է երեք բաժանմունքից. ձայնաւորների մշակման, նուազարանական և նուազաստեղծական: Բացի այն, որ այդ ակադեմիան պատրաստում է միջնակարգ ուսումնարանների համար ուսուցիչ և ուսուցչուհիներ, նա հանդիսանում է և այդ երկրում, երոպական երաժշտութեան ներմուծող:

Արևմտեան կրթութեան ծրագիրը, որով այժմ զեկավարվում են եապօնական ուսումնարանները, այն աստիճան տարբեր են այն հայեացքներից, որոնք տիրում էին այդ երկրում մինչև միջի տարեշրջանը, կոչ ուսեցած դերը թէ ընտանիքում և թէ հասարակութեան մէջ, որ կանանց կրթութեան գործը, որ աստիճան էլ առաջ են տանում տեղական ազատամիտ գործիչները, այնուամենայնիւ նա բազմաթիւ արգելքների է հանդիպում, որոնք առաջացնում են պահպանողականները «խոռվութիւն գցելով թէ ընտանիքներում և թէ հասարակութեան մէջ»: Նրանք մատնացոյց են անում արհամարանքով այն օրիորդներին, որոնց լուսաւորութեան նոր գաղափարները ստիպում են յուղուել մինչ ջղերի գըրգումաս աստիճանը, լսելով շարունակ այն հակասող խօսքերը, որ նորա լուսմ են տանը և ուսումնարանում:

Պակաս չի վրդովում և քայլայում նրանց առողջութիւնը այն լարուած ու ծանրաբեռնուած հոգսերով լի աշխատանքը, որ կրում են նրանք դասատանը չմնալու պատճառաւ, տնային ծայրայեղ անրարեկից պայմանների շնորհիւ և երբեմն նոյն իսկ ծնողաց անկարեկցութիւնից. «Իթէ մենք շարունակենք հետեւել նոր կրթութեան ձերն—ասում են պահպանողականները, մոռանալով, որ ամեն մի ժամանակաշրջան ընթանում է իւր աւելորդ հրապուրչութեամբ, առաջ բերելով զանազան արհեստական դժուարութիւններ—մենք չենք ունենալ ոչ առողջ մայրեր և ոչ էլ կարգին կանայք»:

Մեզ ուսւացս համար, որոնք անցել ենք ութունական թուականների տարեշրջանը, երբ թէ կանանց զարգացման կուսակիցները և թէ իրանց կանանց ձիգերը, որոնք ուխտած իդէալների ձգտման ճանապարհի վրայ հանդիպում էի բազմաթիւ խոչնոտներին, շատ պարզ հասկանալի պէտք է լինեն այն տարածայնութիւնները, որ պատահում են այժմ Եապօնիայում երիտասարդաց և պահպանողականների, որդոց և ծնողաց կամ թէ ուսումնարանի հասարակութեան մէջ: Բայց միևնույն ժամանակում պէտք է լինեն այս պատճենագիրները, որ շուտով համալսարանական բաժանմունքները կընդարձակուեն: Այդ հիմնարկութիւնը պահպում է բազմաթիւ ազգեցիկ եապօնացիների օժանդակութեամբ, որոնց

նուել, որ նոր ուղղութիւնը Եապօնիայում հանդիպում է մի անպիսի լուրջ դժուարութեան—երիտասարդների փոքրանսակ ամուսնութիւնը,—որին մենք, փառք Աստծոյ, չենք հանդիպել: Այդտեղ մինչև ուսումնարանի դասընթաց աւարտելը, օրիորդի ծնողները սկսում են արդէն անհանգստանալ, որ իրանց աղջիկը այսպէս ասած «իրանց վրայ բեռ» չմնայ, աշխատում են առաջին հանդիպած փոքր ի շատէ յարմար փեսացուին տալ: Շատ պարզ բան է, որ հետզհետէ օրիորդները հասկանում են իրանց անընական դրութիւնը և ամեն կերպ աշխատում են ազատուել դորանից: Իսկ թէ դոցա համար ո՞ր աստիճան դժուար է այդ քայլը կամ թէ ինչ շփոթութիւններ է նա առաջ բերում ընտանիքներում, դժուար չէ այդ երեակայել, քանի որ Եապօնիայում կոչ հանգանդութիւնը նրա ամենամեծ առաքինութիւնն է կազմում: Այդ պատճառով էլ նոր ուղղութեան պատկանող և յառաջդէմ կանանց վիճակը վերին աստիճանի ծանր է այդտեղ և նրանց գաղափարների իրագործումն հանդիպում է մեծ խոչնոտների և արգելառիթների: Բայց և այնպէս նոքա ցոյց են տալիս յառաջադիմութիւն իրանց գործունէութեան մէջ, որի փայլուն ապացոյցը կարող է համարուել 1901 թ. Տօկիում հիմնուած «Կանանց համալսարանը»:

Այդ հաստատութեան հիմնարկին է քրիստոնեայ եապօնացի ժինցո-Ներուղան, որի արգիւնաւոր քարոզչութեամբ յաջողուեց—դորա առթիւ—մի նշանաւոր գումար հաւաքել: Սկզբնական նախագծով համալսարանական դասընթացը անցնելու համար երեք տարի էր որոշուած, նախմանելով այդտեղի նախապատքաստական դասընթացները, որի ուսման շրջանը տևում էր երկու տարի: Այդտեղ կարող էին մտնել բարձրագոյն ուսումնարանի դասընթացը աւարտած օրիորդներ: Մինչև այժմ այդ պատրաստական դասընթացներն են գլխաւոր գործ տանողները: Հիմնարկողը յուսով է, որ շուտով համալսարանական բաժանմունքները կընդարձակուեն: Այդ հիմնարկութիւնը պահպում է բազմաթիւ ազգեցիկ եապօնացիների օժանդակութեամբ, որոնց

թվումն է գտնվում տէրութեան ազատամիտ գործիչներից մինը—գրաֆ Օկումը: Ի դէպ առաջ բերենք այստեղ նրա արտասանած ճափի այն էական մասը, որը նա ասաց այդ համալսարանի բացման առիթով:

Արտայայտելով այն միտքը, թէ երկիրը երկու անգամ աւելի է ուժեղանում, երբ կանայք ստանում են նոյնպիսի զարգացում, որպիսին ստացել են մինչև այժմ տղամարդիկ, նա այդ բանը հաւասարագօր գրօշակի բարձրացմանը նմանացրեց: Այն երկիրները որոնք ունին այդպիսի գրօշակներ, նորա խիզախ կերպով առաջ են գնացել միւս ժողովուրդից, բայց Տաճկաստանը, Եփիպտոսը, Պարսկաստանը և Զինաստանը, որոնք կառավարվում են սովորական դրօշակով, անվիճելի է, որ նորա շատ յետ են հացել ժամանակի հոսանքից: Եազօնիան հին ժամանակը պաշտում էր Կնօջը, որի պարզ ապացոյցը կարող է լինել լոյս չաստուածունին, բայց հետզետէ կինը իջեցրած է, ի մեծ քամբաղութիւն տէրութեան, ստորին աստիճանի վրայ: Այդ տէրութեան հիւանդութիւնը, որով վարակուել է Եազօնիան Զինաստանից, թէն ուրիշ հանգամանքներում այդ երկիրը տուել է մեզ բազմաթիւ օգուտներ, այժմ գորանից բժշկուելու համար պէտք է դիմել կանոնաւոր միջոցների: Միակ ներգործող միջոցը պէտք է համարել ընտանեկան կեանքի իդէալական բարենորոգութիւնը, որը կարող է միայն իրա գործուել կանանց վիճակի բարենորոգմամբ—որին կնպաստեն ուժեղ կերպով այսօրուայ հաստատութեան նման հիմնարկութիւնները: Պէտք է ասած, որ նոյնանման մտքեր այժմ այստեղ արտայայտում են և շատ ուրիշ յայտնի անձնաւորութիւններ:

Ես չկարողացաւ ծանօթանալ այդ համալսարանի ուսման ծրագրի հետ, որի շինութիւնը ունի ընդարձակ լսարաններ, կարինէտներ, լաբորատորներ, հարուստ գրադարանն—միով բանիւ այն ամենը, ինչ որ պահանջվում է ժամանակակից բարձրագոյն ուսման հաստատութեան համար, բայց իհարկէ բանը ծրագրում չէ, եթէ նա նոյն իսկ շատ ընդար-

ձակ չէ, և եթէ նոյն իսկ ունի զանազան թերութիւններ այժմ, գրանք իհարկէ ժամանակի ընթացքում կուղղուեն, եթէ այդ հիմնարկութիւնը իրա ծրագրում եղած բնորոշ կէտը կիրագործի, «Հնարաւորութիւն տալ կանանց բնական ընդունակութեանց, մինչև նրանց վերջին կէտը զարգացնելու»:

Իր մտաւոր հորիզոնի ընդարձակութեամբ կինը Եազօնիայում շատ քիչ բանի մէջ միսիթարանք կարող էր գտնել, եթէ որ զլան օգնութեան չհասնէր օրէնսդրերի կանոնադրութիւնը 1898 թ. նրա անձնական իրաւունքների պաշտպանութեան գործում:

Այդ կանոնադրութեան մէջ ամենամեծ տեղը ամուսնալուծութեան հարցին պէտք է տալ:

Մենք արդէն մեր յօդուածի առաջին գլխում յիշեցինք, որ առաջ Եազօնիայում ամուսնալուծութեան դէպքեր շատ յաճախ էին պատճում, այնքան յաճախ, որ այդ վիճակագրական թուերի ցուցակը ուղղակի անհաւատալի էր թվում մեզ: Այն ինչ վերոյիշեալ օրէնսդրի լոյս տեսնելուց յետոյ եօթը տարուայ ընթացքում այդ վիճակագրութիւնը տալիս է մեզ հետևեալ զարմանալի թուերը:

**Տարեթուեր. Ամուսնութեան թուեր. Ամուսնալուծութիւններ**

1891	.	.	.	.	325,141	.	.	.	.	.	109,088
1892	.	.	.	.	325,651	.	.	.	.	.	112,411
1893	.	.	.	.	349,489	.	.	.	.	.	133,498
1894	.	.	.	.	358,398	.	.	.	.	.	116,775
1895	.	.	.	.	361,319	.	.	.	.	.	114,436
1896	.	.	.	.	365,633	.	.	.	.	.	110,838
1897	.	.	.	.	395,207	.	.	.	.	.	124,075

Արդէն այստեղ իսկապէս կարելի է համաձայնուել

Գուլկիի կարծիքի հետ, որը ասում է. «ամուսնալուծութիւնը, որպէս անհրաժեշտ սկզբունք մտել է եապօնական ընտանիքներում»։ Այդ աննօրմալ երկոյթի պատճառը պէտք է վերագրել կնօջ այն անփոփոխելի վիճակում մնալուն, որից առաջ եկած մեծ չարիքը հետզհետէ լայն ծաւալով սփովում է հասարակութեան մէջ։

Կայրարի «Մեծ Ուսունք» օրէնսգրքում մենք տեսնում ենք, որ առաջ ամուսնալուծութիւնները ուղղակի ամուսնու քմահաճոյքիցն էր առաջ գալիս, իսկ այժմ, բաւական չի վերջինի տուած յայտարարութիւնը կնօջ «հանել» իւր ընտանիքից։ Նոր օրէնքի հիման վրայ ամուսնալուծութիւնը չի կարող կայանալ առանց դատաւորի վճռի, կամ երկու կողմի համաձայնութեան, որտեղ ասվում է, որ եթէ ամուսինը իւր կնօջից չի կարող ինքնակամ համաձայնութիւն ստանալ ամուսնալուծութեան մասին, այդ դէպքում նա պարտաւոր է ներկայացնել իւր կնօջ անբարոյականութիւնը փաստերով ապացուցուած կամ նրա հասցրած լուրջ աւագաներ իւր ազգականեներին կամ վերջապէս նրա անյատանալը իւր տանից, բայց ոչ երեք տարուց պակաս ժամանակամիջոցով։ Թէ և դատարանի կայացրած վճիռները ամուսնալուծութեան վերաբերեալ այնքան էլ լուրջ հիմունքներ չունեն եւրոպական տեսակէտով, բայց այնուամենայնիւ այդ օրէնքը յայտնվում է, որպէս յառաջադիմութեան մի քայլ կանանց վիճակի բարելաւութեան։

Առանձնապէս այդ օրէնքի մէջ ուշագրութեան արժանի կէտը կայանում է նրանում, համեմատելով նախկին օրէնքների հետ, որ ամուսնալուծութիւնը կայանում է թէ կնօջ և թէ ամուսնու փոխադարձ համաձայնութեամբ։ Առաջինին իրաւունք է արվում նոյնիսկ բաժանուելուց յետոյ երեխաներից մի քանիսը իրան մօտ պահելու, եթէ նրան միջոցները ներում են։ Վերջապէս այդ օրէնքը թոյլ է տալիս դատաւորին, բաժանուող ամուսինների երեխայոց յանձնել մէկի կամ միւսի ծնողաց ինսամատարութեան։

Եապօնացի կինը գնահատելով մայրական սիրոյ զգաց-

մունքները, նա թունդ կերպով պաշտպանում է իրան շնորհուած այս նոր օրէնքի իրաւունքները և հարկաւոր դէպքում նոյն իսկ ծայրայեղութեան է հասցնում, երբ դատաւորի վճիռը նրան անտրդարացի է թվում։ Նորից Տօկիում (1903 թ.) ևս կարդացի համալսարանի պրօֆեսորի կնօջ գործ դրած սպանութեան փորձը իւր ամուսնու դէմ, որին նա վիրաւորել էր ատրճանակի հարուածով։ Դորա պատճառը եղել է այն, որ իրենց երկուսի փոխադարձ համաձայնութեամբ բաժանուելուց յետոյ, ինքը չի կարողացել ձեռք բերել իւր երեխային։ Նա է միանգամայն հետաքրքիրը, որ տեղական պահպանողական լրագիրները թէկ չէին քաջալերում կնօջ արդ վարմունքը, բայց և զանում էին, որ դա առաջ է եկել ուղղակի մայրական իրաւունքների դէմ ըըռնութիւն գործ դնելուց։

Կանդ չասնելով այս նոր օրէնքի և միւս յօդուածների վրայ, որոնք վերաբերում են կնօջ գրութեան բարեհորդման, մենք առաջ կը բերենք միայն պրօֆեսոր Պուրբինսի յառաջարանի հրաշալի տողերը, որը նա կցել է նոր օրէնքը թարգմանութեան։

«Ժամանակակից եապօնիայում կատարուած յառաջադիմութեան ամենամեծ բայլը կանանց զրութեան բարեհորդումն է։ Թէկ կինը այդտեղ դեռ ևս համահաւասար իրաւունքի տէր չի տղամարդուն, բայց և այժմն մի բանի յայտնի հանգամանքներում նա կարող է ընտանիքի գլուխ կոչուել, կայք ժառանգել և տիրել ու կառավարել ինքնիշխանաբար։ Նրան շնորհուած է նոյնպէս ծնողական իրաւունքներ, այսինքն, այրիտցած ժամանակ նա կարող է իրեն երեխայ որդեգրել, իրեն երեխայոց ինսամակալունի նշանակուել, նոյնպէս իրաւունք ունի ընտանեկան խորհուրդներում ձայն ունենալ»։

Տեղին է այստեղ նկատել, որ կանանց զրութեան բարեհորդման համար լրյա տեսած նոր օրէնքի գործադրութեան վրայ ազդեցութիւն ունի և կայսերական ընտանիքը, որը այդ երկում մեծ հեղինակութիւն է վայելում։ Այսպէս,

օրինակ, կայսերական տօներին թագուհին շատ անզամ հրեռում է ժողովրդին կայսեր հետ նրա աջ թևի կողմը՝ մի բան, որ հին Եապօնիայի համար շատ խորթ էր, որտեղ ժողովուրդը ընտելացել էր այսպիսի տօների ժամանակ թագուհուն, որպէս կնօջ, տեսնել թագաւորից շատ հեռու: Նոյն պէս կ կայսերական արձաթեայ հարսանիքի գէպքը 1894 թ., որի նմանը չէր մտել գեռ ևս Արևելեան պատմութեան էջերում: Վերջապէս թագաժառանդ մեծ իշխանի հարսանիքը 1900 թ. մայիսին, որը կայացաւ այնպիսի հանգամանքներում, որոնք անկանակած որպէս օրինակ կթողնեն իրանց ազգացութիւնները ժողովուրդի վրայ: Մինչև այդ ժամանակ, 2,600 տարուայ տեղական պատմութեան մէջ, գեռ ևս չի գտնուել մի թագաժառանդ, որ հրապարակու ամուսնանար: Այս անգամ շինտօյական աղանդի, պալատի քահանայի աջակցութեամբ հնարուած էր մի առանձին ըլո ծիսակատարութիւն, որտեղ հարսն ու փեսան հրապարակու խօսք տուին իրար հաւատարիմ մնալու: Պատկից յետոյ ընդունելութեան ժամանակ նորահարսը կանգնած էր իւր ամուսնու աջ թևի կողմը:

Մամուլը Եապօնիայում արգէն շատ վաղուց նոյն ազգեցութիւնն ունի, ինչ որ Եւրոպայում կամ Ամերիկայում. գորա համար էլ, շատ բնական է, որ նա անտարբեր չէր մնում «կանանց հարցի» վերաբերմամբ: Վերջին 1902 թ.-ի տարիների ընթացքում այդ հարցի մասին համարեա քառասուն պարբերական հրատարակութեանց մէջ նիւթեր զրուեցին: Լոյս են տեսել և առանձին զրքեր այդ հարցի վերաբերմամբ, բայց գոյանից և ոչ մինը չի արժանացել այն մեծ ուշադրութեան, որին արժանացաւ ֆուկուզավի աշխատութիւնը, որին կարելի է առանձին յայտնի և յառաջադէմ գործչի տեղ տալ տեղական լուսաւորութեան ասպարելում: Ֆուկուզավի հեղինակութիւնը կազմուած է երկու մա-

սից. առաջին մասը «Մեծ ուսմունք կանանց համար» զրքի սրամիտ քննադատութիւնն է պարունակում, իսկ երկրորդը «Մեծ ուսման նոր փորձ կանանց համար», վերնագիրն է կըում: Զնալիութ, որ այստեղ հեղինակը կնօջ վերաբերմամբ նոյն իդէալներն է քարոզում, որը վաղուց Արևմտքում իւրացրած է և մի առանձին նորութիւն չի ներկայացնում ոչ եւրոպացու և ոչ էլ ամերիկացու համար, բայց եապօնական հասարակութեան համար նա նչեց որպէս վրդովեցուցիչ որոտման շանթ և յեղափոխական կոչ, հիմնայատակ անելով մինչև այդ ժամանակ այդտեղ տիրող թէ ընտանեկան և թէ հասարակական խաղաղ կեանքը: «Հին ժամանակ, երբ մարդիկ, աւելի քիչ համբերատար բնաւորութիւն ունէին, քան եապօնացիները, անշուշտ խարոյիկի վրայ կրարձրացնէին այն մեղապարտին, որ կյանդգնէր ժողովուրդի բարոյականութեան վերաբերեալ կազմած օրէնսգրքից, նոյն իսկ աւելի քիչ շեղուել, քան ֆուկուզավան»:

Հեղինակը իւր աշխատութեան մէջ արտայայտում է այն միտքը, որ թէ կնօջ և թէ տղամարդու նոգեկան էական պահանջները մինոյն են և դորա համար էլ կանայք իրաւունք ունեն տեղ զրաւել ոչ միայն ընտանիքում, այլև հասարակութեան և տէրութեան մէջ: Ասելով, որ ընդհանրապէս «կանանց գործը» աւելի ուրիշ յատկանիշ ունի, քան տղամարդու գործը, ֆուկուզավան պնդում է, որ առաջինն աւելի կարեոր է քան երկրորդը, ուստի նրանք իրաւունք պէտք է ունենան յարգուելու ուրիշներից որպէս մարդկային անձնաւորութիւններ: Պրօֆեսսօր Զամբերլէնի խօսքերով այստեղ հեղինակը մի առանձին գեղարդահստական նկարագրութեամբ բացատրում է «ընտանիքի իեղծ մաքրութեան» մասին և տղամարդու վրայ զնում է նոյն բարոյական պահականութիւնը, ինչ որ դրուած է կնօջ վրայ, և պահանջում է նոյնչափ ողջախոն լինել, որչափ էլ նա պահանջում է կնօջիւ: Դորանից յետոյ ֆուկուզավան կանգ է առնում նրա վրայ, որ կանայք պէտք է օգտուեն ամեն բանով կատարելապէս նոյն ազատութեամբ հասարակութեան մէջ, ինչ չափով որ օգտ-

վում են աղամարդիք, և ամուսինը ընտանիքում պէտք է վերաբերուի կնօջը կատարելապէս նոյն ուշադրութեամբ, ինամբով և նախազգուշութեամբ, ինչպէս որ ինքն է պահանջում նրանից:—«Կայրարը ասում է, որ եթէ կինը տեսնում է, որ աղամարդը իրաւացի չէ, այդ դէպքում նա պէտք է ընտրի այնպիսի ժամանակ, երբ ամուսինը ըստ երեսին տրամադիր կլինի իրան լսելու. նա պէտք է զգուշութեամբ ու փաղաքշանօք յիշեցնէ նրան գործած սխալմունքի մասին: Իսկ եթէ փորձը յաջող չլինի, պէտք է այդ բանը յետաձգի աւելի յարմար ժամանակի: Եւ վերջապէս եթէ նրա բոլոր փորձերը անյաջող լինեն, կինը պարտաւոր է իսպառ ճրաժարուել այդ մտքից, որպէս զի ամուսնուն չը զայրացնի: Դա շատ խելացի միտք է և արգարացի. բայց այդ միենայնը կարելի է պահանջել, որ եթէ տղամարդը ահանում է, որ իւր կինը անիբաւացի է, ուրեմն նա չպիտի զայրացնէ նրան իւր պնդմամբ. այն ժամանակ, երբ կինը տրամադրուած չէ նրան լսելու, պէտք է նա ընտրի դուր համար աւելի յարմար վայրկեան»:

Տղամարդու պարտականութիւնները դէպի իւր ընտանիքը բնորոշվում է ընդհանրապէս «յեղափոխական սկըզբունքներով», ինչպէս այդ ասել էին Ֆուլկուզավի պահանգողական քննադատները, թէ հեղինակը էականապէս պաշտպան է հանդիսանում նրան, որ «տղամարդը ոչ մի դէպքում չի կարող պարտաւորացնել կնօջը ընտանիքի բաղդաւորութեան պատասխանափութեամբ, որովհետեւ ինքն ևս պատասխանառու է ընտանեկան խաղաղութեան համար նոյն չափով, որ չափով որ ինքը պահանջում է վերջինից: Դա ինարկէ մեզ համար շատ բնական պահանջներ են, բայց ինչ վերաբերում է եապօնիային, ուստի մի այնպիսի նորութիւն էր, որ շատ տղամարդիկ վախեցան Ֆուլկուզավայի գրքի աղդեցութիւնից և արգելեցին իրանց նավելի և հեղ կանանց և օրիորդներին այդ գիրքը կարգալ: Շատ ուսումնարանների գրադարաններում նոյնպէս արգելուած է այդ գիրքը: Դորա հետ միասին չի կարելի չցոյցտալ և մի հետաքրքիր դէպք:

Շինտօյական եկեղեցու մի բահանայ պսակաղբութեան ժամանակ, երիտասարդ զայդի ցանկութեամբ, որոնք պատկանում էին «աղամամիտ» ընտանիքներին, ընծայեց նորահարսին թէ Կայրարի և թէ Ֆուլկուզավայի գրքերից մի-մի օրինակ,—գուցէ նրա համար, ինչպէս նկատում է սրամիտ կերպով Ալիսա Բեկօնը,—«առաջարկել երիտասարդ կնօջը ընտրութիւն անել հնի և նորի, կամ թէ գուցէ նոյն իսկ—որ կինը կարողանայ սովորացնել իր ամուսնուն այն, ինչ որ Ֆուլկուզավան առաջարկում է, միենոյն ժամանակ, հռանդուն կերպով կատարել դարերով սրբագործուած կայքա իրիրատաները»:

Սյժմ մենք դառնանք այն հարցին, թէ իրանք կանալք մը աստիճան են մասնակցում իրանց դրութիւնը բարենորոշման կոուի ասպարիզում, որը վարում են այդ ասիթով ուժեղ սեռի վլխաւոր ներկայացուցիչները: Եւ ինչպէս էլ որ պէտք էր սպասել, շատ մեծ գործունէութիւն են ցոյց տալիս:

Աւդ բանի փայլուն ապացոյցներից մէկը կարող է լինել Թուղարական ասպարիզուն 1901թ. բացած անզիներէն լեզուի ուսումնարանը, որը ձեռք է բերել իր մանկավարժական պատրաստականութիւնը Ամերիկայում, նոյն իսկ միքանի անզամ ճանապարհորդելով այդտեղ, յատկապէս այդ մասնաձիւղի մէջ կատարելագործուելու համար: Այդ ուսումնարան կարող են մտնել բարձրագոյն դպրոցն աւարտած օրիորդներ, զրա նպատակն է պատրաստել տեղական ուսումնարանների համար անզիներէն լեզուի վարժուհիներ: Թէ հատ վաղուց այդտեղի կանանց արտօնութիւն էին տուել քննութիւն տալով այդ առարկայ, տեղական ուսումնարաններում այդ պաշտօնը վարելու, բայց այդ բանը չափազանց դժուար ձեռք բերելու պատճառաւ, շատ քիչ թեկնածուհիներ էին գտնվում: այդ պատճառով էլ այժմ Թուղարի ուսումնարան միշտ լիքն է լինում աշակերտուհիներով: Այստեղ մեզ համար պակաս հետաքրքիր փաստ չի ներկայա-

նուռ և այն, որ եռանդուն հիմնադրուհուն 1902 թ. ընտրեցին քննիչ յանձնաժողովի մշտական անդամուհի պետական հարցաքննական անգլիերէն լեզուի դասատուների թեկնածու և թեկնածուհիների—որի պատիւը մինչեւ այդ ժամանակը չեն ունեցել նրա նախորդուհիներից և ոչ մինը Եապօնիայում, և որը ծառայում է այդ երկրում որպէս «կանանց հարցի» յառաջադիմութեան նշանաբան:

Կանանց ցոյց տուած ինքնազործութիւնը իրանց վիճակի բարելաւելու գործում երևան է գալիս ինչպէս առնասարակ ուրիշ երկրներում, նոյնպէս և եապօնիայում, զանազան ընկերութեանց հիմնարկութեամբ, բարեգործական, հայրենասիրական, մանկավարժական, այլ և գիտական—«ինքնակատարելագործութեան նպատակով և կարելոյն չափ ապահովութիւն ժամանակի ոգուց յետ չմնալու», ինչպէս ասած է «կանանց ինքնօգնութեան ընկերութեան» կանոնադրութեան մէջ:

Ի դէպ նկարագրեմ ես այդտեղ իմ ծանօթութիւնս մի երիտասարդ եապօնուհու հետ, որը յիշեալ ընկերութեան անդամուհին էր և որից ես ստացայ նիւթիր, որոնք ծառայեցին ինձ գնահատելի կերպով յօդուածիս կազմելու:

Ես գնում էի երկաթուղիով Նոյեմբերին Սիմոնոսեկից Կորի: Իմ ուղեկից տասնումէկ հոգի ճանապարհորդներից—եօթը եապօնացի և չորս եապօնուհիներ — ինձ շատ հետաքրքրեց մի երիտասարդ դոյց—ամուսիներ թէ իրանց արտաքինով և թէ վարուեցողութեամբ դէպի միւսները: Ամուսինը, տիպիկական տգեղ լուրջ դէմքով եապօնացի, հագնուած էր եւրոպական ձևով, իսկ գեղաշնորհ, նաղելի և կանացիութեամբ օժտուած կինը հագնւած էր թեթև կտորից ազգային կիմօնօ, որը լիովին համապատասխանում էր օրուայ շոգին: Նրա հրաշալի և մաղերը սանրած էին առանց այն սեթենեթութեան և առանց օծման, որը յատուկ է ներկայ եապօնական սանրուածքին: Շատ հաւանական է, որ շոգի պատճառով էր նա առանց տարի—մեր գուլպաների տեսակը, բայց կոշտ պատուանդանով—մերկ, բայց ինսամքով

պահած ոտքերը զարգարում էին բարձր ոտքի աթոռիկը—գետա,—իսկ կիմօնօի յետ ծալած վեշիրից երկում էին զգալի կերպով վեր: Մեսք արդէն իմանում ենք յօդուածի առաջին զլիսից, որ նոյնանման մարմի մերկացումները եապօնիայում, անվայել բան չեն համարվում...

Վերապառնալով վագոն—ճաշաբանից, որտեղ ես ճաշել էի, տեսայ, որ վերոյիշեալ ճանապարհորդուհին բազմոցիս վրայ թողած իմ Ալիսա Բեկօնի գիրքը բռնած ունի ձեռքում...

Նա տեսնելով ինձ, ամօթահարուած ներողութիւն խընդուց անգլիերէն քրթմանալով, ձգեց ձեռքից զիրքը շտապով, որը պատճառ եղաւ իմ ծանօթութեանս նրա հետ, իսկ յետոյ իր և իր ամուսնու հետ խօսակցութեան: Նրանք երկուսն էլ իմանում էին անգլիերէն, ամուսինը—տանելի, իսկ կինը անթերի, որովհետեւ կորէում բարձրագոյն դպրոցը աւարտելուց յետոյ, հօր ցանկութեան համաձայն անց էր կացրել երեք տարի Ամերիկայում: Խօսակցուհիս մինչև անգամ անձամբ ծանօթ գուրս եկաւ Ալիսա Բեկօնի հետ, որի գիրքը մեծ յարգանքի է արժանացած, նրա ասելով, իր հայրենակցուհիների շրջանում:

Վատասէ-Սան—այսպէս ներկայացրեց ինձ ճանապարհորդուհուն իր ամուսինը, յայտնեց, որ դա թէ վերոյիշեալ կանանց «ինքնօգնութեան ընկերութեան» և թէ «Օգնութեան բանակի» գործունէութեամբ, որը կովում էր անառականոցներում աղջկերանց վաճառման դէմ և աշխատում էր հանել այդ տարաբախտ զոհերին մի այլպիսի խայտառակ ստըրկութիւնից, տանելով նրանց դէպի «ժուժկալութեան ճանապարհը»: Նա յայտնեց ինձ ի միջի այլոց, որ եապօնիայում մեր գիւլլօմատիկական ներկայացուցիչներից մէկի միջոցով ստացել է «Ա. Պետերբուրգի կանանց պաշտպան» և «Մոսկուայի կանանց վիճակը բարենորոգող» ընկերութեանց կանոնադրութիւնները, որ երկուսն էլ թարգմանուել են իւր

պատուէրով եապօներէն և իւր զեկուցմամբ շուտով կը-  
քննուեն դոքա միւս կանոնադրութեան հետ միասին սալվա-  
ցիօնական ընկերութեան նիստում։ Այդ վերջին ընկերու-  
թեան գործունէութեան մասին կարելի է կարգալ և Ալիսա  
Բեկօնի գրում։ Վատասէ-Սանը, դորա մասին խոստացաւ  
ինձ ուղարկել աւելի հարուստ նիւթեր և իսկապէս այդ  
գէպքից երկու շաբաթ յետոյ ես փոստով ստացայ Նադասա-  
կիում խոստացած գիրքը, որի մէջ գանվում է պատերազմ  
պոռնկութեան գէմ յօդուածը, և որի բովանդակութիւնը հա-  
մառօտապէս բացադրել է ցածը։

Վատասէ-Սանը խօսակցութիւնից իմացայ, որ Տօկիօի  
կանանց շրջանում յղացել է մի միտք, կազմել մի ընկերու-  
թիւն «Պատերազմին կուսակից, կանանց ընդդիմադիր ըն-  
կերութիւն» որը և մօտ է իրագործման։ Իմ խօսակցունիս,  
երեաց, որ միլիտարիզմի հակակրողներիցն էր և աշխատում  
էր հաւատացնել ինձ, որ եապօնիայի ժամանակակից ամե-  
նալաւ ներկայացուցիչներն ևս կողմնակից չեն նրան։ Այդ  
միջոցին ամուսինը ինչոր եապօներէն խիստ կերպով ընդդի-  
մախօսեց կնօջը այդ առթիւ և դորանից յետոյ նա մեր  
այդ նիւթի մասին խօսակցութեան այլիս չմասնակցեց, պա-  
հելով իրան այնունետե զապուած լուութեամբ։ Վատասէ-Սանն  
ասաց նոյնպէս, որ ինըը շատ լաւ ծանօթ է Բերտի Սուն-  
տէր «Հեռու զէնքեր» գրքի և անդիմացի Ստէղի նոյն հար-  
ցի առիթով գրուած յօդուածի հետ։

Թող ընթերցողը չկարծի, որ ես Վատասէ-Սան-ի հետ  
ունեցած խօսակցութիւնս առաջ բերի այսպէս մանրամաս-  
նորէն նրա համար, որ այդ զարգացած եապօնունուն ընդու-  
նեցի իւր սեռի նոր ուղղութեամբ այլասեռուած տիպի ներ-  
կայացչունու տեղ։ Թէկ կասկած չկայ, որ նա պատկանում է  
նոցա առաջնակարգ դասակարգին և հաւանական է, որ նա  
նոյն իսկ եւրոպական երկրների կանանց շաբրում կարող էր  
առաջնակարգ տեղ բանել։ Թէ նրա առաջ բերած փաստերը  
և թէ նրա յափշտակութեամբ արտայայտուած երիտասարդ  
կանանց կազմած ընկերութեանց գործունէութիւնները ետ-

աօնիայում ապացոյց են, որպէս յաւելուած վաւերացման,  
վերկը առաջ բերած, այդ երկրի յառաջադիմութեան շարժ-  
ման։

Եապօնիայում կանանց զբութիւնը բարենորոգող գոր-  
ծողների թվում չի կարելի չյիշել բրիստոնեայ ընկերու-  
թիւնների աջակցութիւնը ես, որոնք այդ երկրում թէն դան-  
դաղ կերպով, բայց և անընդհատ ընդարձակում են իրանց  
գործունէութեան ծաւալը։ Թէկ ճիշտ է, քրիստոնէութիւն ըն-  
դունած եապօնացիների թիւը 1903 թ. յունուարի 1-ին հաս-  
նում էր միայն 134,000-ի, այսինքն ամբողջ բնակչութեան  
երրորդ տոկոսիցն էլ պակաս, բայց և այնպէս նոքա այդ-  
տեղ առաջնակարգ գործիչների տեղն ունեն գրաւած, որ-  
պէս օրինակ պարլամենտի, համալսարանների, ուսումնա-  
րանների, ազատամիտ հրատարակութեանց խմբագիրների և  
այլն, որոնք լուրջ կերպով ազդում են ժողովուրդի լուսա-  
ւորութեան գործին... Ալիսա Բեկօնը հետեւել կերպով է  
յայտնում իւր միտքը եապօնուների գրութեան բարենո-  
րոգման մասին, «Եթէ երբ և իցէ եապօնացի կնօջը վիճա-  
կուած է կանգնել այն բարձրութեան վրայ, որի վրայ գըտ-  
նվում է կինը քրիստոնեայ երկրներում, այդ միայն կարող  
է պատահել այն ժամանակ, երբ այդ երկրում քրիստոնէու-  
թիւնը կտարածուի աւելի լայն ծաւալով»...

Մէնք արդէն յիշել ենք քրիստոնեայ միսսիօնարների  
գործունէութիւնը եապօնիայում կանանց հարցի վերաբեր-  
մամբ։

Իսկ այժմ դառնանք այն հարցին, թէ նրանք ինչ չա-  
փով են մասնակցում այդ երկրում անառականոցների զոհերի  
պատման համար մղած կովում։

Մինչև յեղափոխութեան մուտք ունենալը եապօնիա  
ծնողաց կամ նրանց փոխարինող ինաւականների աղջկե-  
րանց վաճառումն պոռնկատներում օրէնքով չէր արգելուած,  
և շատ ժամանակ չէ, ինչոր 1872 թ., կայսերական հրովար-

տակով վերացուեց այդ խայտառակ առետուրը: Թէև այդ բանը շարունակվում է և դրանից յետոյ, բայց քողարկուած կերպով, այն է վերոյիշեալ տների պահողները աղջկայ ծնողաց մի որեէ գումար են փոխ տալիս, փոխարէն առնելով նրանցից մի պայմանագիր, որտեղ իրաւումք է տրվում նրան պահել թշուառ գոհին ծառայացնելու, մինչև իր տրուած գումարի վերադարձում: Այդտեղ արդէն չշիշելով, որ վերոյիշեալ գումարը ժամանակի ընթացքում հետպհատէ մեծանում է և ոչ փոքրանում—որովհետեւ դրան աւելացնում են և աղջկայ այդտեղ մտնելու օրից ամեն մի հագուստի զինը, որ գնուել է նրա համար,—այդ չարաբաստիկ պայմանագրի աղղեցութիւնը ամրապնդվում է և հետեւալ պայմանով, որը յիշուած է այդտեղ, այն է պոռնկատէրը կարող է բաց չթողնել իր գոհին ժամանակամիջոցից առաջ, եթէ նոյն ըսկ առաջարկեն վճարել լիովին պարտը, այն դէպում, եթէ աղջկայ այդտեղ մնալը օգուտ է բերում նրա «հիմնարկութեան»:

Սրանից տասը կամ տասներկու տարի առաջ մի քանի հապօնացի բրիստոնեայ ընկերութիւնների գործ դրուած եռանգուն ջանքերը այդ չարիքի առաջն առնելու համար յաջողութիւն չունեցան, որովհետեւ ժողովուրդի կողմից քաջալերութիւն չփառ: Շատ անգամ երբ լարաններում ճառեր էին արտասանվում այդ հարցի առիթով, երիտասարդութեան կողմից արժանանաւում էին սուլոցների: Երկար ժամանակ կանանց օգնութիւն մատուցանելու հարցը, որ ուղում էր դոցա աղատել այդ խայտառակ տեղից, չկարողացաւ նպատակին հասնել:

Այդպիսի գոհերից մինը 1900 թ. մի դաւառական քաղաքում՝ բաղդ էր ունեցել մի քանի բարի մարդիկ գտնել, որոնք խոստացել էին վճարել նրա փրկանքի զինը, բայց դորան չէր համաձայնուել պահողը, որի համար այդ գոհը դիմել էր օգնութեան ամերիկական միսիոնարին ու թէ իր միսիոնարի և թէ նրա աղղեցիկ բարեկամների—այսինքն քրիստոնեայ եապօնացիների շնորհիւ, գործը գատարանին էր

յանձնուել: Իսկ վերջինը վճռել էր յօգուտ աղջկան, որ եթէ պարտքը վճարուած է, կնշանակի աղջիկն էլ ազատ է, թէև այդ վճռին շատ դէմ էր աէրը և չէր համաձայնվում բաց թողնել զոհին: Դորանից յետոյ այդ վճիռը տարածուեցաւ օրէնքով 1900 թ. հոկտեմբերի 2-ին և ապագայում սոյնանման գործ ունեցողները ողերուեցին այս յաջողութեամբ, իհարկէ թէ անհաներ և թէ հիմնարկութիւններ, որոնք վաղուց սկսել էին պոռնկութեան դէմ կուր մղել: Դոցա թվում առանձնապէս եռանդուն կերպով սկսեց գործել «Օգուտթեան բանակ» Տօկիօի ընկերութեան բաժանմունքը: Նա այդ առթիւ մի բրոշիւր հրատարակեց, որտեղ յորդորելով կոչ էր անում այդտեղի գոհերին, հրաւիրելով նրանց ուշագրութիւնը, գործ դնել ամեն ջանք թողնելու այդ խայտառակ կեանքը, խոստանալով նրանց ամեն մինին աջակցել, ով որ կը կամենայ աղատուել այդտեղից: Սալվացիօնականների հետ սկսեց եռանդուն կերպով աշխատել և տեղական յառաջադէմ մասուլը, որոնց յաջողուեց, թէև երկար կուելուց յետոյ, այդտեղի տներ պահողների հետ, նոյն իսկ զինուած ընդհարութիւններ ունենալով իօշիվարայում, գոնէ մասսամբ իհրանց նպատակին հասնել»,—և այդտեղ ապրող ամեն մի աղջիկ իմացաւ, որ իրան պարգևուած է նոր օրէնքի իրաւունք և եթէ ուղենար օգտուել զորանից, զիտէր թէ ում պէտք է դիմէր ինքը:

1900 թ. հոկտեմբեր ամսուայ ընթացքում բացառապէս «Փրկութեան բանակի» Խօշիվարայում գործ դրած եռանդուն ջանքերի շնորհիւ, այդտեղի յաճախողների թւից գիշերուայ ընթացքում մօտաւորապէս 2000 հոգի պակասեց... Բացի դորանից այդ ամսուայ ընթացքում միմիայն Տօկիօւմ 6335 վակերաթղթերով հաստատուած պոռնկուններից 1000 հոգի թողին հասարակական տները, որոնցից մեծ մասը վերադաւ իրանց ընտանիքները, իսկ նրանցից շատերը ընդունուեցին «փրկութեան բանակի» հովանաւորութեան ներքոյ:

«Մենք փաստերով ունենք հաստատուած»,—ասում է Ալիսա Բիկօնը,—այնպիսի յաջող պատերազմի պատմութիւն,

որը մղուել էր մի ախտի դէմ, և որը Եապօնիայում գոյութիւն ունէր երեքհարիւր տարի շարունակ,—պատերազմի, որի սկզբնապատճառը քրիստոնեաներն էին և որին աջակցեց և ինքը ժողովուրդը, զրա առաջ խոնարհուելով թէ ոստիկասութեան և թէ տէրութեան ոյժը: Ինձ թվում է, որ գժուար է գտնել մի ուրիշ երկիր, որի ժողովուրդի գիտակցութեան վրայ քրիստոնէութիւնը թողնէր այն խոր տպաւորութիւնը, քան Եապօնիայի, որի աղղեցութեան ներքոյ մղուեցաւ այն խաչակրած պատերազմը հասարակական տների դէմ: Այն հուետորը, որը տառը տարի առաջ լսարաններում խօսում էր այդ հիմնարկութեանց ընդդէմ և փաստերով ցոյց տալիս նոցա վլաստակար աղղեցութիւնը, ստիպուած լրում էր երիտասարդների սուլոցի և աղմուկի ձայնից, բայց այժմ, նոյն լսարանը ողջունեց յարգանքի մեծարանքով և ծափահարութեամբ այն նոր ասպարէզ մտնող մարտնչողների աղղանուանց կարգալու միջոցին, որոնք հակառակ էին նոյն հիմնարկութեան»:

Որ 1900 թ. յետոյ էլ չդադարեց վերոյիշեալ պատերազմը, զրա մասին վկայում է այն յօդուածը, որ 1903 թ. միսսիօնարները հրատարակեցին Իօկօնամում, ի լրումն այդ յօդուածի կարգում ենք. «Ենորիւ ագիտացիայի այն ընդարձակ գործունէութեան և գործ դրած եռանգուն ջանքերի պռնկութեան դէմ, աւելի շատ օգուտ տուաւ քան թէ սպասում էինք սկզբում: Թէկ պարտքերի վճարման պատճառաւ աղջկերանց մօտաւորապէս 80% մնացել է այդ խայտառակ արհեստին ծառայելու, բայց և այնպէս վերջերս այդտեղ մնացին ոչ այնքան մեծ թուով պռոնկուհիներ, որքան որ սկզբում կարծում էինք: Առաւել ևս փաստը ցոյց է տալիս, որ երկու տարուայ ընթացքում նրանց թուի մի չորսրորդ մասը պակասեց, որը մեր գործի կողմնակիցներին պէտք է քաջալերի: Դրա հետ միասին պակասեց և այդտեղ նոր մտնողների թիւը, որը գուցէ աւելի յարգի է, քան յանցաւորների փրկութիւնը: Պակասեց և պռոնկատներում յաճախողների թիւը, որը թուլացնում է փթած կարգի նիւթական

կողմը: Պոռնկանոցներ պահողներից շատերը նոյն իսկ փակեցին այդ տները և աղջկերանց պատ թողին»... «Ահաւասիկ մի փաստ, որ այդ շարժումը շարունակվում է քրիստոնեաների միջոցաւ և դա ցոյց տուեց բարեմիտ եապօնացիներին քրիստոնէութեան գործնական կողմը, դրանով աւելի ամրապնդելով նոցա հաւատը և արդիւնաւէտ դարձնելով աւետարանականների ընկերութեանց գործունէութիւնը բնակչութեան ստորին խաւերում»:

Կանանց գրութիւնը բարեփոխելով Եապօնիայում, շատ ընական է, որ փոխուեցին և նրանց գործունէութեան առպարէզները, ոչ միայն ցածը այլ և բոլոր գասակարգի կանանց համար: Աժմ շատ զարգացած եապօնուհիներ ոչ միայն իրանց են կարողանում պահել, այլ և նիւթականապէս օգնում են իրաց ծնողաց, ամուսնուն բացի մանկավարժական ասպարէզում աշխատելով, այլ և զանազան ուրիշ հիմնարկութեանց մէջ, ինչպէս փոստատան, հեռագրատան, հեռախօսական կայարաններում,—որոնք այնքան բաղմաթիւ ցանցերով ծածկել են Եապօնիեայի քաղաքները, միացնելով զբանց գիւղերի և նոյն իսկ աւանների հետ,—տըպարաններում, որտեղ կանայք ծառայում են մեծ մասամբ գրաշաբների օգնականուհու պլաշտոնում և այլն և այլն: Որպէս բացառութիւն կարելի է մատնացոյց անել և երկու երեք կին—բժշկուհիների վրայ, որոնք այդ իրաւունքը ստացել են Ամերիկայում, իսկ այդ մասնագիտութեան վերաբերմաք սկզբնական կրթութիւն ստացել են տեղական մասնաւոր ուսումնարաններում: Եթէ առ այժմ գժուար է ասել, թէ ինչպէս կարող են գործել զբանք իրանց ընտրած ասպարէզում, բայց և դրա հետ միասին պարզուեց, որ սըրանից տասը տարի առաջ, հիւանդներ խնամելու գործում, որը բացուեց եապօնուհիների համար, ցոյց տուին այդ տեղ նրանք վերին աստիճանի մեծահոգութիւն, այդ պատճառով էլ զբանից շատերի համար բացուեց գործունէութեան լայն ասպարէզ: «Կարմիր խաչի ընկերութեան» հիւանդանոցում 1902 թ. համարեա 1000 կանայք դասախօսութիւններ էին

լուսմ իրանց աւանդելիք դասընթացի մասին:

Նրանք աւարտելով այդտեղ, ցրուեցին երկրի զանազան կողմերը, արդարացնելով ժողովրդի իրանց վրայ ունեցած յոյսերը, թէ գիտութեամբ և թէ հմտութեամբ:

Վերջին ժամանակները եապօնիայում վաճառականութեան արդիւնագործ շրջանառութեան ընդարձակ ծաւալումն ստիպեց կանանց և տնային աշխատանքից դուրս գործելու, բայց այդ հանգամանքը մանաւանդ ժողովրդի աւելի ցածր դասակարգի նկատմամբ ունի իւր բացասական նշանակութիւնը: Եւ իսկապէս ներկայ վիճակագրութեան համաձայն եապօնիայի գործարաններում աշխատում են նոյնքան կանայք, որքան և տղամարդիկ, և բացի զրանից վերջինների թիւը տարեց տարի աւելի է բարձրանում: Այսպէս օրինակ 1896 թ. բամբակեղինի գործարաններում կանանց թիւը յարաբերում էր տղամարդկանց թուին այնպէս, ինչպէս երկուսը մէկին: Այդ թիւը 1897 թ. բարձրացաւ երեքի, իսկ 1903 թ. հասաւ արդէն հինգի:

Այս հետաքրքիր հարցի մասին ֆրանսիացի հեղինակ Վելեբրսը, ի միջի այլոց ասում է.—

«Ինչպէս առաջ տնտեսական րեժիմով կանանց աշխատեցնում էին աւելի կոպիտ գործերում, նոյնպէս և այժմ օգուտ են քաղում նոցանից աւելի ծանր գործեր տալով նըրանց: Օրինակ Հօկլայետօի վուշի գործարաններում նորա ապրում են ամբողջ շաբաթներով վուշի չորացնելու տեղը, որտեղ մթնոլորդը չափազանց ծանր և խեղտող է: Օջի թղթէ գործարաններում նորա տեղափոխում են ցնցուիներով ծանր զամբիւլներ, չնչելով այդտեղի ծանր և խեղտող օդը, որի գոլորշիով լցուած է բնակարանը: Միթիկսկի հանգերում նրանք աշխատում են ոչ միայն նողի մակերեսոյթը փորելով կամ ածուխի տեսակները բաժանելով, այլ և նրանցից շատերը երեխաները մէջքին իջնում են հանքահորերը... Բայց ի՞նչն է ստիպում եապօնացի թէ գործարանատէ-

րերին և թէ արհեստագործներին օգտուել կանանց աշխատանքից,—այն միևնույն բանը, ինչ որ միւս երկրներում, որ կնօշ աշխատանքը աւելի քիչ է վարձատրվում քան աղամարդունը և աւելի հեշտ է կառավարվում կանանց բանւորական կազմը, քան տղամարդկանց... Այդ վերջինը եապօնիայի վերաբերմամբ աւելի արդարացի է, քան միւս երկրների, որովհետև մենք արդէն ծանօթ ենք, որ այդ երկրի կանանց «առաբինութեան սկզբունքը կազմում է հլու հնաղանդութիւն»: Մենք խօսք չենք գտնում Վէօլեբրսի արդարացի նկատողութեան դէմ ասելու, որը վերաբերում է ժողովուրդի ստորին դասակարգին—թէ «խոշոր արդիւնագործութեան ծաղկունն ծանրացրեց մինչև այժմ կանանց տնտեսական ստրկութիւնը»: Աւելացնենք գորան և այն տենդային արագութիւնը, որը ստեղծում է այգաել արդիւնագործութիւնը, դոցա մոլորեցնում է բանւոր դասակարգի վերաբերմամբ, որի մասին սում է այդ երկրի քաջիմաց Հենրի Նորմանը իր «Յյօրուայ եապօնիան» յօդուածում, որտեղ նրա ապագայ զարգացումն դասաւորում է «գտանդաւորների» թուին: Նա իւր միտքը շատ պարզ կերպով արտայայտում է հետեւալ տողերով.

«Այն ժամանակ, երբ մենք կարողացանք, մեծ կռուից յետոյ, թեթեացնել այն սարսափները, որը կրում էր գործարանական հին կարգը և շարունակում ենք գեռ ևս ապագայի չարիքի առաջն առնելու համար, նոր ապահովութիւն ստեղծելու, եապօնիան հանգիստ կերպով թոյլ է տալիս այդ չարիքի ծաղկեցման, թէկ որուա համար գեռ ևս ժամանակ կայ, բայց և այնպէս ժամանակ է հասկանալու, որ թէկ նրա բանակը և նաւատորմիզը յայտնի են աշխարհին իրանց հզօրութեամբ, բայց և այնպէս դորա հետ միասին հաղաքակրթուած երկրի տիտղոս չենք կարող տալ, քանի որ նրա գործարաններում և արհեստանոցներում փոքրանասակները աշշատում են տամներկու ժամ օրական: Նրա ժողովուրդի այն խատում են տամներկու ժամ օրական: Նրին նա պարտական է յատկապէս իր ամեն յատկութիւնը, որին նա պարտական է յատկապէս իր ամեն մի յառիջաղիմութեամբ, ծագել է եապօնացու անձնական պատրացումից, իսկ այդ յատկութեանը սպառնում է

լուրջ կերպով գործարանական արդիւնաբերական արագ  
աճման, որը ձգտում է մարդուն դարձնել վիթխարի  
կազմակերպուած անուի մի ժանիք, որը լափում է կանաց  
և երեխայոց կեանքը:

Ամփոփելով բոլոր բացատրութիւնները մեր յօդուա-  
ծում, կարծես մենք իրաւունք ունենք ասելու, որ թէն ներ-  
կայ ժամանակը եապօնիան ընդհանրապէս կանգնած է «կա-  
նանց հարցի» վերաբերմամբ ուղիղ ճանապարհի վրայ, բայց  
և այդ ճանապարհը դեռ ևս չի հարթուած և մեծ խոչնդուա-  
ներ և դժուարութիւններ ունի իր առաջը: Որ այդ ճշմարիտ  
է, դրա մասին շատ պարզ է խօսում փաստը, որ եապօ-  
նիայի բնակչութեան ղեկավարների շրջանում բացա-  
ռութիւն չեն կազմում, ոչ այնպիսի գործիչներ, որոնց  
շնորհիւ արծարծվում է կանանց համալսարանի հարցը,  
և ոչ էլ այնպիսիները, որոնք կայրարի «կանանց համար  
մեծ ուսմանքի» վերացումն համարում են եղեանագուծութիւն  
ընդդէմ երկնքի և երկրի բոլոր օրէնքների: Ուրիշն դժուար  
չէ երեակայել, թէ այստեղի ժողովուրդը որբան հեռու է սօ-  
ցիալական հաւասարակշռութիւնից, երբ նա ապրում է այս-  
պիսի պայմաններում, մանաւանդ երբ առաջին կարծիք յայտ-  
նողները, դեռ ևս համարվում են ընդհանուր կարգի «խառ-  
նակիչներ»: Այդ «խառնակութիւնները» տեսևանք են այն՝ իր  
նպատակներով համակրելի աշխատանքի, որի շնորհիւ եա-  
պօնիային, իւր արեմտեան տենդային հետևողութեամբ,  
յաջողուեց տասնեակ տարիների ընթացքում ցանել իւր եր-  
կրում այն սերմը, որի բարգաւաճման համար Եւրոպան և Ա-  
մերիկան աշխատում էին հարիւրաւոր տարիներ...

Թէ որբան ապահովուած է ապագայում եապօնիայի  
համար այսպիսի աշխատանքների արագ զարգացումը—դը-  
ուար է դեռ ևս նախատեսնել:



ՀՀ Ազգային գրադարան



NL0237624

55.768

